

973



Վ. Ի. Լենին

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՅՑ
ՊՐԻՎԱՏԱԿԱՆԻՑ
XIX ԳՈՐԾ ՎԵՐՁԻՆ

3 K23
Q - 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940



03 NOV 2009

23 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐԻՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆԱՔ

3K23

Q-18

Կ. Ի. ԼԵՆԻՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

10 SEP 2013

973

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Ագրարային հարցը Ռուսաստանում XIX դարի վերջին» ակնարկը Վ. Ի. Լենինը գրել է մայիս-հունիսին և թվարկված է 1908 թ. հուլիսի 1. Գրանատի բառարանի համար։ Գրաքննական նկատառումներով ակնարկը չեր կարող լույս տեսնել բառարանում։ Լենինի փորձերը՝ իր աշխատությունն առանձին բրոցյուրով հրատարակելու՝ հաջողությամբ չպահպանվեցին, այն առաջին անգամ հրատարակվեց միայն 1918 թ.։

Ներկա հրատարակությունը տպագրվում է ըստ ՅԵՐԿԵՐԻ XII հատորի։



2247

ԿՕ

В. И. ЛЕНИН

АГРАРНЫЙ ВОПРОС В РОССИИ К КОНЦУ XIX ВЕКА

Государственное издательство политической литературы

Ереван • 1940

Ներկա հոդվածի նպատակն եւ ռուսական գյուղատնտեսության հասարակական-տնտեսական հարաբերությունների ամբողջության համառոտ ակնարկը տալ: Այսպիսի աշխատությունը չեկարող հասուեկ ուսումնասիրության բնույթ կրել: Նա պետք է մարքսիստական հետազոտության հանրագումարը տա, ցուցադրի մեր գյուղատնտեսական եկոնոմիկայի յուրաքանչյուր քիչ թե շատ խոշոր գծի տեղը ռուսական ժողովրդական տնտեսության ընդհանուր կառուցվածքի մեջ, նկարագրի ագրարային հարաբերությունների զարգացման ընդհանուր գիծը Ռուսաստանում և բաց անի դասակարգային այն ուժերը, վորոնք այս կամ այն կերպ ընորոշում են այդ զարգացումը: Այս պատճառով նախքննենք վերոհիշյալ տեսակետից հողատիրությունը Ռուսաստանում, ապա կարլածատիրական ու գյուղացիական տնտեսությունները, իսկ վերջը տանք ընդհանուր յեզրակացություն այն մասին, թե ինչ հետեւանքների հանգեց մեր եվոլուցիան XIX դարի ընթացքում և ինչ խնդիրներ նա կտակեց XX դարին:

I

Հողատիրությունը Յեվրոպական Ռուսաստանում XIX դարի վերջին՝ մենք կարող ենք ուրվագծել ըստ 1905 թվի հողային նորագույն վիճակադրության տվյալների (Կենտրոնական Վիճակագրական Կոմիտեից հրատարակություն, Սպբ. 1907 թ.):

Այդ ուսումնասիրության համաձայն Յեվրոպական Ռուսաստանում հաշված եր 395,2 միլիոն դեսյատին հող, վորը հիմնական յերեք խմբերի մեջ բաշխված եր այսպես.

I	խումբ՝ մասնատիրական հողեր	101,7 միլ.	դեսյատին
II	խումբ՝ բաժնային հողեր	138,8	»
III	խումբ՝ գանձարանի և այլ հողեր	154,7	»
	ընդամենը Յեվրոպական Ռուսաստան՝	395,2	»

Պետք եւ ասել, վոր մեր վիճակադրությունը գանձարանային հողերի մեջ մուծել եւ հարյուր միլիոնից ավելի դեսյատին հեռագոր հյուսիսից՝ Արխանգելսկի, Ուստեցկի և Վոլոգդայի նահանգ-

հողերի հողերի: Գանձարանային հողերի ահապէին մասը պետք է դուրս դցել, քանի խոսքը վերաբերում է Յելլը. Ռուսաստանի գյուղատնտեսական իրական ֆոնդին: Ռուսական հեղափոխության մէջ սոցիալ-դեմոկրատների աղբարային ծրագրի մասին գրած աշխատության մէջ (այս աշխատությունը գրված է 1907 թվի վերջին, բայց հեղինակից անկախ հանդամանքների պատճառով լրւյս ընծայելը հետաձգվել է) Յելլը այս միաժամանակ մէջ 280 միլիոն դեսյատին*; Գանձարանային հողերից այստեղ մտնում է վոչ թե հարյուր հիսուն միլիոն, այլ ընդամենը 39,5 միլ. դեսյատին: Հետևարար, Յելլը. Ռուսաստանում կալվածատիրական ու գյուղացիական սեփականությունից դուրս մնում է հողային տարածության մեջ յոթերորդ մասից պակաս: Վեց յոթերորդը դանըլում է յերկու հակամարտ դասակարգերի ձեռքին:

Տեսնենք հողատիրությունն այդ դասակարգերի, վորոնք իրարից տարբերվում են նաև իրեւ դաս, քանի վոր մասնատիրական հողերի մեծ մասն աղնալականությանն է, իսկ նադելի հողերը գյուղացիական են: Մասնատիրական 101,7 միլիոն դեսյատինից 15,8 միլիոնը պատկանում է զանազան ընկերություններին, իսկ մնացած 85,9 միլ. դեսյատինը անհատական սեփականություն է: Ահա այս վերջինի ստորաբաժանումն ըստ դասերի՝ 1905 թվին և զուգընթացարար 1877 թվին.

Պատկանում է				1905 թվին					
1905 թվին		1877 թվին		ավելացել է +		պահանձ է —			
Հողատերերի դասեր	միլ. դե-	%	միլ. դե-	%	միլ. դե-	քանի	սյատին	սյատին	անդամ
սյատին			սյատին						
Աղնալականներին	53,2	61,9	73,1	79,9	—19,9	—1,40			
Հոգմար անձերին	0,3	0,4	0,2	0,2	+ 0,1	+1,74			
Վաճառական և պատուղարականներին									
Քաղաքացին.	12,9	15,0	9,8	10,7	+ 3,1	+1,30			
Մեշնաներին	3,8	4,4	1,9	2,1	+ 1,9	+1,85			
Գյուղացիներին	13,2	15,4	5,8	6,3	+ 7,4	+2,21			
Ալ դասերին	2,2	2,5	0,3	0,3	+ 1,9	+8,07			
Ռատարահպատակներին	0,3	0,4	0,4	0,5	— 0,1	—1,52			
Սեփականատ.	85,9	100,0	91,5	100,0	— 5,6	—1,09			
Բնդամենն անհատ									

Յելլ այսպէս, գլխավոր անհատական սեփականատերերը

Ռուսաստանում աղնալականներն են: Հողի վիթխարի քանակությունը նրանց է պատկանում: Սակայն զարգացման ուղղությունն այն է, վոր աղնալական հողատիրությունը պակասում է: Աճում է չափազանց արագ և աճում հողատիրության անդամայնությունը: 1877—1905 թվին շրջանում ամենից արագ «այլ դասերի» հողատիրությունն է ավելացել (ութ անդամ՝ 28 տարում) և ապա գյուղացիները (ավելի քան յերկու անդամ): Հետևարար, գյուղացիների շրջանում սոցիալական այնպիսի տարրեր, վորոնք հողի մասնավոր սեփականատեր են դառնում: Այս ընդհանուր փաստ է: Յելլ մենք գյուղացիական անտեսության վերլուծության ժամանակակից բաց կանենք հասարակական-անտեսական այն մեխանիզմը, վորը նման դատումն է կատարում: Առայժմ անհրաժեշտ է ստույգ սահմանել, վոր Ռուսաստանում հողի մասնավոր սեփականատիրության զարգացումը կայանում է դասայնությունից անդամայնության անցնելու մեջ: Աղնալականության կամ ճորտատիրական հողային սեփականությունը XIX դարի վերջին շարունակում է ընդգրկել հողի աճուղը մասնավոր սեփականության վիթխարի մեծամասնությունը, սակայն զարգացումն ակներեկ կերպով ընթանում է դեպի հողի բուրժուական մասնավոր սեփականության ստեղծումը: Նվազում է մասնավոր հողատիրությունը, վորը ժառանգաբար ձեռք է բերվում իշխանազորերից (ՃՐՈՂԻՆԻԿԻ), առհմական աղնալականներից (ՅՈՒՉԻՆԻԿԻ), պաշտոնյաներից և այն: Աճում է ուղղակի փողով ձեռք բերվող մասնավոր հողատիրությունը: Նվազում է հողի իշխանությունը, աճում է փողի իշխանությունը: Հողի ավելի ու ավելի յեներգրավվում առևտորական շրջանառության մեջ: Հետագա շարադրանքի մեջ մենք կտեսնենք, վոր այս ներգրավման չափերը շատ ավելի ուժեղ են, քան ցույց են տալիս միայն հողատիրության մասին յեղած ավյաները:

Բայց թե ինչ աստիճանի դեռ ուժեղ է «հողի իշխանություն», այսինքն՝ ճորտատեր-կալվածատերի միջնադարյան հողատիրության իշխանությունը Ռուսաստանում XIX դարի վերջին, այդ առանձնապես ակնառու յերկում է այն ավյաներից, թե ինչպես են բաշխվում հողի մասնավոր սեփականությունն ըստ տիրապետության չափերի: Այն աղբյուրը, վորից մենք ոգտվում ենք, առանձին մանրամաննությամբ զատում է խոշորագույն մասնավոր հողատիրությանը վերաբերող տվյալները: Ահա ընդհանուր բաշխումն ըստ տիրապետության չափերի.

* Տես՝ Յերկեր, հ. XI, էջ 335: Խմբ.:

Տիբապետության խմբեր	Տիբապետություններ	Հողեր դե- սյատին.	Մեկ տիբա- պետ միջին տար. դես.
10 դեսյատին և պահաս	409·864	1·625·226	3,9
10—50 դեսյատին	209·119	4·891·031	23,4
50—500 դեսյատին	106·065	17·326·495	163,3
500—2.000 դեսյատին	21·748	20·590·708	947
2.000—10.000 դեսյատին	5·386	20·602·109	3·825
10.000-ից ավելի դեսյատին	699	20·798·504	29·754
Հնդամենը 500 դեսյատինից և ավելի	27·833	61·991·321	2·227
Հնդամենը Յելբոսպական Ռուսաստանում	752·881	85·834·073	114

Այստեղից յերեռում է, վոր մասնավոր անհատական հողատիրության մեջ մանր սեփականությունը չնշին դեր է խաղում։ Հողատերերի ամբողջ թվի վեց յոթերորդը՝ 753 հազարից 619 հազարը տիրում է ընդամենը $6\frac{1}{2}$ միլիոն դեսյատինի։ Բնդհակառակը, կան անընդդրկելի տարածությամբ լատիֆունդիաները*. յոքարյուր սեփականատերերից յուրաքանչյուրը միջին հաշվով տիրում է յերեսուն հազար դեսյատինի։ Այս յոթ հարյուր մարդը յերեք անգամից ավելի շատ հող ունի, քան վեց հարյուր հազար մանր հողատերերը։ Յեկ լատիֆունդիաներն ընդհանրապես կազմում են ռուսական մասնավոր հողատերության առանձնահատուկ դիմ։ Զատելով 500 դեսյատինից բարձր բոլոր հողատիրությունները, ստանում ենք քսանության սեփականատեր, վորոնք տիրում են 62 միլիոն դեսյատինի, այսինքն՝ միջին հաշվով 2227 դեսյատին յուրաքանչյուրին։ Այս 28 հազարի ձեռքին է ամբողջ մասնավոր հողատիրության յերեք քառորդը**։ Բայտ տիրապետողների դասի այդ հակայական լատիֆունդիաները դիմավորապես ազնվականական են։ 27·833 տիրապետությունից 18·102, այսինքն՝ գրեթե յերկուերրորդը պատկանում է ազնվականներին,

* Լատիֆունդիաներ — խոշոր հողատիրություններ են, վորոնք պատկանում են կալվածատերերին։ Ներկայումս կան մի շաբաթ յերկրներում՝ Անդիայում, Գերմանիայում, Լեհաստանում և ուր։։ Յարական Ռուսաստանում նըրանք կազմվում են բոյարական հողերից և ցարական՝ առանձին անձերի «Հնարհված» հողային մեծ մասերից։ Խմբ։։

** Բնագիրն ցիտաներով չխճողելու համար մեկ անգամ ընդմիշտ նշում ենք, վոր ավայանների մեծամասնությունը վերցրել ենք վերոհիշյալ աշխատությունից և «Развитие капитализма в России» դրեից, 2-րդ հրատ., Սպբ.։ 1908թ. (առաջնական համար III)։ Խմբ։։

Դորոնց հողերի տարածությունն է $44\frac{1}{2}$ միլիոն դեսյատին, այսինքն՝ լատիֆունդիաների տակ գտնված ամբողջ հողի 70%-ից ավելին։ Այսպիսով պարզ է, վոր Ռուսաստանում XIX դարի վերջին հողերի վիթխարի քանակությունը՝ ըստ լորում, ինչպես հայտնի յէ, լավագույն հողերի՝ առաջվա պես (միջնադարի պես) կենարոնացված է արտօնյալ ազնվական դասի ձեռքում, յերեկվա ճորտատեր-կարլածատերերի ձեռքում։ Թէ տնտեսության ինչ ձեւեր են գոյանում այդպիսի լատիֆունդիաների վրա, մանրամասնորեն պիտի խոսենք ներքեւում։ Խոր այժմ ավելացնենք սոսկ համառոտ ցուցում հանրածանոթ այն փաստի մասին, վոր գրականության մեջ վառ կերպով նկարագրված է ալ. Ռուբակինի կողմից, թէ ազնվականական լատիֆունդիաների այդ տերերի թվում իրար հետեւից շարված պատկերանում են բյուրոկրատիայի թրաքաստիճան պաշտոնյանները։

Անցնենք նադելային հողատիրությամբ 1,9 միլ. դեսյատինի, վորն ըստ հողատիրության չափերի ստորաբաժանված չեն, մեացած զանգվածը՝ 136,9 միլ. դեսյատինը գտնվում է $12\frac{1}{4}$ միլիոն դյուզացիական ծխերի տիրապետության ներքո։ Յուրաքանչյուր ծխին միջին հաշվով ընկնում է 11,1 դեսյատին։ Սակայն նադելի հողն ել անհամաշափ է բաշխված։ Նրա գրեթե կեսը՝ 137 միլիոնից 64 միլ. դեսյատինը գտնվում է հողով հարյուստ 2,1 միլ. ծխերի, այսինքն՝ ամբողջ թվի մեջ վեցերորդի ձեռքին։

Ահա ամփոփի ալյաներ բաժնեհողերի բաշխման մասին Յեկուռապական Ռուսաստանում։

Ծիւրի խմբեր	Մինչև 5 դեսյատին	Ծիւրի	Դեսյատին	Դեսյատին
	» 5—8 »		2·857·650	9·030·333
			3·317·601	21·706·550
Հնդամենը	մինչև 8 դես.	6·175·251	30·736·883	4,9
Մինչև 8—15 դեսյատին		3·932·485	42·182·923	10,7
» 15—30 »		1·551·904	31·271·922	20,1
30-ից ավելի »		617·715	32·695·510	52,9
Հնդամենը Յեկ. Ռուս.	12·277·355	136·887·238	11,1	

Այսպիսով նադելային ծխերի կեսից ավելին՝ $12\frac{1}{3}$ միլիոնից 6,2 միլիոնն ունի մինչև 8 դեսյատին յուրաքանչյուր ծխին։ Ամբողջ Ռուսաստանի վերաբերյալ ընդհանրապես և միջին հաշվով

այդ տարածությունն անշուշտ բավական չե ընտանիք պահելու համար: Վորպեսդի դատենք այս ծխերի տնտեսական դրության մասին, հիշատակենք զինվորական ձիահամարի (ամբողջ Ռուսաստանը պարբերաբար ու կանոնավոր ընդդրկող միակ վիճակադրության) ընդհանուր տվյալները: Յեվրոպական Ռուսաստանի 48 նահանգում, այսինքն՝ բացի Դոնի մարզից և Արխանգելսկի նահանգից, 1896—1900 թվերին հաշված են 11.112.287 դժուղացիական ծխեր: Նրանցից ձիազուրկներ՝ 3.242.462, այսինքն՝ 29,2%: մեկ ձի ունեցողներ 3.361.778 ծուխ, այսինքն՝ 30,3%: Հայտնի յէ ինչ բան է ձիազուրկ դյուզացին Ռուսաստանում (հասկանալի յէ, վոր այստեղ վերցնում ենք համախառն գումարներ և վոչ թէ մերձքաղաքային կաթնատնտեսության, ծխախոտագործության և այլն ինչ-վոր բացառիկ շրջաններ): Հայտնի յէ նաև մեկ ձի ունեցող դյուզացու կարերն ու աղքատությունը: Ծխերի վեց միլիոնանոց մասսա՝ այս նշանակում է 24—30 միլիոն բնակչություն: Յեվ այս ամբողջ ընակչությունը պառապերներ, աղքատներ են՝ անհան կտորների հողարածնով, վորից աղքատ գուրս չի դա, վորի վրա կարելի յէ միայն մեռնել քաղցած մահով: Յեթե յենթագրենք, վոր ծայրը ծայրին հասցնելու համար հողային ունեսոր տնտեսությանը 15 դեսյատինից վոչ պակաս հող և հարկավոր, այդ դեպքում կստանանք, վոր 10 միլիոն դյուզացիական ծուխ այդ մակարդակից ցած են կանոնած և նրանք ունեն 72,9 միլիոն դեսյատին հող:

Այնուհետև, նադելային հողատիրության վերաբերյալ անհրաժեշտ է նշել նրա չափազանց կարեւոր մեկ դիմք: Նադելային հողերի բաշխման անհամաշափությունը դյուզացիների մեջ անշափքիչ է, քան մասնատիրական հողերի բաշխման անհամաշափությունն է: Բայց դրա հանդեպ նադելային հողով դյուզացիների մեջ շատ մեծ թվով այլ տեսակի տարրերություններ, բաժանումներ ու պատվարներ կան: Այդ դյուզացիների կարգերի միջնական մասնակի տարրերությունները պատմականորեն դասավորվել են յերկար դարերի ընթացքում: Վորպեսդի ակնառու կերպով ցույց տանք այդ պատվարները, նախ վերցնենք ամբողջ Յեվրոպական Ռուսաստանին վերաբերող ընդհանուր տվյալները: 1905 թ. վիճակադրությունն այսպիսի հիմնական կարգեր ե տալիս: Նախկին տիրական դյուզացիներ՝ ծխին միջին հաշվով 6,7 դեսյատին հողաբաժնով: Նախկին պետականներ՝ 12,5 դեսյատին: Նախկին արքունականներ՝ 9,5 դեսյատին: Գաղութայիններ՝ 20,2 դեսյա-

տին: Զինշեկիներ՝ 3,1 դեսյատին: Ռեզեներ՝ 5,3 դեսյատին: Բաշկիրներ ու տեպտյարներ*՝ 28,3 դեսյատին: Մերձբալթյան գյուղացիներ՝ 36,9 դեսյատին: Կազակներ՝ 52,7 դեսյատին: Այստեղից արդեն յերեսում ե, վոր դյուզացիների նադելային հողատիրությունը զուտ-միջնադարյան է: Ճորտատիրական իրավունքը մինչև այժմ ապրում է պատվարների այն շատության մեջ, վորոնք մնացել են դյուզացիների միջև: Կարգերն իրարից զանազանվում են վոչ միայն հողի քանակով, այլև վճարումների չափով, հողերի փրկարգանեան պայմաններով, հողատիրության բնույթով և այլն: Փոխանակ ընդհանուր տվյալների ամբողջ Ռուսաստանի մասին, վերցնենք մեկ նահանգի տվյալները և այն ժամանակը մենք կտեսնենք, թէ ինչ են նշանակում այդ բոլոր պատվարները: Ահա զեմստվային-վիճակագրական ժողովածուն Սարատովի նահանգի վերաբերյալ: Բացի ընդհանուր-ռուսական կարգերից, այսինքն՝ մեր կողմից վերեւում արդեն հիշատակվածներից, այստեղ մենք տեսնում ենք, վոր տեղական հետազոտողները տարբերում են դյուզացիների հետեւյալ կարգերը՝ պարզեցներ, լիակատար սեփականատերեր, պետականներ—չորրորդական հողատիրությամբ, պետականներ—կալվածատիրականից, գանձարանային հողամասերի վարձականներ, սեփականատեր—բնակիչներ, դադիթածներ, ապատ արձակվածներ, վոչ-հարկատուններ, ազատ հողագործներ, նախկին գործարանայիններ և այլն: Միջնադարյան այս պատվարների ցանցն այն տեղն է համում, վոր յերեմն միևնույն դյուզի դյուզացիները բաժանվում են մեկը յերեմն միջնույն դյուզի դյուզացիները բաժանվում են մեկը յերեմն միջնույն դյուզի դյուզացիների կատեգորիայի՝ «պարոն Ն.».

* Խոսքը վերաբերում է ճորտատիրական և կիսաճորտատիրական հարաբերությունների միջանի մնացորդներին: Զինշեկիներ՝ հողերի առհավետ ժամանակական կազակառուններ են: Կապալի չափն արձանագրված եր որենագրական կարգով: Ռուսաստանում չինչեկլյան հարաբերություններ առավելագույն դոյություն ունեցին լեհաստանում, լիտվայում և Ուկրաինայում: Բնուուսիայում և աջափնյա Ուկրաինայում հողոգտագործման այդ ձեւը պահանվել եր միջնական կոկտեմբերյան հեղափոխությունը: Անգիշներ՝ կալվածքների մասնավոր տերերն եյին բևարաբիայում, բայց նրանց հողատիրությունը մասնավոր տերերն եյին բևարաբիայում, բայց նրանց հողատիրության սկզբանքների վրա համաձայն հիմնված եր համայնքային ինքնավարության սկզբանքների վրա համաձայն տեղական որենքներին: Անգեհները հողերի տեր եյին ժառանգարար, բայց հողը վաճառելու դեպքում պարտավոր եյին առավելապես զիջել նույն դյուզի ուղղ պեղեների: Տեպտյարներ՝ նոր-բաշկիրներ են, թաթարացած Փիննական ցեղեր, վորոնք ապրում են բաշկիրների մեջ գլխավորապես նախկին Որենագոր, Սամարա և Ռուֆա նահանգների սահմաններում: Խմբը:

Ն.-ի նախկիններ» և «տիկին Մ. Մ.-ի նախկիններ»։ Լիբրալ-նարողնիկական բանակին պատկանող մեր գրողները, վոր չեն կարողանում դիտել Ռուսական տնտեսական հարաբերությունները զարգացման տեսակետից, վորպես ճորտատիրական կարգերը բուրժուականով փոխարինողների, սովորաբար անտես են առնում այս փաստը։ Յեկարպես ել Ռուսաստանի XIX դարի պատմությունը և մանավանդ նրա անմիջական հետեանքը՝ XX դարի սկզբի դեկբերը Ռուսաստանում միանդամայն անհասկանալի կմնան, յեթե չգնահատենք վերոհիշյալ փաստի ամբողջ նշանակությունը։ Այն յերկիրը, վորի մեջ փոխանակության աճում ու կապիտալիզմի գարգացում տեղի ունի, չի կարող ամեն տեսակի ճգնաժամեր չապրել, յեթե ժողովրդական տնտեսության դիմավոր ճյուղում միջնադարյան հարաբերություններն ամեն քայլափոխում արգելակներ ու խանդարիներ են հանդիսանում։ Զարաբաստիկ համայնքը, վորի նշանակության մասին մենք գեռ հարկադրված կլինենք խոսել, չափավանակով գյուղացուն պրոլետարյուց, իրականում միջնադարյան պատվարի դեր ե խաղում, վորն անջատում է գյուղացիներին, վորպես մանր միություններին և «գոյության իմաստն» իսպառ կորցրած կարգերի շղթայ-վածներ։

Յեկը. Ռուսաստանի հողատիրության մասին յեղափակիչ ամփոփման անցնելուց առաջ հարկավոր է գործի մի կողմը ևս նշել։ Վոչ «Քերին 30 հաղար» կալվածատերերի ու միլիոնավոր գյուղացիական ծիսերի հողերի քանակության մասին յեղածավյաները և վոչ ել գյուղացիական հողատիրության միջնադարյան պատվարների մասին յեղած տվյալները, գեռ բավական չեն հաշվի առնելու համար իրական չափն այն բանի, թե ինչ աստիճանի «սղմված», ձնչված ու ընկծված է մեր գյուղացին ճորտատիրության կենդանի մնացորդներով։ Նախ՝ գյուղացիների հոգուտ կարգածատերերի կատարված եքսպրոպրիացիայից հետո, վորը 1861 թիվի մեծ ուժքորմի անունն է կրում, գյուղացիներին բաժին թողած հողերը վորակով անհամեմատ ավելի վատ են, քան կալվածատիրական հողերը։ Այս մասին վկայում է զեմստվային վիճակադրության տեղական ուսումնասիրությունների ու նկարագրությունների ամբողջ հսկայական գրականությունը։ Այս մասին կան անառարկելի մասսայական տվյալներ, վորոնք ցույց են տալիս գյուղացիական հողերի ցածր բերքատվությունը կարգածատիրականի համեմատությամբ։ Ընդունված է ընդհանրա-

պես, վոր այս տարբերությունն ամենից առաջ կախված է բաժ-նեհողերի վատ վորակից և ապա՝ միայն վատ մշակությունից ու գյուղացիական աղքատիկ տնտեսության պակասություններից։ Յերկրորդ՝ 1861 թվին կալվածատերերի կողմից գյուղացիներին հողից «ազատելու» ժամանակակից այսպես են սահմանադժված, վոր գյուղացիներն «իրենց» կալվածատերերի թակարդն են ընկել։ Թուսական զեմստվային վիճակադրական գրականությունը հաս-տատեց քաղաքատնեսության գիտությունը, նկարագրելով կալ-վածատիրական տնտեսություն վարելու յեղանակը, վորը չափա-դանց որիգինալ ու ինքնատիպ ե, վորի նմանը դժվար թե վորեւ տեղ տեսնված լինի աշխարհում։ Դա հատվածահողերի միջոցով վարած տնտեսությունն ե։ Գյուղացիները 1861 թվին «ազատվել են» իրենց տնտեսությունների համար անհրաժեշտ ջրատեղերից, արոտներից և այլն։ Գյուղացիական հողերը կալվածատիրականի մեջ ընկած են սեպաձև, այնպես վոր պարոնայք կարվածատերե-րի համար ասպահովված է չափազանց հաստատուն ու չափազանց ազնիվ հասույթ՝ արածավերման համար կատարվող գանձումնե-րից և այլն։ «Համի թողնելու տեղ չկա»։ սա գյուղացիական դա-ռու ճշմարտություն ե. այս «կախվածի յերկիծանքը» ամեն տե-սակի յերկար ցիտատներից ավելի լավ է պատմում գյուղացիա-կան հողատիրության այն առանձնահատկության մասին, վորը վիճակադրական արտահայտության չի յենթարկվում։ Հարկ չկա-տելու, վոր այս առանձնահատկությունն անխառն ճորտատի-րություն ե, ինչպես իր ծագումով, նույնպես և կալվածատիրա-կան տնտեսության կազմակերպման յեղանակի վրա թողած աղ-դեցությամբ։

Այժմ անցնենք մեր յեղակացություններին՝ հողատիրության վերաբերյալ Յեկը. Թուսաստանում։ Մենք ցույց տվինք կալվա-ծատիրական ու գյուղացիական հողատիրության պայմաններն առանձին վերցրած։ Այժմ նրանց պետք ե նայենք իրենց կա-տակցության մեջ։ Սրա համար վերցնենք Յեկը պական Թուսաս-տանի հողային ֆոնդի տարածության վերաբերյալ վերեւում բեր-ված մոտավոր թիվը՝ 280 միլիոն դեսյատին և տեսնենք, թե ամ-բողջ այդ զանգվածն ինչպես է բաշխվում տարբեր տիպի հողա-յին տիբապետությունների մեջ։ Թե վորոնք են այդ տիպերը, մանրամասն ցույց կտանք հետազա շարադրանքի մեջ, իսկ այժմ փոքր ինչ առաջ վաղելով վերցնենք հիմնական տիպեր յենթադրա-

բար: Ծխին մինչև 15 դեսյատին տարածության հասնող հողային տիրապետությունը վերագրենք առաջին՝ քայլայված դյուզացիոնալիքին, վորը ճնշված և ճորտատիրական շահագործությունից: Յերկրորդ խումբը կկազմի միջակ գյուղացիությունը—տիրապետություն 15—20 դեսյատին: Յերրորդ՝ ունեոր գյուղացիություն (գյուղացիական բուրժուազիա) և կապիտալիստական հողատիրություն՝ 20—500 դեսյատին: Չորրորդ՝ ճորտատիրական լատիֆունդիաներ՝ 500 դեսյատինից ավելի: Իրար միացնելով ըստ այս խմբերի և՝ գյուղացիական, և՝ կալվածատիրական հողատիրությունը և կատարելով վոչ մեծ կլորացումներ՝ ու ճորտապետ հաշվումներ՝ (մանրամասն ցույց են արված իմ վերոհիշյալ աշխատության մեջ), կտանանք ռուսական հողատիրության հետևյալ պատկերը XIX դարի վերջին:

Հողատիրությունը Յելքրպական Ռուսաստանում XIX դարի վերջին

Տիրապետութ. Դեսյատ. Մեկ տիրապետ.

թիվը

(միլիոններով)

միջինը (դես.)

ա) Քայլայված գյուղացիություն՝ ճնշված ճորտատիրական շահագործումից	10,5	75,0	7,0
բ) Միջակ գյուղացիություն	1,0	15,0	15,0
գ) Գյուղացիական բուրժուազիա և կապիտալիստական հող- տարիրություն	1,5	70,0	46,7
դ) Ճորտատիրական լատի- ֆունդիաներ	0,03	70,0	2,338
Գումար	13,03	230,0	17,6
Բուտ տիրապետության չափի բաշխված չե	—	50,0	—
Ընդամենը	13,03	280,0	21,4

Կրկնում ենք, վոր այստեղ վերցված խմբերի տնտեսական բնութագրի ճշտությունը կապացուցվի հետադա շարադրանքը մեջ: Յեկ յեթե տրված այս պատկերի (վոր ըստ գործի եյության չի կարող մոտավոր չլինել) մանրամասնությունները քննադատություն առաջ բերին, այդ գեղքում մենք կինդերնք ըն-

* Որինակ՝ լատիֆունդիաներին, բացի կալվածատիրական 62 միլ. դես. հողերից, ավելացված ե 5,1 միլ. դես. արքունական և 3,6 միլ. դես. առերարդյունական 272 ընկերության հողեր, յուրաքանչյուրը 1.000 դես. յատինից ավելի տարածությամբ:

թերցողին ուշադրությամբ հետևել, վորպեսզի մանրամասնությունների քննադատության հետեւից գործի եյության ժխտումը մաքսանենդաբար անցկացնելու անկարելի դառնա: Իսկ գործի այդ եյությունն այն ե, վոր ռուսական հողատիրության մի բևեռում մենք ունենք 10½ միլիոն ծուխ (մոտ 50 միլիոն բնակիչ)՝ 75 միլիոն դեսյատին հողով, իսկ մյուս բևեռում յերեսուն հազար ընտանիք (մոտ հարյուր հատուն բնակիչ)՝ 70 միլիոն դեսյատին հողով:

Հողատիրությանը վերաբերող հարցերը վերջացնելու համար այժմ մեզ մնում ե գուրս գալ Յելքրուսական բուն Ռուսաստանի սահմաններից և ընդհանուր գծերով քննել գաղութացման նշանակությունը: Ռուսական կայսրության (բացի Ֆինլանդիայից) հողային ամբողջ Փոնդի մասին վորոշ գաղափար տալու համար ոգումնենք պլ. Մերտվագոյի տվյալներով: Պարզության համար մենք այդ տվյալները կրերենք աղյուսակի ձեռի և կավելացնենք բնակչության թվերն ըստ 1897 թվի վիճակագրության: (Տես աղյուսակ եջ 16):

Այս թվերից պարզ յերեսում ե, թե դեռ վորքան քիչ գիտենք մենք Ռուսաստանի ծայրերկրների մասին: Իհարկե, անհեթեթության գլուխ գործոց կիններ մտածել, թե ներքին Ռուսաստանի հողային հարցը կարելի յէ «լուծել» բնակչությունը գեղի ծայրերկրները տեղափոխելու միջոցով: Ամենափոքր կասկածից գուրս ե, վոր այսպիսի «լուծում» միայն շառլատանները կարող են առաջարկել, վոր Յեկը. Ռուսաստանի հին լատիֆունդիաների և հենց նույն Յեկը. Ռուսաստանի կյանքի ու տնտեսության նորպայմանների մեր կողմից վերառում ցույց արված հակասությունները պետք ե «լուծվեն» այս կամ այն հեղաշրջումով Յեկը. Ռուսաստանում և վոչ թե նրանից դուրս: Բանն այն չե, վոր վերաբնակեցումով աղյուսնք գյուղացիներին ճորտատիրությունից: Բանն այն ե, վոր կենտրոնի աղբարային հարցի կողքին կանգնած ե գաղութացման աղբարային հարցը: Բանն այն չե, վոր ճնաժամը Յեկը. Ռուսաստանում ծածկենք գաղութացման հարցով, այլ այն ե, վոր ցույց տանք ճորտատիրական լատիֆունդիաների կործանիչ հետևանքները և՛ կենտրոնի և՛ ծայրամասերի վրա: Ռուսական գաղութացմանն արգելակում են ճորտատիրության մնացորդները Ռուսաստանի կենտրոնում: Ռուսական գաղութացումը չի կարելի աղյուսել ու կարգավորել այլ կերպ, քան ըարային հեղաշրջումով Յեկը. Ռուսաստանում, այլ կերպ, քան ըարային հեղաշրջումով Յեկը. Ռուսական լատիֆունդիաների ճնշումից գյուղացիությանը ճորտատիրական լատիֆունդիաների ճնշումից

	Հողի ընդհանուր տարածությունը	Այդ թվից հողագոտությունը	Այդ թվից հողագոտությունը	Բնակչությունը 1897 թ.
	Դեմական պահանջմանը (միլիոն հական)	Դաշտական պահանջմանը (միլիոն հական)	Դաշտական պահանջմանը (միլիոն հական)	Դաշտական պահանջմանը (հազարին)
10 Կանանք Լէհական Բարգավայրություն	111,6	11,6	—	11,6
38 Կանանք Վորոբյան արևելացություն	175,6	183,0	—	183,0
12 Կանանք Վորոբյան արևելացություն	247,9	258,0	—	258,0
Հաղափառ Յելլը Ռուսաստան, 50 Կանանքում	423,0	441,0	—	441,0
Կողմանինը Յելլը Ռուսաստան, Սիբիր	411,7	42,9	22,1	20,8
Սիբիր Ասիս	10,966,1	1,142,6	639,7	502,9
Հաղափառ Ասիս	3,141,6	327,3	157,4	169,9
Հաղափառ Ասիս	14,519,4	1,512,8	819,2	693,6
Հաղափառ Ասիս	18,861,5	1,965,4	819,2	1,146,2
			135,0	34,1
			300,0	469,4
			125,610,0	6,7

աղատելով: Այս կարգավորումը չպետք է կայանա բյուրոկրատական «հոգացողության» մեջ վերաբնակեցման մասին և վո՞չ ել վերաբնակեցումներ կազմակերպելու» մեջ, վորի մասին սիրում են խոսել լիբերալ-նարոդնիկական բանակի գրողները, այլ այլ պետք է կատարվի այն պայմանների վերացմամբ, վորոնք ուստական դյուլացուն դատապարտել են խավարի, խեղճության ու վայրենացման՝ լատիֆունդիսների տերերի մշտնչենական սուբկացման ներքո:

Պ-ն Մերտվագոն բրոշյուրի մեջ, վոր նա գրել է պ. Պրոկոպովիչի հետ միասին («СКОЛЬКО в России земли, и как мы ею пользуемся?», М. 1907.) իրավաշիորեն նշում ե, վոր կուտառուրայի աճումն անպետք հողերը պիտանի յե զարձնում: Գործը գիտցող ակադեմիկներ ինքն ու Գելմերսենը 1845 թվին գրում ենին, վոր տալրիկյան տափաստանները «ջրի պակասության ու կլիմայի պատճառով միշտ պիտի պատկանեն ամենից աղքատ ու վո՞չ-դյուրամշակելի հողերի շարքին»: Այն ժամանակ Տավրիկյան նահանգի բնակչությունն արտադրում եր 1,8 միլիոն չետքերս հաց: Վաթուն տարուց հետո բնակչությունը կրկնապատկեց և արտադրում ե 17,6 միլիոն չետվերտ, այսինքն՝ դրեթե տասնապատիկ ավելի:

Այս շատ ճիշտ ու կարևոր դատողություն ե, բայց պ. Մերտվագոն մի բան միայն մոռացել ե. Նովոստավիայի արագ գաղութացմանը նպաստող գլխավոր պայմանը նորտափիական իրավունքի անկումն եր Ռուսաստանի կենտրոնում: Միայն հեղաշրջումը կենտրոնում հնարավորություն ընձեռեց արագ, ծավալուն, ամերիկականորեն բնակեցնելու հարավը և ինդուստրացնելու այն (Ռուսաստանի հարավի ամերիկյան աճման մասին 1861 թ. հետո՝ չե վոր շատ ու շատ ե խոսվել): Այժմ ել միայն հեղաշրջումը Յելլը պական Ռուսաստանում, միայն նորտափիության մնացորդների լիակատար վերացումը, միայն դյուլացիների միջնադարյան լատիֆունդիսներից ազատվելը կարող է իրավես բացել գաղութացման նոր գարագրջան:

Գաղութացման հարցը Ռուսաստանում յենթակա հարց ե՝ աղբարային հարցի համեմատությամբ յերկրի կենտրոնում: XIX դարի վերջը մեր առաջ յերկրնարանք ե զնում՝ կամ նորտափիության վճռական լուծարք «լաղեմի» ուստական նահանգներում: այն ժամանակ մեր ծայրերկըների գաղութացման արագ, ծավալուն, ամերիկյան զարգացումն ապահովված ե: Կամ աղբարային

Հարցի ճգճըումը կենտրոնում, այն ժամանակ անխուսափելի յէ արտադրողական ուժերի զարդացման յերկարաւուն հապաղումը, ճորտատիրական տրադիցիաների սպահապանումը նաև դաշութացման գործում: Առաջին դեպքում յերկրագործությունը պիտի տանի ազատ ֆերմերը, յերկրորդ դեպքում՝ ստրկացած գեղջուկը և հատվածահողերի միջոցով «տնտեսավարող» աղան:

II

Անցնում ենք կարվածատիրական տնտեսության կազմակերպման հարցին: Ամենքին հայտնի յէ, վոր այդ կազմակերպման հիմնական գիծը կապիտալիստական սիստեմի («ազատ վարձում») միացումն եւ աշխատավճարայինի հետ: Իսկ ի՞նչ բան ե այս աշխատավճարային սիստեմը:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ ե ծանոթանալ կարվածատիրական տնտեսության կազմակերպությանը ճորտատիրական իրավունքի ժամանակի: Ամենքին հայտնի յէ, թե ինչ եր ճորտատիրական իրավունքը՝ իրավաբանական, վարչական ու կենցաղային տեսակետներից: Բայց շատ քիչ ե հարց տրվում այն մասին, թե ճորտատիրական իրավունքի որով վորն ե կարվածատիրերի ու գյուղացիների տնտեսական հարաբերությունների ելությունը: Այն ժամանակ գյուղացիներին բաժնեցող տալիս եյին կարվածատերերը: Յերեմն նրանք գյուղացիներին փոխառության կարգով տալիս եյին արտադրության այլ միջոցներ են. որինակ՝ անտառանյութ, անասուն և այլն: Սակայն ի՞նչ նշանակություն ուներ ճորտատիրական գյուղացիներին կարվածատիրական հողերից այդ բաժնեհող տալը: Յեթե խոսենք այժմյան հարաբերությունների լեզվով, նադեխն այն ժամանակ աշխատավարձի ձև եր: Կապիտալիստական արտադրության մեջ բանվորի աշխատավարձը վճարվում ե փողով: Կապիտալիստի շահույթն իրացվում ե փողի ձևով: Անհրաժեշտ ու հավելյալ աշխատանքը (այսինքն՝ աշխատանք, վորը վճարվում ե բանվորի պահպանության համար, և աշխատանք, վորը կապիտալիստին տալիս ե չվճարված հավելյալ արժեքը) գործարանում միանում են իրար հետ աշխատանքի մեկ պրոցեսում, մեկ գործարանային աշխատանքային որվա մեջ և այլն: Գործն այլ կերպ ե դրված կոռային տնտեսության մեջ: Այստեղ ես կա անհրաժեշտ ու հավելյալ աշխատանք, ինչպես այս կապիտալիստականում միջոցների միամարդության համար աշխատավարձը կազմում է աշխատավարձի աշխատավարձը և աշխատավարձի աշխատավարձը:

Դած են ժամանակի ու տարածության մեջ: Ճորտատիրական գյուղացին յերեք որ աշխատում ե աղայի և յերեք որ իր համար: Աղայի համար նա աշխատում ե կարվածատիրական հողի կամ բերքի վրա: Իր համար նա աշխատում ե նադեխի հողի վրա, ինքը հայթայթելով իր և ընտանիքի համար այն հացը, վոր անհրաժեշտ ե կարվածատիրով համար աշխատանքի ուժ պահպանելու նպատակով:

Ճետկապես տնտեսության ճորտատիրական կամ կոռային սիստեմը միանման ե կապիտալիստականին այն խմառով, վոր յերկու գիպքում ևս աշխատողն ստանում ե միայն սնհրաժեշտ աշխատանքի արդյունքը, տալով հավելյալ աշխատանքի արդյունքն առանց վճարի արտադրության միջոցների սեփականատիրով: Ճորտատիրական տնտեսության սիստեմը կապիտալիստականից տարբեր կողմերով: Նաև՝ ճորտատիրական տնտեսությունը բնատնտեսություն ե, իսկ կապիտալիստականը՝ փողային: Յերկրորդ՝ ճորտատիրական տնտեսության մեջ շահագործման միջոց հանդիսանում ե աշխատողին հողի հետ կապելամբաղնելը՝ նրան բաժնեհող հատկացնելը, իսկ կապիտալիստականում՝ աշխատողին հողից ազատելը: Յեկամուտ (այսինքն՝ հավելյալ արդյունքը) ստանալու համար ճորտատերկարվածատերը պետք ե իր հողի վրա ունենա հողաբաժին, ինվենտար, անտառը ունեցող գյուղացի: Հողագուրկ, ձիազուրկ ու անտեսազուրկ գյուղացին ճորտատիրական շահագործության համար անպետք առարկա յէ: Յեկամուտ (շահույթ) ստանալու համար կապիտալիստը պետք ե իր առաջ ունենա հատկապես հողադուրկ, տնտեսազուրկ աշխատող, վորն ստիպված ե ծախել իր բանվորական ուժն աշխատանքի ազատ շուկայում: Յերրորդ՝ նադեխի հող ստացած գյուղացին պետք ե անձամբ կախումն ունենա կարվածատիրովից, քանի վոր հող ունենալով նա կոռի չի գնա այլ կերպ, քան հարկադրանքի ներքո: Ծնտեսության ձեն այստեղ առաջ ե բերում «արտատնտեսական հարկադրանք», ճորտատիրություն, իրավական կախումն, անիրավահավասարություն և այլն: Բնդհակառակը՝ «իդեալական» կապիտալիզմը պայմանագրի ամենից լինակառար աղատությունն ե աղատ շուկայում սեփականատիրով ու պրոլետարի միջև:

Ճորտատիրական կամ նույն եւ կոռային տնտեսության տնտեսական այս եյությունը վորոշակի կերպով պարզելուց հետո միայն մենք կարող ենք հականալ աշխատավճարումների

պատմական տեղն ու նշանակությունը։ Աշխատավճարումները կոռատիրության ուղղակի և անմիջական մնացորդն են։ Աշխատավճարումների՝ այդ անցումն և կոռատիրությունից գեղի կապիտալիզմը։ Աշխատավճարումների եյությունն այն է, վոր կալվածատիրական հողերը գյուղացիները մշակում են իրենց ինվենտարով՝ մասսմբ դրամական վճարով և մասսմբ բնավարձով (Հող, հատվածահող, արոտ, ձմռան փոխատվություն և այլն)։ Կիսրարություն անունը կրող հայտնի տնտեսաձեւը աշխատավճարումների տարածեություններից մեկն է։ Աշխատավճարային կալվածատիրական տնտեսության համար անհրաժեշտ է հողաբաժն ստացած գյուղացի, վորն ունի կենդանի ու մեռյալ թեկուղ ամենավատ ինվենտար, անհրաժեշտ է նաև, վոր այդ գյուղացին կարիքի մեջ ինը ված լինի և գնա ստրկացման։ Ազատվարձման փոխարեն ստրկացումն և աշխատավճարումների անպայման ուղեկիցը։ Կարվածատերն այստեղ հանդես է գալիս վոչ վորպես ձեռնարկող-կապիտալիստ, վորը գրամի և աշխատանքի զործիքների լրիվ ամբողջության տերն է։ Կարվածատերն աշխատավճարումների ժամանակ հանդես է գալիս վորպես վաշխառու, վորն ուղարկում է հարևան գյուղացու կարիքից և ձեռք և բերում նրա աշխատանքը յեռակի եժան։

Այս բանն ավելի ակնառու դարձնելու համար վերցնենք յերկրագործության գեղարտումնենտի տվյալները։ մի աղբյուր, վորը վեր և ամեն մի կասկածից գեղի պարունայք հողատերերը անբարյացակամություն տածելու տեսակետից։ «Вольнонаемный труд в хозяйстве и т. д.» հայտնի հրատարակությունը (вып. V, «С-х. и стат. свед., получ. от хозяев» Спб. 1892 г.) միջին սկահողացին շրջանի մասին ութ տարիս (1883—1891) տեղեկություններ և տալիս։ Գյուղացիական ինվենտարով մեկ դեյտին աշխատացնացնի լրիվ մշակության միջին վճարը պետք է հաշվել 6 ոռութիւն։ Իսկ յեթե նույն աշխատանքի արժեքը հաշվենք ազատվարձման գներով, այդ դեպքում, դրում են նույն հրատարակությունը, կոտանանք 6 ո. 19 կ., միայն հետեւակ աշխատանքի համար, չհաշված ձիռ աշխատանքը, վորը 4 ո. 50 կ. պակաս չի կարելի հաշվել (Հիշյալ հրատ. Եջ 45, «Развитие капитализма в России», Եջ 141*): Հետեւարսը՝ պատվարձման գինը հայտապես 10 ո. 69. կ., իսկ աշխատավճարայինը՝ 6 ո.։ Ի՞նչպես

բացատրել այս յերեսույթը, յեթե այն պատահական և ինչ-վոր յեղակի բան չեն, այլ նորմալ ու սովորական են։ «Ստրկացում», «վաշխառություն», «կաշառակերություն» և այլ այսպիսի բառերը նկարագրում են գործարքի ձևն ու բնույթը, բայց չեն բացատրում նրա տնտեսական եյությունը։ Գյուղացին ի՞նչպես կարող են մի շարք տարիների ընթացքում 6 ոռություն կատարել մի աշխատանք, վորն արժե 10 ո. 69 կ.։ Գյուղացին այդ կարող է անել այն պատճառով, վոր նրա նաղելը ծածկում է գյուղացու ընտանիքի ծածկում և մասը և հնարավորություն է տալիս աշխատավարձնեցնել ավելի ցածր քանի ուղեցնել ավելի ցածր, քան «ազատ վարձման» նորմաներն են։ Գյուղացին այն պատճառով է ստիպված այդ անել, վոր խղճուկ նաղելը կապում է նրան հարևան կալվածատիրոջ հետ, հնարավորություն չտալով իր տնտեսությամբ ապրելու։ Ենի հասկանալի յեւ, վոր այսպիսի յերեսույթը կարող է «նորմալ» լինել լոկ իրրե կամիտավիզմի կողմից կոռատիրությունը վտարելու պրոցեսի ողակներից մեկը, վորովհետեւ նման պայմանների բերումով գյուղացին անխուսափելիորեն քայլքայլում է և դանդաղորեն, բայց անտարակույս դառնում է պրոլետար։

Ահա դարձյալ նույնատեսակ, բայց վորուց չափով ավելի լրիվ ավյալներ Սարատովի գավառուից։ Մեկ գեսատինի մշակության միջին գինը՝ հացահատիկի հնձելու, կրնելու և կալսելու հետ միասին արժե 9,6 ոռութիւն, յերբ ձմռանը նախակապալ կաղմելով աշխատավարձի 80—100 տոկոսը վճարվում է սկզբից։ Աշխատավճարումների ժամանակ վարելահողի վարձադինը 9,4 ոռութիւն յեւ։ Ազատ վարձակալության ժամանակ 17½ ոռութիւն։ Մեկ գեսատինի հնձելն ու կրելն աշխատավճարումների ժամանակ 3,8 ոռութիւն յեւ, ազատ վարձով՝ 8½ ոռութիւն և այլն։ Այս թվերից ամեն մեկն իր մեջ բովանդակում է գյուղացիական անսահման կարիքի, ստրկացման ու քայլքայման յերկար պատճությունը։ Այս թվերից յուրաքանչյուրը վկայում է այն մասին, թե XIX դարի վերջին վորքան կինդամնի յեն ճորտատիրական շահագործումն ու կոռատիրության մնացորդները նուսաստանում։

Աշխատավճարային սիստեմի տարածման չափը շատ դժվար է հաշվառման յենթարկվում։ Սովորաբար այնպես և լինում, վոր կալվածատիրական տնտեսության մեջ աշխատավճարային ու կապիտալիստական սիստեմները միացած են, վորոնք կիրառվում են յերկրագործության տարրեր զործառնությունների նկատմամբ։ Հողի աննշան մասն է մշակվում կարվածատիրական ինվենտարով

* Տե՛ս Հ. Сочинения, հ. III, Եջ 147—148։ Խմբ։

պատմական տեղն ու նշանակությունը։ Աշխատավճարումները կոռատիրության ուղղակի և անմիջական մնացորդն են։ Աշխատավճարումներն՝ այդ անցումն և կոռատիրությունից դեպի կապիտալիզմը։ Աշխատավճարումների եյությունն այն է, վոր կապածատիրական հողերը գյուղացիները մշակում են իրենց ինվենտարով՝ մասամբ գրամական վճարով և մասամբ բնավարձով (հող, հատկածահող, արոտ, ձմռան փոխատվություն և այլն)։ Կիսուրարություն անունը կրող հայտնի տնտեսաձեւ աշխատավճարումների տարածեսություններից մեկն է։ Աշխատավճարային կալվածատիրական տնտեսության համար անհրաժեշտ և հողաբաժն ստացած գյուղացի, վորն ունի կենդանի ու մեռյալ թեկուղ ամենալատ ինվենտար, անհրաժեշտ և նաև, վոր այդ գյուղացին կարիքի մեջ խեղզված լինի և դնա ստրկացման։ Ազատվարձման փոխարեն ստրկացումն և աշխատավճարումների անպայման ուղեկիցը։ Կարվածատերն այստեղ հանդիս է գալիս վոչ վորակս ձեռնարկող-կապիտալիստ, վորը զբամի և աշխատանքի զործիքների լրիվ ամբողջության տերն է։ Կարվածատերն աշխատավճարումների ժամանակ հանդիս է գալիս վորակս վաշխառու, վորն ուղարկում է հարևան գյուղացու կարիքից և ձեռք և բերում նրա աշխատանքը յեռակի եժան։

Այս բանն ավելի ակնառու գարճնելու համար վերցնենք յերկրագործության գեղարտամենսի տիյալները։ մի ազրյուր, վորը վեր և ամեն մի կասկածից դեպի պարոնայք հողատերերը անբարյացակարություն տածելու տեսակետից։ «Вольнонаемный труд в хозяйстве и т. д.» հայտնի հրատարակությունը (вып. V, «С-х. и стат. свед., получ. от хозяев» Спб. 1892 г.) միջին սեահողային շրջանի մասին ութ տարվա (1883—1891) տեղեկություններ և տալիս գյուղացիական ինվենտարով մեկ գեսյատին աշխանցանի լրիվ մշակության միջին վճարը պետք է հաշվել 6 ոուրլի։ Իսկ յեթե նույն աշխատանքի արժեքը հաշվենք ազատվարձման դներով, այդ դեպքում, գրում է նույն հրատարակությունը, կստանանք 6 ո. 19 կ., միայն հետևակ աշխատանքի համար, չհաշված ձիու աշխատանքը, վորը 4 ո. 50 կ. պակաս չի կարելի հաշվել (հիշյալ հրատ. եջ 45, «Развитие капитализма в России», եջ 141*): Հետևաբար՝ ազատ վարձման դինը հավասար է 10 ո. 69 կ., իսկ աշխատավճարայինը՝ 6 ո.։ ի՞նչպես

բացարել այս յերկությը, յեթե այն պատահական և ինչ-վոր յեղակի բան չէ, այլ նորմալ ու սովորական է։ «Սորկացում», «վաշխառություն», «կաշառակերություն» և այլ այսպիսի բառերը նկարագրում են գործարքի ձևն ու բնույթը, բայց չեն բացարում նրա տնտեսական եյությունը։ Գյուղացին ի՞նչպես կարող է մի շարք տարբների ընթացքում 6 ոուրլով կատարել մի աշխատանք, վորն արժե 10 ո. 69 կ.։ Գյուղացին այդ կարող է անել այն պատճառով, վոր նրա նադելը ծածկում է գյուղացու ընտանիքի ծախսերի մի մասը և հնարավորություն և տալիս աշխատավարձման իջեցնել ավելի ցած, քան «ազատ վարձման» նորմաներն են։ Գյուղացին այն պատճառով է ստիպված այդ անել, վոր խղճուկ նադելը կապում է նրան հարևան կալվածատիրոջ հետ, հնարավորություն չտալով իր տնտեսությամբ ապրելու։ Յեթ հասկանալի յե, վոր այսպիսի յերկությը կարող և «նորմալ» լինել լոկ իրրե կապիտալիզմի կողմից կոռատիրությունը վտարելու պրոցեսի ողակներից մեկը, վորովհետեւ նման պայմանների բերումով գյուղացին անխուսափելիորեն քայլքայլում և ու դանդաղորեն, բայց անտարակույս դառնում է պրոլետար:

Ահա դարձյալ նույնառեսակ, բայց վորոշ չափով ավելի լրիվ տվյալներ Սարատովի գավառուից։ Մեկ գեսյատինի մշակության միջին գինը՝ հացահատիկի հնձելու, կրելու և կալսելու հետ միասին արժե 9,6 ոուրլի, յերբ ձմռանը նախակապալ կաղմելով աշխատավարձի 80—100 տոկոսը վճարվում է սկզբից։ Աշխատավճարումների ժամանակ վարելահողի վարձադինը 9,4 ոուրլի յե։ Ազատ վարձակալության ժամանակ 17½ ոուրլի։ Մեկ գեսյատինի հնձելն ու կրելն աշխատավճարումների ժամանակ 3,8 ոուրլի յե, ազատ վարձով՝ 8½ ոուրլի և այլն։ Այս թվերից ամեն մեկն իր մեջ բոլոնդակում է գյուղացիական անսահման կարիքի, ստրկացման ու քայլքայման յերկար պատճությունը։ Այս թվերից յուրաքանչյուրը վկայում է այն մասին, թե XIX դարի վերջին վորքան կենդանի յեն ճորտատիրական շահագործումն ու կոռատիրության մնացորդները մուսաստանում։

Աշխատավճարային սիստեմի տարածման չափը շատ դժվար է հաշվառման յենթարկվում։ Սովորաբար այնպես և լինում, վոր կալվածատիրական տնտեսության մեջ աշխատավճարային ու կապիտալիստական սիստեմները միացած են, վորոնք կիրառվում են յերկրագործության տարբեր գործառնությունների նկատմամբ։ Հողի աննշան մասն է մշակում կալվածատիրական ինվենտարով

* Տե՛ս Сочинения, հ. III, եջ 147—148։ Խմբ.։

ու վարձու բանվորներով։ Հողի մեծ մասը վարձակալության և տրվում գյուղացիներին՝ կիսրար, աշխատավճարումներով։ Ահա միքանի իլյուստրացիա՝ բերված պ. Կառվամանի մանրակրկիտ աշխատությունից*, վորտեղ մասնատիրական տնտեսության մասին նամի շարք նորագույն տվյալներ եւ ամփոփել։ Տուլայի նահանդ (աելեկությունները վերաբերում են 1897—1898 թվերին)՝ «կալվածատերերը մնում են հին յեռադաշտին կառչած... հեռավոր հողերը վերցնում են գյուղացիները»։ տիրական հողերի մշակությունը չափազանց անբավարար է։ Կուրսկի նահանդ՝ ... «գյուղացիներին հողը դեսյատինով բաժանելը, վոր բարձր գների շնորհիվ ձեռնտու յե... ուժասպառ ե արել հողը»։ Վորոնեժի նահանդ՝ ... միջակ ու մանր հողատերերը «մեծ մասամբ տնտեսությունը վարում են բացառապես գյուղացիական ինվենտարի միջոցով կամ իրենց կարգածքը վարձակալության են տալիս... տնտեսությունների մեծամասնության մեջ այնպիսի յեղանակներ են կիրառվում, վորոնք աչքի յեն ընկնում վորեւե բարելավման բացակայությամբ»։

Նման վկայությունները ցույց են տալիս, վոր XIX դարի վերջերի համար միանդամայն հարմարում և Յելլոպական Ռուսաստանի ղանազան նահանդների մեջ աշխատավճարային ու կապիտալիստական սիստեմների գերազանցության այն ընդհանուր բնութագիրը, վոր տվել է պ. Անհնակին «Влияние урожаев и т. д.» գրքում։ Առաջ ենք բերում այդ բնութագիրը վորքրիկ աղյուսակի ձեռով։

	Նահանդների թիվը		Մասնատիր.	
	Սևահո- ղային	Պաշ-սևա- ղային	Բնդա- մանքեր	(հազար դես.)
I. Նահանդներ՝ կապիտալիստական սիստեմի գերազանցությամբ	9	10	19	7.407
II. Նահանդներ՝ խառը սիստեմի գերազանցությամբ	3	4	7	2.222
III. Նահանդներ՝ աշխատավճարային սիստեմի գերազանցությամբ	12	5	17	6.281
Բնդամենը	24	19	43	15.910

Աւահողային չըջանում, հետևաբար, աշխատավճարումներն անպայման գերազանցում են, նահանդելով հետին պլանը տպյալ

* «Аграрный вопрос». Изд. Долгорукова и Петрунекевича, т. II, М. 1907, стр. 442—628: «К вопросу о культурно-хозяйственном значении частного землевладения».

աղյուսակի մեջ մտած բոլոր 43 նահանդներում։ Այսուեղ կարևոր են նշել, վոր I խմբում (կապիտալիստական սիստեմ) հաշվվում են յերկրագործական կենտրոնի համար վոչ բնորոշ վայրերը՝ մերձքալթյան, հարավ-արևմտյան (Ճակնդեղի շրջան), հարավային և յերկու մայրաքաղաքների նահանդները։

Թե ինչ աղյուսությունն են գործում աշխատավճարումները յերկրագործության արտադրողական ուժերի վրա, այդ մասին պերճախոս վկայում են պ. Կառվամանի աշխատության մեջ բերված նյութերը։ «Կասկածից դուրս ե, —կարդում ենք այստեղ, — վոր մանր-գյուղացիական վարձակալությունն ու կիսրարությունն ամենից ավելի կասեցնող պայման են հանդիսանում գյուղատնտեսության առաջարկության համար»։ Պոլտավյայի նահանդի գյուղատնտեսությանը վերաբերող տեսությունների մեջ միշտ ցույց ե արվում, վոր «վարձողները վատ են մշակում հողը, վատ սերմեր են ցանում, մոլախոտում են հողը»։

Մոգիլյովի նահանդում (1898, թ.) տնտեսության ամեն մի բարելավման արգելք են հանդիսանում կիսրար տնտեսության անհարմարությունները։ «Դնեպրովակի գալառում գյուղատնտեսությունն այնպիսի վիճակի մեջ է գտնվում, վոր մի վորկիցն նորամուծության ու բարելավման մասին մտածելն ավելորդ ե»։ Պրագիսավոր պատճառներից մեկը սկսած է։ «Մեր նյութերը, — պրում ե պ. Կառվամանը (հջ 517), — մի շարք վորոշակի ցուցումներ են տալիս այն մասին, վոր անդամ միենույն կալվածքի սահմաններում վարձակալության տրված հողերի վրա տնտեսության հին ու իրենց դարն անցրած յեղանակները շարունակում են պահպանվել, մինչդեռ սեփական մշակության հողերի վրա կիրառված են դաշտավարության նոր և ավելի կատարյալ սիստեմներ»։ Որինակ, վարձակալած հողերի վրա պահպանվում է յեռադաշտը, յերեմն անդամ առանց պարարտացման գոմաղբով, իսկ տնտեսավարական մշակության հողերն ունեն բազմագաշտյան ցանքսաշրջանառություն։ Կիսրարությունն արգելք ե խոտացանությանը, խանդարում ե պարարտացման տարածմանը, դանդաղեցնում ե գյուղատնտեսական լավագույն գործիքների կիրառում։ Այս ամենի արդյունքն ակնառու յերկան ե գալիս բերքատվությանը վերաբերող տվյալներում։ Ահա, որինակ, մեկ լատիֆունդիս Սիմբիրսկի նահանդում։ տնտեսավարական մեկ

* Սկսածինա ցողատիրոջ բաժինը՝ հողը հերկելու տալիս այսքան դեպից կամ իրածից։ Խմբ։

գեսյատինի տարեկանի բներքատվությունն է 90 վոռմ, ցորենինը՝ 60, վարսակինը՝ 74, իսկ կիսրար հողերի վրա՝ 58—28—50 վոռմ։ Ահա ընդհանուր տվյալներ մի ամբողջ գավառի մասին (Ն.-Նովգորոդի նահանգ, Գորբատովյանի գավառ)։

Տարեկանի բներքատվությունը մեկ դեսյատինից՝ փրերով Բնակչությունի (պօշա) կարգերը		Մասնատիրական հողեր		
Բաժնեհանդեր		Տնտեսա- վարակ ցանք	Կիսրար	Վարձակա- լական
I.	62	74	—	44
II.	55	63	49	—
III.	51	60	50	42
IV.	48	69	51	51
Բոլոր կարգերի համար՝	54*	66	50	45*

Այսպես ուրեմն, կալվածատիրական այն հողերը, վոր ճորտատիրավարի (կիսրար և մանր վարձակալություն) են մշակվում, ավելի քիչ բներք են տալիս, քան նազերային հողերը։ Այս վիթխարի կարևորություն ունեցող փաստ է, քանի վոր անժըլստելիորեն ապացուցում է, վոր Ռուսաստանի գյուղատնտեսության հետամնացության, ամբողջ ժողովրդական տնտեսության անշարժության, հողագործի՝ աշխարհում չտեսնալած նվաստացման գլխավոր ու հիմնական պատճառը աշխատվնարային սխստեմն է, այսինքն՝ ճորտատիրության ուղղակի մնացորդը։ Վո՛չ մի վարկ, վո՛չ մի մելիորացիա, վո՛չ մի «ողնություն» գյուղացուն, բյուրոկրատների և ազատամիտների կողմից սիրված «ոժանդակության» միջոցներից վոչ մեկը վորեն լուրջ արդյունք չի տա, քանի գեռ մնում է ճորտատիրական լատիֆունդիաների, տրադիցիաների և տնտեսության սխստեմների ճնշումը։ Յեկ ընդհակառակը, կալվածատիրական հողատիրությունը վոչնչացնող և չին-միջնադարյան համայնքը քանորդ ադրաբային հեղաշրջումը (հողի աղջայնացումն, որինակ վոչ-վոստիկանական, վոչ-չինովնիկական ձևով և քանդվում այն) զարմանալի արագ և երապես լայն պրոդրեսի հիմք կծառայեր անպայման։ Կիսրար ու վարձակալած հողերի անսաելի ցածր բներքի պատճառը «աղքայի համար» կատարվող աշխատանքի սխստեմն է։ Յեթե նույն այժմյան հողագործն աղատվեր «աղքայի համար» աշխատելուց, վոչ միայն այդ հողերի բներքը կավելանար, այլև անխուսափելուր:

* Պ. Կառուֆմանի մոտ (էջ 521). այս յերկու թվերը, յերկի, վրեպակ ունեն։

Կավելանար նադելային հողերի բներքը՝ պարզապես տնտեսության ճորտատիրական արգելքների վերացման չնորհիվ։

Իսկ իրերի տվյալ դրությամբ մասնատիրական տնտեսության կապիտալիստական պրոդրեսը չափագանց դանդաղ է և յերկար ժամանակով անխուսափելիորեն ծանրաթերում է Ռուսաստանը «վայրենի կալվածատիրով» քաղաքական ու սոցիալական տիրապետությամբ։ Մենք այժմ կտեսնենք, թե ինչումն է արտահայտվում այդ պրոդրեսը, և կփորձնենք վորոշել նրա միքանի ընդհանուր արդյունքները։

Վոր «տնտեսավարական» ցանքսերի, այսինքն՝ կապիտալիստական ձևով մշակվող կալվածատիրական հողերի բներքատվությունը բարձր և գյուղացիական ցանքսերի բներքատվությունից, այս ցույց և տալիս կապիտալիզմի տեխնիկական պրոդրեսը յերկրագործության մէջ։ Այս պրոդրեսը կապված է աշխատավճարային սխստեմից անցնելու հետ։ Գյուղացիության քայլքայլելը, ձիազուրկ լինելը, ինվենտար կորցնելը և հողագործի պրոլետարացումը հարկադրում են կալվածատերերին դիմելու իրենց ինվենտարով աշխատելուն։ Գյուղատնտեսության մէջ աճում է մեքենաների գործադրությունը, վորոնք բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և անխուսափելիորեն տանում են գեղի զուտ-կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացումը։ Արտասահմանից գյուղատնտեսական մեքենաները են ներմուծված Ռուսաստան՝ 1869—1872 թ. թ. 788 հազար ո., 1873—1880 թ. թ.՝ 2,9 միլ. ո., 1881—1888 թ. թ.՝ 4,2 միլ. ո., 1889—1896 թ. թ.՝ 3,7 միլ. ո., 1902—1903 թվերին՝ 15,2—20,6 միլիոն ոռուբլու։ Գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը (մոտավոր թվեր, ըստ գործարանների բավականաչափ կոպիտ վիճակագործության) 1876 թվին՝ 2,3 միլ. ո., 1894 թ.՝ 9,4 միլ. ո., 1900—1903 թվերին՝ 12,1 միլիոն ոռուբլի։ Այս թվերն անվիճելի աղացույց են յերկրագործության պրոդրեսի և, իհարկե, հատկապես կապիտալիստական պրոդրեսի։ Բայց անվիճելի յենակ այն, վոր այս պրոդրեսը չափագանց դանդաղ և, համեմատած այն բանի հետ, վոր հնարավոր ժամանակակից կապիտալիստական պրոտության մէջ, սրա որինակն է Ամերիկան։ Միացյալ Նահանգներում, 1900 թ. հունիսի 14 (1)-ի վիճակագործության համաձայն, Փերմաների տակ 838,6 միլ. ակր կամ մոտ 324 միլ.

գեսյատին Հող կար: Ֆերմաների թվին եր 5,7 միլիոն, ուրեմն միջին հաշվով մեկ ֆերման ուներ 146,2 ակր (մոտ 60 դեսյատին) Հող: Յեվ ահա այդ ֆերմերների համար 1900 թվին արտադրվել է 157,7 միլիոն դոլարի գյուղատնտեսական գործիք (1890 թ., 145,3 միլիոն դոլարի, 1880 թ.՝ 62,1 միլ. դոլարի)*: Մրանց համեմատությամբ ուստական թվերը ծիծաղելիորեն փոքր են, և վորքը են այն պատճառով, վոր մեզ մոտ մեծ ու հզոր են ճորտափիրական լատիֆունդիաները:

Յերկադործության մինիստրությունն անցյալ դարի 90-ական թվականների մեջերքին հատուկ անկետայով հաշվի յե առել գյուղատնտեսական բարելավ գործիքների համեմատական տարածումը հողատերերի ու գյուղացիների մեջ: Այդ անկետայի միջոցով ստացված տվյալների ամփոփումը, վոր մանրամասնորեն չարագրված ե ալ. Կառլֆմանի կողմից, կարող ենք առաջ բերել հետեյալ աղյուսակով.

Գյուղատնտեսական բարելավ գործիքների լայն տարածման մասին արված
ցուցմունքների տոկոսը

Շըշաններ

Հողատերերի մոտ Գյուղացիների մոտ

Կենսարժական-յերկադործական	20—51	8—20
Միջին-կողմայի	18—66	14
Նոլորսոսիլակի	50—91	33—65
Բելոռուսիայի	54—86	17—41
Մերձմային	24—47	1—21
Բնդմուկովյան	22—51	10—26
Արդյունաբերական	4—8	2

Այս բոլոր ցըջանների համար միջին հաշվով ստանում ենք կարմածատերերի մոտ 42%, գյուղացիների մոտ 21%:

Գոմաղով պարաբռացնելու տարածման մասին յեղած վիճակագրական բոլոր տվյալները նմանապես անհերքելի ապացույց են տալիս, «վոր այս գործում հողատիրական տնտեսությունն ամբողջ ժամանակ առաջ ե յեղել և մինչեւ այժմ ել առաջ ե գյուղացիականից» (Կառլֆման, եջ 544): Դեռ ավելին՝ հետուիքորմյան Ռուսաստանում բավականաչափ տարածված եր գյուղացիներից գոմաղը գնելու յերևույթը՝ կարմածատերերի կողմից:

* «Abstract of the Twelfth Census». 1900. Third Editon. Washington 1904, pages 217 and 302—agricultural implements. («Տասերկուերրորդ վեհակագրության տեսություն», 1900 թ., 3-րդ հրատարակություն, Վաշինգտոն, 1904 թ., եջ 217 և 302—գյուղատնտեսական գործիքներ: Խմբ. :)

Այս արդեն հետեանը ե գյուղացիական ամենածայրահեղ կարիքի: Վերջին ժամանակներում այս յերեւությն աստիճանաբար նվազում է:

Վերջապես կարմածատիրական ու գյուղացիական անտեսությունների մեջ յերկրագործական տեխնիկայի բարձրության հարցի մասին ստույգ և մասսայական վիճակաբարական այլայներ կան խոտացանության տարածման վերաբերյալ (Կառլֆման, եջ 561): Ահա ոչխավոր յեղրակացությունները.

Ներախոսերի ցանքը	Ցեղական
Թ կ ա կ ա ն ն ե ր	հողատերերի մոտ
1881.	49,8 հազ. դես.
1901.	499,0 » » 1046,0 » »

Վո՞րն ե կարմածատիրական ու գյուղացիական տնտեսությունների միջն յեղած այս տարբերությունների հետեանքը: Այս մասին դատելու համար անհրաժեշտ տվյալները բերքատվության վերաբերյալ տվյալներն են միայն: Ամբողջ Ցեղը, Ռուսաստանում 18 տարվա ընթացքում (1883—1900) հետեյալ միջին բերքատվությունն ե յեղել (չետքերտներով):

Աշխանացան	Դարնանացան	Տարնանացան	Գարնանացան
Տարեկան	ցորեն	ցորեն	գարսակ
Հողատերերի մոտ	6,0	5,75	5,0
Գյուղացիների մոտ	5,0	5,0	4,25
Տարբերությունը	16,7%	13,0%	15,0%
			17,6%

Պ-ն կառլֆմանը միանդամայն իրավացի յե, յերբ ասում ե, թե այս տարբերությունը «չատ վոքք ե» (եջ 592): Այս գեպքում պետք ե նկատի առնել վոչ միայն գյուղացիներին ամենավատ հողեր թողած լինելը 1861 թվին, այլև այն, վոր ամբողջ գյուղացիությանը վերաբերող ընդհանուր միջինը (ինչպես այժմ կտևնենք) խոշոր տարբերություններ ե թագցնում:

Կարմածատիրական տնտեսությունը քննելուց հետո մենք պետք ե հետեյալ ընդհանուր յեղրակացությունն անհնք: Կապիտալիզմն այս ասպարեզում լիակատար ակներենությամբ ճանապարհ ե հարթում իր համար: Ազատ—վարձու աշխատանքը փոխարինում ե կոռային տնտեսությանը: Բոլոր ուղղություններով ու միանդամայն վորոշակի կերպով նկատվում ե կապիտալիստական յերկրագործության տեխնիկական պրոդրեսը՝ աշխատավճարային ու մանր գյուղացիականի համեմատությամբ: Սակայն այդ

պրոգրեսը չափազանց դանդաղ և ժամանակակից կապիտալիստական յերկրի համար։ Յեկամարի վերջը Ռուսաստանում ամենից սուր հակասություն ե գտնում ամբողջ հասարակական գարգացման պահանջների ու ճորտատիրության միջև, վորը հանձննու կարգածատիրական-ազնվականական լատիֆունդիտաների, հանձննու տնտեսության աշխատավճարային սիստեմի հանդիսանում և տրնտեսության եվոլուցիայի արդելուկ, հարստահարության, բարբարոսության ու թաթարականության անվերջ ձևերի աղբյուր ուսուական կյանքում։

III

Գյուղացիական տնտեսությունն արդի աղբարային հարցի կենտրոնական կետն և կաղմում Ռուսաստանում։ Վերևում մենք ցույց տվինք գյուղացիական հողատիրության պայմանների վորապիսությունը, իսկ այժմ պետք և անցնենք գյուղացիական տընտեսության կազմակերպության խնդրին՝ բարի վո՛չ թե տեխնիկական, այլ քաղաքատնտեսական խմաստով։

Այստեղ առաջին շարքում մենք հանդիպում ենք գյուղացիական համայնքի հարցին։ Զափազանց ընդարձակ դրականություն և նվիրված նրան, և մեր հասարակական մտքի նարողներկական ուղղությունն իր աշխարհազբացողության հիմնական կետերը կապում և այդ «Հավասարաբ» հաստատության ազդային առանձնահատկությունների հետ։ Այս առթիվ ամենից առաջ պետք ե նկատել, վոր գրականության մեջ ուսուական հողային համայնքի շուրջը շարունակ հյուսվում են և շատ հաճախ շփոթվում են հարցի յերկու տարրեր կողմերը. մի կողմից՝ աղբիկուլտուրայինն ու կենցաղայինը, մյուս կողմից՝ քաղաքատնտեսականը։ Համայնքին նվիրված յերկերի մեծամասնության մեջ (Վ. Ռուզի, Տրիգորով, Կեյսուեր, Վ. Վ.) հարցի առաջին կողմին այնքան մեծ տեղ և ուշադրություն են նվիրում, վոր նրա յերկրորդ կողմն ստիբորում են թողնում։ Մինչեւ նման յեղանակը խորապես սիսալ է; Ռուսական հողային հարաբերությունների առանձնահատկությունը վորեւ այլ յերկրի հարաբերությունների համեմատությամբ կասկածից դուրս ե, սակայն չի գտնվի զուտկապիտակական՝ հանրաճանաչ կապիտալիստական յերկու յերկեր, վոր նույնքան նկատելի չափով չտարբերվելին իրարից աղբարային կենցաղով, հողային հարաբերությունների պատմությամբ, հողատիրության ու հողովագործության ձևերով։

այլն։ Այն, ինչը ուսուական հողային համայնքի հարցին նրա ունեցած նշանակությունն ու սրությունն ե տվել, ինչը XIX դարի յերկրորդ կեսից սկսած մեր հատարակական միաբը բաժանել ե յերկու հիմնական ուղղությունների՝ նարողների և մարզիստականի, այն ամենաին հարցի աղբիկուլտուրային ու կենցաղային կողմը չե։ Կարելի յե, վոր տեղական ուսումնասիրության մեջ մարդակողմանի հաշվի առնվենյերկությունը մեծ ուշադրություն պետք ե դարձնելին հարցի այս կողմին, ինչպես նրա համար, վոր բազմակողմանի հաշվի առնվենյերկությական կենցաղի հատկապես տեղական առանձնահատկությունները, այսպես ել հետ վանելու համար բյուրոկրատիստի տղամարդու վորապես վուստիկանական վողով թափանցված մանր սեղամենացիա մտցնելու։ Բայց տնտեսագետի համար համենայն դեսպանության անթուլատրելի յե հողերի վերաբաժանության այլաձեւության, նրա տեխնիկայի և այլնի ուսումնասիրությամբ մթաղնել այն խնդիրները, թե արնեսության ինչ տիպեր են շերտավորվում համայնքի ներսում, ինչպես են զարգանում այդ տիպերը, ինչպես են դասավորվում հարաբերությունները բանվոր վարձողների ու սև աշխատանքի համար վարձվողների միջև, ունեորների ու չքայլորության միջև, տեխնիկայի մեջ կատարելագործություն մացնողների և քայլայլողների, տնտեսությունը գցողների, գյուղից փախչողների միջև։ Կառկածից դուրս ե, վոր հենց այս ճշմարտության գիտակցությունը զեմատվային մեր վեճակագիրներին, վորոնք Ռուսաստանի ժողովրդական տնտեսության ուսումնասիրության համար անդնահատելի նյութեր են տվել, զրուել և անցած դարի 80-ական թվականներին թողնելու դյուղացիությունը կազյոնների ձեռվ՝ ըստ համայնքների, ըստ նացելի, ըստ ժողովրդագրի կամ արական սեռի առկա չնչերի խըմբավորելը և անցնելու միակ-գիտական՝ ըստ ծխերի տնտեսական կարողության խմբավորմանը։ Հեշեցնենք, վոր այն ժամանակները, յերբ Ռուսաստանի տնտեսական ուսումնասիրության հետաքրքրությունն առանձնապես մեծ եր, այդ հարցում «կուսակցական» դրող Վ. Վ.-ն անդամ իր ամբողջ հոգով վողջունում եր «գեմստվային-լիճակագրական հրատարակության նոր ձևը» (Վ. Վ.-ի հողման վերնագրերը «Северный Вестник»*-ում, 1885

* «Северный Вестник»—գրական-գիտական և քաղաքական ժողովական ամսագիր, վոր լույս եր տեսնում Գետերուրդում 1885—1897 թ. թ.։ Սկզբում այն հանդիսանում եր նարողներկան հայացքների կրողը (80-ական թվականներ), հետագայում իշեալիզմի և միատիպոգրաֆիայի պրոպագանդա յեր անում։ Խմբ.։

թիվ, № 11) և հայտարարում եր. «անհրաժեշտ եւ թվական տվյալները հարմարեցնել վո՞չ թե գյուղացիության ամենից գանազանակերպ տնտեսական խմբերի ազլումներատին, ինչպիսին գյուղն ու համայնքն են, այլ հենց նույն այդ խմբերին»:

Մեր համայնքի հիմնական դիմումը, վորը նրան հատուկ նշանակություն և սալիս նարողներին աչքում, հողովագործության հավասարությունն եւ: Բոլորովին մի կողմ թողնենք այն հարցը, թե համայնքը ինչպես է համուռմ այդ հավասարության, այլ ուղղակի դիմենք տնտեսական փաստերին՝ այդ հավասարության հետևանքներին: Յեվր. Ռուսաստանում բոլոր նազելային հողերի բաշխումը, ինչպես միանդամայն ճշգրիտ տվյալներով ցույց տվինք վերեկում, ամեննեին հավասարար չե: Դյուղացիների տարբեր կարգերի միջև, զանազան դյուղերի դյուղացիների միջև—անդամ միննույն դյուղի տարբեր կարգածառերի («նախկին») դյուղացիների միջև բաշխումը նույնպես ընդհանուր վորչինչ չունի հավասարարության հետ: Միմիայն մանր համայնքների ներսում հողաբաժանության ապարատը հայտարարություն եւ ստեղծում այդ վոչ մեծ, ինքնամփոփ միությունների համար: Այժմ զեմատվային վիճակագրության հիման վրա տեսնենք, թե նադելային հողերն ինչպես են բաշխված ծիսերը: Ընդումին հասկանալի յե, վոր այս գեպքում ծիսերի խմբավորումը պետք եւ վերցնենք վոչ թե ըստ ընտանիքի մեծության, վոչ թե ըստ աշխատղների թվի, այլ անպայման ըստ առանձին ծիսերի տնտեսական կարողության (ցանքս, բանող անասունների թիվ, կովերի քանակ և այլն), քանի վոր մանր յերկրագործության կապիտալիստական եվլուստիայի ամբողջ եյությունն այնք, վոր նա ստեղծում և ուժեղացնում եւ դույքային անհավասարությունը նահավետական միությունների ներսում, ապա՝ պարզ անհավասարությունը կապիտալիստական հարաբերությունների և վերածում: Հետևաբար մենք մթաղնած կլինելինք տնտեսական որ եվլուստիայի բոլոր առանձնահատկությունները, յեթե նպառակ չդնելինք առանձնապես ուսումնասիրել տնտեսական կարության տարրերությունները գլուղղագիության ներսում:

Նախ վերցնենք մեկ բնորոշ գավառ (զեմստվային վիճակա-
րության ծխային հետազոտությունները մանրամասն համակցա-
ան աղյուսակներով հարմարեցված են ըստ առանձին դաշտառնե-
րի) և ապա բերենք այն հիմքերը, վորոնք հարկադրում են մեղ
ետաքրքրող յեղակացությունները տարածել ամբողջ Ռուսա-

տանի գյուղացիության վրա: Եյութը վերցնում էնք «կապիտալիզմի զարդացումից»՝ դէ. Ա*:

Պերմի նահանգի Կրասնոպոլֆիլմսկի գալառում, վլրտեղ դյու-
ղացիական հողատիրությունը բացառապես համայնական է, նա-
դելիյին հողերն այսպես են բաշխվում.

	<i>Մեկ ծնիդն լոկուում ե</i>	<i>Ցողաբաժին</i>
<i>Ցող չմշակողներ</i>	<i>3,5</i>	<i>9,8</i>
<i>Մինչև 5 դես. մշակողներ</i>	<i>4,5</i>	<i>12,9</i>
» 5—10 » »	5,4	17,4
» 10—20 » »	6,7	21,8
» 20—50 » »	7,9	28,8
» 50-ից ավելի » »	8,2	44,6
<i>Բնդամենք</i>	<i>5,5</i>	<i>17,4</i>

Մենք տեսնում ենք, վոր ծիերի տնտեսական կարողության բարձրացման հետ միասին անպայման կանոնավորապես մեծանում է ծիյի կազմը։ Պարզ է, վոր բազմանդամությունը դյուլացիական բարեկեցության գործոններից մեկն է։ Այս անվիճելի յէ Հարցն այն և միայն, թե այդ բարեկեցությունն ամբողջ ժողովրդական տնտեսության տվյալ շրջապատռամ հասարակական-տնտեսական ինչ հարաբերությունների յէ հասցնում։ Ինչ վերաբերում է նադելային հողերին, մենք տեսնում ենք նրանց բաշխման անհամաշափություն, թեպետ և վոչ այնքան մեծ։ Վորքանունեոր և դյուղացիական ծովելը, այնքան շատ նադելի հող և ընկնում քնակչության յուրաքանչյուր շնչին։ Ստորին խմբերում յերկու սեռի յուրաքանչյուր շնչին Յ դեսյատինից պակաս հողաբաժին և ընկնում, հետադա խմբերում՝ մոտ Յ դեսյատին։ յերեք դեսյատին, մոտ 4 դես ։ չորս դեսյատին և վերջապես ամենից բարձր խմբում յերկու սեռի յուրաքանչյուր շունչն ունի 5 դես։ ավելի հողաբաժին։ Հետևապես՝ բարձանդամությունն ու նադելային հողով ամենից լավ ապահովված լինելը ունեորության հիմքն են ծառայում զյուղացիների սակավ փոքրամասնության համար, վորովհետեւ բարձր յերկու խմբերն ընդգրկում են ծիւերի ընդհանուր թվի ընդամենը մեկ տասներորդ մասը։ Ահա ծիւերի թվի, բնակչության քանակի և նադելային հողերի բաշխման տոկոսային հարաբերությունները.

* *SL'» Сочинения, 4. III: лист.*

Ծ Խ Ե Ր Ի Խ Ա Մ Բ Ե Ր Ը		Տոկոսներ հանրագումարի համեմատ.		
	Ծխերի	յերկնեռ բնակ.	Հողաբաժնի	
Հող չմշակողներ	10,2	6,5	5,7	
Մինչև 5 դեռ. մշակողներ	30,3	24,8	22,6	
> 5—10 >	27,0	26,7	26,0	
> 10—20 >	22,4	27,3	28,3	
> 20—50 >	9,4	13,5	15,5	
> 50-ից ավելի >	0,7	1,2	1,9	
Ընդամենը	100,0	100,0	100,0	

Այս թվերից պարզ յերևում է, վոր նադելային հողերի բաշխման հարաբերականությունն ակներեւ է, վոր համայնական հավասարաբության հետևանքը մենք հաշվի յենք առնում: Բնակչության տորոսային մասերն ըստ խմբերի և նադելային հողերի տորոսային մասերն ըստ խմբերի բավականաչափ մոտ են իրար: Բայց այստեղ ևս արդեն սկսում ե արտահայտվել առանձին ծխերի տնտեսական կարողության ազդեցությունը. ստորին խմբերի հողաբաժնի տոկոսը ֆիշ ե բնակչության տոկոսից, իսկ բարձր խմբերում՝ շատ: Յեվ այս յերեսույթը յեղակի չե, միայն մեկ դավանի չի վերաբերում, այլ ընդհանուր ե ամբողջ Ռուսաստանի համար: Հեշտառակված աշխատության մեջ իմ կողմից նույնատեսակ տվյալներ են ամփոփված Ռուսաստանի զանազան մասերի 7 նահանգի 21 դավանի վերաբերյալ: Կես միլիոն դյուզացիական ծուխ ընդլրկող այլ տվյալներն ամենուրեք նույն հարաբերությունն են ցուցաբերում: Թվով 20% կազմող ունենոր ծխերն ընդլրկում են բնակչության 26,1%-ից մինչև 30,3%-ը և նադելային հողերի 29,0%-ից մինչև 36,7%-ը: Թվով 50% կազմող չքաշոր ծխերը բնակչության 36,6%-ից մինչև 44,7%-ը և նադելային հողերի 33%-ից մինչև 37,7%-ն են ընդլրկում: Նադելային հողերի բաշխման հարաբերականություն ամենուրեք կա, և միաժամանակ ամենուրեք դրսերպիւմ ե այն, վոր համայնքը քեֆվում ե դյուզացիական բուրժուազիայի կողմը. հարաբերականությունից դուրս յեկող բոլոր շեղումներն ամենուրեք կատարվում են դյուզացիության բարձր խմբերի ողտին:

Այսպիսով մեծ սխալ կլիներ մտածել, վոր ուսումնասիրելով դյուզացիության խմբավորումներն ըստ տնտեսական կարողության, մենք աչքի չենք առնում համայնքի «հայասարարական» աղբեցությունը: Ճիշտ հակառակը. ստույդ տվյալների միջոցով մենք հաշվի յենք առնում այդ հավասարարության իրական տնտեսական նշանակությունը: Մենք հատկապես ցույց ենք տա-

լիս, թե վորքան ե ծավալվում այդ հավասարարությունը և վերջինքու ուր ե տանում հողաբաժանության ամբողջ սխամեմը: Թողլ այդ սխամեմը հողերի տարբեր վորակի ու տարբեր տեսքերի լավագույն բաշխումը տա, բայց անհերքելի յե այն փաստը, վոր դյուզացիության ունենոր խմբերի գերակշռությունը չքավորների հանդեպ յերեան ե դայիս նաև նադելային հողերի բաշխման գործում: Մասաց՝ վոչնադելային հողերի բաշխումը, ինչպես այժմ կտեսնենք, անհամեմատ ավելի անհամաչափ է:

Հողի վարձակալության նշանակությունը գյուղացիական տնտեսության մեջ հայտնի յե: Հողի կարիքն առաջ ե բերում սարկական հարաբերությունների արտասովոր բազմազան ձեւեր այդ հողի վրա: Ամենուրեք և միշտ, ինչպես արդեն ասացինք վերեւում, գյուղացիների կողմից հող վարձու վերցնելն ըստ եյության հանդիսանում ե կարգածատիրական տնտեսության աշխատավայրին սիստեմ, —աղայի համար բանվոր ձեռք բերելու ձորատիրական միջոց ե հանդիսանում: Այսպիսով կասկածից դուրս ե, վոր մեր գյուղացիական վարձակալությունը ձորատիրական նշանակություն ունի: Բայց քանի վոր տվյալ յերկրի կապիտալիստական եվլուցիան ունենք աչքի առաջ, մենք պետք ե հատկապես ուսումնասիրենք, թե ինչպես են արտահայտվում և արտահայտվում են արդյոք բուրժուական հարաբերությունները դյուզացիական վարձակալության մեջ: Մը համար ես անհրաժեշտ են տվյալներ գյուղացիության տարբեր տնտեսական խմբերի և վոչ թե ամբողջ համայնքների ու գյուղերի մասին: Որինակ՝ «Զեմստվային վիճակագրության ամփոփումների» մեջ պ. կարիշեվը հարկադրված եր ընդունել, վոր իբրև ընդհանուր կանոն հողի բնավարար վարձակալությունը (այսինքն՝ վոչ թե փողով, այլ կիսրար կամ աշխատավճարային վարձակալությունն) ամենուրեք թանդ ե դրամականից, ըստվորում այդ թանդությունն զգալի, յերբեմն կրկնակի յե. հետո բնավճար վարձակալությունն ամենից ուժեղ զարգացած ե գյուղացիության ծայրահեղ չքալոր խմբերում: Քիչ թե շատ ունենոր գյուղացիներն աշխատության համարական մտածել կարձակալության ուղղության մեջ այդ սխալ կլիներ մտածել: «Վարձակալն ուտվում ե նվազագույն հնարավորությունից անդամ, վորպեսզի վարձագինը մուծի դրամով և այդ միջոցով եժանացնի ուրիշի հողից ոգտվելու արժեքը» (կարիշեվի հիշ. աշխ., եջ 265): ·

Ուրեմն մեր վարձակալության ձորատիրական գծերն իրենց ամբողջ ծանրությամբ ընկնում են ծայրահեղ չքավոր գյուղացի-

ների ուսերին։ Ունկորներն աշխատում են ազատվել միջնադարյան լծից և այդ հաջողվում ե սոսկ այնչափով, վորչափով նրանք գրամական անհրաժեշտ միջոցներ են ունենում։ Դրամ ունես, հողը կարող ես վերցնել կանխիկ վճարով՝ շուկայի սովորական գներով։ Դրամ չունես, սորկացումն ես հանձն առնում, Հողի համար վճարում ես յեռապատիկ ավելի՝ կիսրարության կամ աշխատավճարումների ձևով։ Վերևում տեսանք, թե աշխատանքի աշխատավճարային գները քանի գնում ցածր են ազատվածուր գներից։ Իսկ յեթե տարբեր կարողության տեր դյուզացիների համար վարձակալության պայմանները տարբեր են, ապա պարզ է, վոր մենք դյուզացիներին ըստ հողաբաժնի խմբավորելով սահմանափակվել չենք կարող (ինչպես շարունակ անում ե Կարիշելը), վորովհետեւ այսպիսի խմբավորումն արիեստականորին իրար ե միացնում տարբեր կարողության տեր ծխերին, չփոթում ե գյուղական պրոլետարիատը գյուղացիական բուրժուազիայի հետ։

Իլյուստրացիայի համար վերցնենք Սարատովի նահանգի կամիչինի գավառին վերաբերող տվյալները։ Այս նահանգում համայնքը գրեթե համատարած ե (2455 հասարակությունից 2436-ի հողատիրությունը համայնական ե)։ Ահա թե ինչ հարաբերություն կա այսեղ տարբեր խմբերի միջև ըստ հողի վարձակալության։

Բաժնեհողային մեկ ծխին ընկանում և (գեսատիններով)			
Տնատերի խմբերը	Ծխերի %	Բաժնեհող Վարձակալած հոր	
Բանող անասուն չունեցող	26,4	5,4	0,3
1 գլուխ անասուն ունեցող	20,3	6,5	1,6
2 » » »	14,6	8,5	3,5
3 » » »	9,3	10,1	5,6
4 » » »	8,3	12,5	7,4
5 և ավելի » » »	21,1	16,1	16,6
Բնդամենը	100,0	9,3	5,4

Նաղելային հողի բաշխումն արդեն ծանոթ ե մեզ. ունեոր ծխերն ըստ չնչերի թվի ավելի լավ են ապահովված նրանով, քան չքալորները։ Վարձակալության բաշխումը տասնայատիկ ավելի անհամաչափ է գուրս դալիս։ Բարձր խմբում նաղելային հողը յեռապատիկ ավելի յէ, քան ցածր խմբում (16,1 ընդում

5,4-ի). Վարձակալած հողը բարձր խմբում եխուն անգամ ավելի յէ, քան ցածր խմբում (16,6 ընդում 0,3-ի)։ Հետեւաբար վարձակալությունը վոչ թե հարթում է տարբերությունները դյուզացիների մեջ ըստ տնտեսական կարողության, այլ միջանի տասնյակ անդամ ուժեղացնում, սրում և այդպիսիները։ Նարողնիկանտեսագետների (Վ. Վ., Ն. Պ., Մարես, Կարիչել, Վիխլայել և ուրիշներ) կողմից շարունակ կրկնվող հակառակ յեղակացությունը հիմնված է հետեւյալ սխալի վրա։ Սովորաբար դյուզացիների խմբավորումները վերցնում են ըստ նաղելի և ցույց են տալիս, վոր քիչ նաղել ունեցողներն ավելի յէն վարձակալում, քան շատ նաղել ունեցողները։ Այսուղեւ կանգ են առնում, [առանց ցույց տալու], վոր հողը գերազանցորեն վարձու վերցնում են սակավաճող համայնքների ունեօր ծխերը և վոր այդ իսկ պատճառով համայնքների ստերիությունը հավասարառությունը միայն սքոլում և բաշխման մեծապույն անհամաչափությունը համայնքների ներսում։ Կարիշելն ինքը, որինակ, ընդունում է, վոր ամեծ վարձակալություններից ուղարկում են ա) հողով պակաս ապահովված կարգերը, բայց բ) նրանց միջի ավելի ապահովված խմբերը» (Հիշատ. յերկի հջ 139)։ բայց և այնպես նա սիստեմատիկաբար չի ուսումնասիրում վարձակալության բաշխումն ըստ խմբերի։

Նարողնիկանտեսագետների այս սխալն ավելի պարզ դարձնելու համար բերենք մի որինակ—պ. Մարեսի («Տերքերի ու հացի գների աղղեցությունը», Հատ. I, էջ 34)։ Մելիսոպոլի դավառին վերաբերյալ տվյալներից նա յեղակացնում է, վոր «Վարձակալության բաշխումն ըստ չնչերի մոտավորապես համաչափ է»։ Ինչո՞ւմն ե բանը։ Բանն այն է, վոր յեթե ծխերը բաժնենք ըստ արական սեռի աշխատողների, այդ դեպքում կատանանք, վոր աշխատողներ չունեցող ծխերը «միջին հաշվով» վարձակալությունը են 1,6-ական դեսյատին՝ յուրաքանչյուր վարձակալությունը ծխին, մեկ աշխատող ունեցող ծխերը՝ 4,4-ական դեսյատին, յերկուս ունեցողները՝ 8,3-ական դես.՝ յերեք ունեցողները՝ 14,0-ական դեսյատին։ Եյականը հենց այն է, վոր այդ «միջինները» տնտեսական չափազանց տարբեր կարողության տեր ծխեր են համարմբում, վոր աշխատող ունեցող ծխերի մեջ, որինակ, կան 4-ական դես. վարձակալող ծխեր և 50—10-ական դես. ցանողներ, ունենալով 2—3 դլուխ բանող անասուն, և ծխեր, վորոնք վարձակալությունը են 38-ական դես.՝ ցանում են 50-ից ավելի դե-

սյատին, ունենալով 4 և ավելի գլուխ բանող անասուն։ Այսպիսով, ուրիշն, պ. Մարեսի կողմից զուրս բերված հավասարարությունը կեղծ է։ Իրավես Մելիտոպոլի գավառում 20 % կազմող ամենից հարուստ ծխերն իրենց ձեռքում կենարոնացրել են ամբողջ վարձակալված հողերի 66,3 տոկոսը, այսինքն յերկույթերորդական մասը, չնայած նրանք թե բաժնեհողերով և թե դնուի հողերով առավելագույն չափով են ապահովված։ Բնակչության կերպ կազմող ամենից չքայլոր ծխերին մնում են վարձակալված հողերի 3,6 տոկոսը։

Այսուհետեւ, յեթե մի կողմից մենք տեսնում ենք մեկ գեսայտինի կամ անդամ նրա մի մասի վարձակալություն ծխաղութիւն կամ մեկ ձի ունեցող ծխնրի մոտ, իսկ մյուս կողմից՝ 7—16 դեռ. վարձակալություն 4 և ավելի թվով ձի ունեցողների մոտ, մեզ համար պարզ է բանում, վոր այստեղ քանակը վորակի յև փոխվում։ Առաջին վարձակալությունը կարիքից գրելված վարձակալությունն են, սորեկացուցիչ վարձակալությունն են։ Նման պայմանների մեջ ընկած «վարձակալը» չի կարող շահագործության դործիք չգառնալ՝ աշխատավճարումների, ձմեռային վարձումնի, դրամական փոխատվության միջոցով և այլն։ Ընդհակառակը՝ 12—16 դեռ. հողարաժին ունեցող և բացի այդ 7—16-ական դեռ. վարձակալով ծուխը պարզապես հող և վարձակալում վոչ թե կարիքից դրդված, այլ հարստանալու, «փող գատելու» համար։ Այսուղ մենք ակներեն կերպով տեսնում ենք, վոր վարձակալությունը վերափոխված է կապիտալիտական ֆերմերության, սկզբին և անում ձեռնարկութականությունը յերկրագործության մեջ։ Նման ծխերը, ինչպես ներքեւում կտևնենք, առանց յերկրագործական բանվորներ վարձելու չեն կարող կառավարվել։

Այժմ հարց ե առաջ գալիս, թե վորքան ընդհանուր յերեսությունը և ակներեն ձեռնարկողական այս վարձակալությունը։ Ներքեւում ցուցմունք կբերենք այն մասին, վոր առևտրական յերկրագործության տարբեր շրջաններում ձեռնարկողական տնտեսության աճումը տարբեր ձեռերով և արտահայտվում։ Իսկ այժմ բերենք ելի միքանի որինակ և ընդհանուր յեղբակացություն տանք վարձակալության մասին։

Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի գավառում 25 և ավելի դեսպանին ցանող ծխերը կազմում են ընդհանուր թվի 18,2%-ը։ Նրանք 16—17-ական դեռ. նաղելային հող ունեն յուրաքանչյուր ծխին և 17—44-ական դեռ. վարձակալում են։ Մաժարայի նա-

հանդի նովուպենսկի գավառում 5 և ավելի զլուխ բանող անառուն ունեցող ծխերը կազմում են ընդհանուր թվի 24,7%-ը։ Սրանք ցանում են 25—53—149-ական դեսպանին յուրաքանչյուր ծուխը, վարձակալելով վոչնաղելային հողեր՝ 14—54—342-ական դեսպանին ծխին (առաջին թիվը վերաբերում է 5—10 գլուխ բանող անառուն ունեցողների խմբին ծխերի 17,1%-ը, յերկրորդը՝ 10—20 գլուխ՝ ծխերի 5,8% և յերրորդը՝ 20 և ավելի զլուխ ունեցողներին՝ ծխերի 1,8%)։ Սրանք վարձակալում են ուրիշ հասարակություններին նաղելային հողերից՝ 12—29—67-ական դեսպանին և իրենց հասարակության մեջ 9—21—74-ական դեսպանին։ Գերմի նահանգի կրամնոուֆիմսկի գավառում 20 և ավելի դեսպանին մշակում և ծխերի ընդհանուր թվի 10,1%-ը։ Նրանք ծխին ունեն 28—44-ական դեսպանին նաղելային հող և վարձակալում են 14—40-ական դեսպանին վարելահող ու 118—261-ական դեռ. խոտհարք։ Որյովի նահանգի յերկու գավառում (Յելեցկի և Տրուչչիվսկի) 4 և ավելի ձի ունեցող ծխերը կազմում են ընդհանուր թվի 7,2%-ը։ Ռւնենալով 15,2-ական դեսպանին հողարաժին, նրանք զնած հողերի ու վարձակալության միջոցով իրենց հողողագործությունը հասցնում են մինչև 28,4 դեսպանինի։ Վարոննեժի նահանգի Զաղոնսկի գավառում համապատասխան թվերը հետեւյան են. ծխերի 3,2%-ին ընկնում և 17,1-ական դեսպանին հողարաժին և 33,2-ական դեռ. ընդհանուր հողողագործություն։ Ն Ենովկուրդի նահանգի յերեք գավառում (Կնյացինինսկի, Մակարյանսկի և Վասիլիսկի) 3 և ավելի ձի ունեցողները ծխերի 9,5% են կազմում։ Նրանց ծխին ընկնում և 13—16-ական դեռ. հողարաժին և 21—34-ական դեռ. ընդհանուր հողողագործություն։

Այստեղից յերեսում են, վոր գյուղացիության մեջ ձեռնարկուղական վարձակալությունը յեղակի և պատահական յերեսությունը չեն, այլ ընդհանուր են ամեն տեղ տարածված։ Ամենուրեք համայնքից զատկում են միշտ աննշան փոքրամասնություն կազմող ունենոր ծխեր, վորոնք և միշտ ձեռնարկողական վարձակալության միջոցով կապիտալիտական յերկրագործություն են կապմակերպում։ Այս իսկ պատճառով պարենային ու կապիտալիտական վարձակալության մասին ասված ընդհանուր ֆրազներով գոչինչ չի կարելի պարզել մեր դյուղացիական տնտեսության հարցերից։ Անհրաժեշտ ու ուսումնասիրել ճորտատիրական գծերի վարդաշման կոնկրետ տվյալները վարձակալության մեջ և կա-

սլիտալիստական հարաբերությունների գոյացումը նույնի այլ վարձակալության մեջ:

Վերևում մենք տվյալներ բերենք, թե 20% կազմող ամենից ունեոր ծխերը բնակչության ու բաժնեհողերի վոր մասն են կենտրոնացնում իրենց ձեռքում: Այժմ կարող ենք ավելացնել, վոր նրանք կենտրոնացնում են դյուզացիության կողմից վարձակալվող հողերի 50,8%-83,7%-ը, ծխերի 50% կազմող սորբին խմբերին բաժին թողնելով բոլոր վարձակալվող հողերի 5%-16%-ը: Այստեղից պարզ է յեղբակացությունը. յեթե մեղ հարցնեն, թե Ռուսաստանում վարձակալության վոր մեն և գերիշում՝ պարենայինը, թե ձեռնարկողականը, կարիքից դըրդվածների, թե ունեոր գյուղացիների վարձակալությունը, ճորտատիրականը (աշխատավճարային, ստրկացուցիչ), թե բուրժուականը՝—ապա միայն մեկ պատասխան կարող ե լինել: Բայ վարձակալվող ծխերի թվի, անշուշտ, վարձակալողների մեծամասնությունը հողը վարձակալում ե կարիքից դրդված: Գյուղացիների ահագին մեծամասնության համար վարձակալությունը սորբություն է: Բայ վարձակալվող հողի քանակի, անշուշտ կեսից վոչ պակասը գտնվում է ունեոր գյուղացիության՝ դյուզական բուրժուագիտի ձեռքին, վորը կապիտալիստական յերկրագործություն է կազմակերպում:

Սովորաբար հողի վարձակնի վերաբերյալ տվյալները բերվում են միայն «միջին թվերով»՝ բոլոր վարձակալների համար և ամբողջ հողի նկատմամբ: Թե ինչ աստիճանի այդ միջինները գրանցարդում են դյուզացիների անշափ կարիքն ու հարստահարությունը, յերեսում և Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի դափառի գեմատվային վիճակադրության տվյալներից, վորտեղ իրեն յերջանիկ բացառություն վարձակալության դները բերված են դյուզացիության տարրեր խմբերի վերաբերյալ.

	Վարձակալող Մեկ դեռ. գիշաբակալող 1 ծխերի վարե-նը (սուբ-ծխերի % լանողը (դեռ.) լիներով)	Մեկ դեռ. ցանողների մոտ 25	2,4	15,25
Միջին 5 դեռ. ցանողների մոտ				
» 5-10 »	» 42	3,9	12,0	
» 10-25 »	» 69	8,5	4,75	
» 25-50 »	» 88	20,0	3,75	
» 50-ից ավելի »	» 91	48,6	3,55	
Ընդամենը	56,2	12,4	4,23	

Այսպիսով մեկ դեռ աստիճի 4 ո. 23 կ. «միջին» վարձակինն

ուղղակի աղավաղում և իրականությունը և ի չեք և դարձնում այն հակասությունները, վորոնք գործի հենց եյությունն են կազմում: Զքավորությունն ստիպված և վարձակալել միջինից ավելի քան յեռապատիկ բարձր՝ ավերիչ դնով: Հարուստները հողը դնում են ձեռնտու, «մեծաքանակ» և, իհարկե, հարմար դեպքում կարիքավոր հարևանին են տալիս 275% վաստակով: Վարձակալություն ել կա, վարձակալություն ել: Կա ճորտատիրական ստրկացում, կա իռանդական վարձակալություն և կա հողի առևտուր՝ կապիտալիստական ֆերմերություն:

Գյուղացիների հողմից նադելային հողը վարձակալության տալու այսպիսի յերեսույթն ել ավելի ակներև ցույց և տալիս կապիտալիստական հարաբերությունները համայնքի ներսում, չքավորության քայլքայումը և փոքրամասնության հարստանալն այդ քայլքայվող մասսաների հաշվին: Հողը վարձակալելն ու տալն այնպիսի յերեսույթներ են, վորոնք ամեններին առնչություն չունեն համայնքի և նրա հավասարարության հետ: Իրականում ի՞նչ նշանակություն կարող է ունենալ նադելային հողերի բաշխման այդ հավասարարությունը, յերբ չքավորությունն ստիպված է հարուստներին հանձնելու հավասարար իրեն տրված հողը: Անկարելի յե պատկերացնել «համայնականության» հայացքների ավելի ակնառու հերքումն, քան նադելների պաշտոնական, դյուդմատյանին, կազմոնի հավասարարությունն անսենելու, խախտելու այդ փաստն է կյանքի կողմից: Զարգացող կապիտալիզմի հանդես ամեն տեսակ հավասարարության անդորրությունն ակնհայտնի կերպով ապացուցվում է չքավորների կողմից նադելային հողերը վարձակալության տալու և վարձակալությունը հարուստների ձեռքում կենտրոնացնելու փաստով:

Վո՞րքան լայն և տարածված նադելային հողերը վարձակալության տալու այս յերեսույթը: Զեմստվային վիճակադրության անցած դարի 80-ական թվականներին կատարած հետազոտությունների համաձայն, վորոնք այժմ արդեն հնացած են և վորոնցով առայժմ ստիպված ենք սահմանափակվել, հողը վարձակալության տվյալ ծխերի թվերը և վարձակալության տրվող նադելային հողերի տոկոսը մեծ չեն յերեսում: Որինակ՝ Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի գավառում նադելային հողը վարձակալության տալիս 25,7%-ը, վարձակալության տրվող նադելային հողը կազմում է 14,9%: Սամարայի նահանգի նովոռոդնուկի գավառում ծխերի 12%-ը վարձակալության և տա-

լին հողը: Սարատովի նահանգի կամիչինի զավառում վարձակալաւթյան տրվող հողը կազմում է 16%: Պերմի նահանգի կրասնոսուֆիմսկի զավառում՝ 23½ հազար տնտեսատերից 8½ հազարը կամ մեկ յերրորդից ավելին նադելային վարելահողը վարձակալաւթյան ետալիս. 410 հազար դես. նադելային հողից վարձու յետրվում 50½ հազարը, այսինքն՝ մոտ 12%-ը: Վորոնեժի նահանգի Զալոնսկի զավառում 136½ հազար դես. նադելային հողից 6½ հազարը, այսինքն՝ 5%-ից պակասն է վարձակալության տրվում: Նույնիւրոդի նահանգի յերեք զավառում 433 հազարից՝ 19 հազար դես., այսինքն՝ դարձյալ 5%-ից պակաս: Սակայն այս բոլոր թվերն աննշան են միայն յերեսում, զորովհետեւ տոկոսային նման հարաբերություններն այն լուս յենթալրությունն են բովանդակում, վոր իր թե բոլոր խմբերի տնտեսատերերը հողերը վարձակալության են տալիս ավելի կամ սրակառ համաշափությամբ: Իսկ այսպիսի յենթադրությունն իրականությանն ուղղակի հակադիր է: Հողը վարձակալելու և վարձակալության տալու բացարձակ թվերից և վարձակալության տրվող հողի կամ հողը վարձակալության տվող տնտեսատերերի միջին տոկոսներից շատ ավելի կարեոր և այն փաստը, վոր գլխավորապես հողը վարձակալության և տալիս չքավորությունը, իսկ հողի մեծագույն մասը վարձակալում են ունենողները: Զեմստվային վիճակադրական հետազոտությունների տվյալները կասկածի հետք անդամ չեն թողնում այս տոթիվ: 20% կազմող առավել ունեոր ծխերին ընկնում և վարձակալության տրվող ամբողջ հողի 0,3%-12,5%, ընդհակառակը՝ 50% կազմող ստորին խմբերի ծխերին ընկնում և ամբողջ վարձակալության տրվող հողի 63,3%-98%-ը: Յեկ չքավորների կողմից վարձակալության տրվող այդ հողի ծխերը վարձակալում են, իհարկե, նույն ունեոր դյուլացիները: Այսուղ դարձյալ պարզ է, վոր հողը վարձակալության տալը դյուլացիության զանազան խմբերի համար տարբեր նշանակություն ունի: Զքավորությունը հողը վարձակալության և տալիս կարիքից դրդված՝ հնարավորություն չունենալով հողը մշակել, չունենալով սերմացու, անասուն, ինվենտար, ունենալով հողի ծայրահեղ կարիք: Հարուստները քիչ են վարձակալության տալիս հողը և այդ անում են կամ մի հողամասը տնտեսության շահերի տեսակետից մի ուրիշ հողամասի հետ փոխանակելով և կամ ուղղակի հողի առետուր անելով:

Ահա Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի զավառին վերաբերող կոնկրետ տվյալները.

Նադելային հողը վարձակալության տրվող առաջարկակալության մակարդակը	Հակառակ հողը վարձակալության մակարդակը
5	50
5-10	30
10-25	23
25-50	16
50-ից ավելի	7
	13,8
Գավառում	25,7
	14,9

Մի՞թե այս տվյալներից պարզ չեն, վոր հողը դժեն ուղրուեարացումը վիթխարի չափերով զուգորդվում է այսուհետ հարուստների աննշան խմբակի կողմից տարվող՝ հողի առեւտի հետ: Մի՞թե բնորոշ չեն, վոր վարձակալության տրվող նադելային հողերի տոկոսը բարձրանում է հենց այն խոշոր ցանքաբարների մոտ, զորոնք ունեն 17-ական դես. նադելային հող, 30-ական դես. դնած հող և 44-ական դես. վարձակալած հող՝ յուրաքանչյուր ծխին: Բնդհանուր առմամբ Դնեպրովսկի դավառի ամբողջ չքավոր խումբը, այսինքն՝ ծխերի 40%-ը, ունենալով 56 հազար դես. նադելային հող, վարձակալում է 8 հազար դես. և հազար դես. նույնական հողը վարձակալության և տալիս 21½ հազար դեսյատին: Իսկ ունեոր վարձակալության և տալիս ծխերի 18,4%, ունի 62 հազար դես. նադելային հող, վարձակալության և տալիս 3 հազար դես. նադելային հող և վարձակալում է 82 հազար դեսյատին: Տավրիկյան նադելային հողերի յերեք զավառում այդ ունեոր խումբը վարձակալում է 150 հազար դեսյատին նադելային հող, այսինքն վարձակալության տրվող նադելային ծխերի յերեք հինգերորդը: Սամարայի նահանգի նադելային ուղարկությունը մասին: Տավրիկյան մասին մեջ կան նորտատիբական գծեր, վոր վարձակալության մեջ կան նորտատիբական գծեր: Վարձակալության մեջ կան նորտատիբական գծերի 13%-ը նադելային հողերը վարձակալության և այդ գծերի 7,6%-ը, 20-30-60-70-ական դեսյատին նադելային հող են վարձակալում:

Գնովի հողի վերաբերյալ դրեթե նույնը պիտի ասենք, ինչ ասացինք վարձակալության մասին: Տավրիկյան այն է, վոր վարձակալության մեջ կան նորտատիբական գծեր, վոր վարձակալությունը վորոշ պայմաններում լինում է աշխատավճարային ու ստրկացուցիչ, այսինքն՝ միջոց է հանդիսանում հարևան աղքատացած գյուղացիների թվից բանվորական ձեռքեր ամբացների կալվածատիբական տնտեսությանը: Իսկ նադելային հող

ունեցող գյուղացիների կողմից հողն իրեն իր մասնավոր սեփականություն գնելը զուտ-բուրժուական յերեռյթ է: Արևմուտքում յերեմն բարակներին և որամշակներին հողի հետ են կապում՝ նրանց մանր հողամասեր ծախելու միջոցով: Մեղ մոտ՝ Ռուսաստանում նույնանման զործողություն կազյոննի ձևով վաղուց ե կատարվել ի դեմս 1861 թվի «մեծ ռեֆորմ» և այժմ գյուղացիների կողմից հող գնելը բացառապես դժուռում և գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչների համայնքից զատվելը: Հողատիրությանը վերաբերող տվյալների քննության ժամանակ մենք վերեւում ասացինք, թե ինչպես եր զարդանում հողերի գնումը գյուղացիների կողմից 1861 թվից հետո: Իսկ այստեղ պետք ե ցույց տանք զնովի հողերի ահաղին կենտրոնացումը փոքրամասնության ձեռքում: 20% կազմող ուներ ծխերի ձեռքին կուտակված և դնած հողերի 59,7%-99%-ը, իսկ 50% կազմող ամենաչքավոր ծխերի ձեռքին՝ գյուղացիների կողմից գընված հողերի ամբողջ քանակի 0,4%-15,4%-ը: Այս իսկ պատճառով համարձակորեն կարող ենք պնդել, վոր գյուղացիների կողմից 1877 թվից մինչև 1905 թիվն իրեն անհատական սեփականություն ձեռք բերված $7\frac{1}{2}$ միլ. դեսյատին հողի (տես վերևում) $\frac{2}{3}$ -ից մինչև $\frac{3}{4}$ -ը գտնվում է ուներ ծխերի անշան փոքրամասնության ձեռքում: Նույնը վերաբերում է, իհարկե, գյուղացիական հասարակությունների և ընկերությունների կողմից կատարված հողի գնումներին: Գյուղացիական հասարակությունները 1877 թվին ունեյին 765 հազար դեսյատին գնովի հող, իսկ 1905 թվին՝ արդեն 3,7 միլ. դեսյատին, իսկ գյուղացիական ընկերությունները 1905 թվին, իրեն մասնավոր սեփականություն, ունեյին 7,6 միլ. դես. Հող: Սիալ կլիներ մտածել, թե հասարակությունների կողմից զնովող կամ վարձակարվող հողերն այլ կերպ են բաշխվում, քան անհատական զնման կամ վարձակալության ժամանակ: Փաստերը հակառակն են ասում: Որինակ՝ Տավրիկյան նահանգի մայր ցամաքի վրա գտնվող յերեք գավառում տվյալներ եյին հավաքված գյուղացիների հասարակությունների կողմից գանձող վարձակարվող հողերն այլ կերպ են բաշխվում, քան անհատական զնման կամ վարձակալության ժամանակ: Փաստերը հակառակն են ասում: Որինակ՝ Տավրիկյան նահանգի մայր ցամաքի վրա գտնվող յերեք գավառում տվյալներ եյին հավաքված գյուղացիների հասարակությունների կողմից գանձարանից վարձակարվող հողերի բաշխման վերաբերյալ, ըստվորում յերեաց, վոր վարձակալած հողի 76%-ը գտնվում է ուներ խմբի (ծխերի մոտ 20%) ձեռքին, իսկ 40% կազմող չքամոր ծխերին ընկնում է վարձակարված ամբողջ հողի միայն 4%-ը: Գյուղացիները վարձակարվող կամ զնվող հողերն այլ կերպ չեն բաշխում, բայց յեթե «ըստ վողի»:

IV.

Բաժնային, վարձակալական, զնովի և վարձակալության արվող գյուղացիական հողի մասին վերեւում հիշատակված տվյալների գումարն այն յեղբակացության և բերում, վոր գյուղացիության իրական հոգովագրծությունը որեցոր ավելի ու ավելի քիչ և համապատասխանում գյուղացիության պաշտոնական, կազյոննի բաժնային հողատիրությանը: Իհարկե, յեթե վերցնենք համախառն թվերը կամ «միջին» մեծությունները, այդ գեղքում վարձակալության տրված նադելային հողը կմարզի վարձակալությամբ, մնացած վարձակալությունն ու զնովի հողը վորպես թե հավասարաբար կրաշխավեն ծխերի ամբողջ զանդվածի մեջ, և այն տպավորություննը կատացվի, թե իրական հողովագործությունն այնքան ել եյալես չի տարբերվում կազյոննի, այսինքն նադելային հողովագործությունից: Սակայն այսպիսի տպավորություննը խարսխիկ կլինի, վորովհետև գյուղացիների իրական հողովագործությունը բաժնեհողի մկրնական հավաքական հողովագործությունը բաժնեհողի ամբողջ շեղում և հատկապես ծայրաբերի խմբերում, այնպես վոր «միջիններով» ողտվելու դեպքում դորձն անխուսափելուն աղճատվում է:

Իրավես ստորին խմբերում գյուղացիների ամբողջ հողովագործություննը համեմատաբար, իսկ յերեմն նաև բայցարձակութեն, պակաս և նրանց նադելային հողատիրությունից (հողը վարձակալության տալ վարձակալման չնչին մասը): Իսկ բարձր խմբերում գնովի ու վարձակալած հողերի կենտրոնացման չնորոշիկ ամբողջ հողովագործությունը և՛ համեմատաբար, և՛ բայցարձակորեն միշտ ամենի բարձր և բաժնային հողատիրությունից: Մենք տեսանք, վոր ծխերի 50% կազմող ամենաչքավոր խմբերի ձեռքին գտնվում է նադելային հողերի 33%-ից մինչև 37%, իսկ ամբողջ հողովագործության՝ 18,6%-31,9%: Միքանի գեղքում նվազումը գրեթե կրկնակի յի որինակ՝ Պերսի նահանգի կրասնոուֆիմսկի գավառում նադելային հողի՝ 37,4% և ամբողջ հողովագործության՝ 19,2%: Ծխերի 20% կազմող ուներների ձեռքին գտնվում է նադելային հողի 29-36%, իսկ ամբողջ հողովագործության 34-49%: Ահա այս հարաբերությունների իլյուստրացիայի համար միքանի կոնկրետ ավալները: Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի գավառում 40% կազմող ամենից չքամոր ծխերն ունեն 56 հազար դեսյատին նադելային հող, իսկ նրանց ամբողջ հողովագործությունը 45 հազար դեսյատին

ե, այսինքն 11 հազար դեսյատինով պակաս։ Ունեոր խումբը (ծխաբի 18%) ունի 62 հազար դեսյատին նաղելացին հող, իսկ նրա ամբողջ հողակտակառությունը՝ 167 հազար դեսյատին ե, այսինքն՝ 105 հազար դեսյատինով ավելի։ Ահա Նիմնի-Նովգորո-դի նահանգի յերեք դաշտանի տվյալները։

Մեկ ծխէն ընկնում և (դեսատին) նաղելային հող ամբողջ հոգովառ-դաբութ.

<i>Զիտուրկներ</i>	5,1	4,4
1 <i>Ճի</i> <i>ունեցողներ</i>	8,1	9,4
2 > >	10,5	13,8
3 > >	13,2	21,0
<i>4 և այլն</i> >	16,4	34,6
<i>Բնումաններ</i>	8,3	10,3

Այստեղ ևս ամենից ստորին խմբում հողովապործությունը բացարձակապես պակասել է, չնորհիվ վարձակալելու և վարձակալության տալու: Խսկ այդ ստորին խումբը, այսինքն՝ ձիազուրկները, ծխերի ամբողջ 30% են կազմում: Ծխերի համարյամեկ յերրորդը վարձակալելուց ու վարձակալության տալուց իացարձակ կորցնում է: Մնկ ձի ունեցողները (ծխերի 37%) իրենց հողովագործությունն ավելացրել են, բայց չափազանց աննշան չափով և ավելի պակաս հարաբերությամբ, քան զյուզացիական հողովագործության միջին ավելացումն է (8,3 գեսայտինից մինչև 10,3 դես.): Այս խսկ պատճառով ընդհանուր հողովագործության մեջ այս խմբի քածինը պակասել է. յերեք գավառում այս խումբն ուներ նազելային հողերի 36,6%, իսկ ընդհանուր հողովագործությունը գարձել է 34,1%: Բնդհակատակը՝ բարձր խմբերի աննշան վոքրամանությունն իր հողովագործությունն ավելացրել է միջինից շատ ավելի բարձր չափով: Յերեք ձի ունեցողները (ծխերի 7,3%) հողատիրությունը ավելացրել են մեկ ու կես անգամ՝ 13 դես. մինչև 21 գեսայտին: Բաղմածի ծխերը (ծխերի 2,3%) ավելի քան կրկնակի յեն ավելացրել այն՝ 16 դես. մինչև 35 դեսայտին:

Հետևաբար մենք տեսնում ենք, իբրև ընդհանուր յերկույթ՝ վոր գյուղացիական տնտեսության մեջ նադելային հոգի դերը նվազում է։ Այս նվազումը գույղի յերկու բնակություններում առարեւ ուղիներով է ընթանում։ Զքավորության մոտ նադելային հոգի դերն ընկնում է, վորովհետև աճող կարիքն ու քայլաւումն

ստիպում են նրան վարձակալության տալ, գցել հողը, պակա-
սեցնել հողային տնտեսությունը՝ անսասունի, ինվենտարի, սերմի
և դրամական միջոցների պակասության պատճառով և անցնել կամ
վորեն չնշին վարձու աշխատանքի, կամ... դեպի յերկնային ար-
քայություն։ Գյուղացիության ստորին խմբերը մեռնում են. սո-
վուր, ցինուան ու տիֆն իրենց գործն անում են։ Գյուղացիության
բարձր խմբերում նազելային հողի նշանակությունն ըմբնում է,
վորովհետեւ ընդլայնվող տնտեսությունն ստիպված է նազելային
հողի սահմաններից չատ ու շատ հեռու անցնել, ստիպված է կա-
ռուցվել վոչ թե հարկադիր, այլ ազատ, վոչ թե վաղեմի—տոհ-
մային, այլ չուկայում դմվող նոր հողատիրության վրա՝ գնում
ու վարձակալություն։ Գյուղացիությունը վորքան ավելի հա-
ջուսակ է հողով, վորքան ավելի թույլ են ճորտափրական իրա-
վունքի հետքերը, վորքան ավելի սրբնթաց և տնտեսական դար-
դացումը, նույնքան ավելի ուժեղ է նազելային հողից այդ ազատ-
վելը, ամբողջ հողն առևտրական ըրջանառության մեջ գցելը,
տնտերական յերկրագործություն կառուցելը վարձակալած հողի
վրա։ Այս բանի որինակը նովոսուսիան է։ Մենք հենց նոր տե-
սանք, թե ինչպիս ունենոր գյուղացիությունն այստեղ տնտես-
վարում է ավելի զնովի ու վարձակալած, քան նազելային հո-
ղերի վրա։ Այս պարագոքս և թվում, բայց դա իրաղությունն է.
Ռուսաստանի ամենից հողառատ վայրում, նազելային հողով
ամենից լով ապահովված (ծխին 16—17 դեմ. նազելային հող
ունեցող) ունենոր գյուղացիությունը հողային անտեսության
ծանրության կենտրոնը փոխադրում է նազելային հողից արսա-
նադելային հողի վրա։

Գլուղացիության արագորեն առաջադիմով յերկու բնեմներում նազելացին հողերի դերի նվազելու փաստն, ի միջի այլոց, միթխարի նշանակություն ունի՝ այն աղքարային հեղաշրջման պայմաները զնահատելու համար, վոր XIX դարը կտակել և XX-ին և վորը մեր հեղափոխության մեջ առաջ ե բերել դաստիարակերի կոփիվ: Այդ փաստը պարզորեն ցույց է տալիս, վոր հինգին՝ կարվածատիրական և թիգ գյուղացիական հողատիրության խորակումը տնտեսական անպայման անհրաժեշտություն և դարձել: Այս խորտակումը բացարձակապես անխուսափելի յեւ և վոչ մի ուժ չի կարող արգելել սրան: Պայքարը դնում և այդ խորտակման ձեւի համար, նրա յեղանակների համար, արդյոք խորտակումը պիտի կատարվի սոոլիսինյան ձեռվ՝ կարվածատի-

բական հողատիրությունը պահպանելով և կուլակների կողմից համայնքը կողոպտելով, թե գյուղացիական ձեռվ՝ կարգածատիրական հողատիրությունը վոչնչացնելով և հողի աղջայնացման միջոցով միջնադարյան բոլոր պատվարները վերացնելով հողի վրա: Բայց այս մասին ավելի մանրամասնորեն պիտի խոսենք ներքեւում: Իսկ այստեղ անհրաժեշտ ե մատնանշել այն կարեոր յերեսությը, վոր նադելային հողերի գերի նվազումը տուրքերի ու պարհակների չափազանց անհամաչափ բաշխումն և առաջացնում:

Հայտնի յէ, վար ոռոսական գյուղացուց դանձվող տուրքերն ու պարհակներն իրենց վրա կը ում են միջնադարի վիթխալի հետքերը: Այստեղ մենք չենք կարող մտնել այն մանրամասնությունների մեջ, վորոնք Ռուսաստանի Փենանսական պատմությանն են վերաբերում: Բավական ե մատնանշել փրկարինը՝ միջնադարյան բահրայի այս ուղղակի շարունակությունը, ճորտատեր-կալվածատերին վճարվող այս տուրքը, վորը դանձվում եր վոստիկանական պետության ողնությամբ: Բավական ե հիշել աղնվատիրական ու գյուղացիական հողերի հարկման անհամաչափությունը, բնապարհակները և այլն: Մենք կերենք տուրքերի ու պարհակների միայն ընդհանուր գումարները, ըստ գյուղացիական բյուջեների վորոնեժյան վիճակադրության տվյալների: Գյուղացիական ընտանիքի միջին ընդհանուր տվյալների համար (66 տիպիկ բյուջեների վերաբերող տվյալների համաձայն) հավասար ե 491 ոռուք. 44 կ., ընդհանուր ծախսը—443 ոռութի: Զուտ յեկամուտը 48 ո. 44 կ.: Իսկ «միջին» ծխի վրա ընկնող տուրքերի և պարհակների դումարն ե 34 ո. 35 կ.: Այսպիսով տուրքերն ու պարհակները զուտ յեկամուտի 70%-ն են կազմում: Իհարկե այս միայն ըստ ձեր յեն տուրքեր, բայց իրապես «կոռի ու բեգանի յենրական դասի» նախկին, ճորտատիրական շահագործությունն ե: Միջին ընտանիքի դրամական զուտ յեկամուտը հավասար ե ընդհանուր 17 ո. 83 կ., այսինքն՝ ոռոսական գյուղացուց դանձվող «տուրքերը» կրկնակի ավելի յեն նրա դրամական զուտ յեկամությունը 1889 և վո՞չ թե 1849 թվի ավյալներով ե:

Սակայն այստեղ ևս միջին թվերը զունազարդում են գյուղացիական կարիքը և գյուղացիության դրությունն իրականից շատ ավելի լավ են ներկայացնում: Տնտեսական տարբեր կարողության տեր գյուղացիների խմբերի միջև տուրքերն ու պարհակները բաշխելու վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, վոր ձիա-

զուրկ և մեկ ձի ունեցող գյուղացու (այսինքն՝ Ռուսաստանի գյուղացիական ընտանիքների ընդհանուր թվի յերեք կինգերորդականի) տուրքերն ու պարհակները շատ ու շատ անդամ գերազանցում են վոչ միայն դրամական զուտ յեկամուտին, այլև ընդհանուր զուտ յեկամուտին: Ահա այդ տվյալները.

Բյուջետային տվյալներ (մեկ տնտեսության ընկնում և՝ սուրբ.)

Նույնը 0/0 0/0-ով

Հնդհանուր յիկամուտ	ծախս	Տուրքեր	և	ծախսի պարհակներ համեմատութ.
ա) Զիադուրկներ	118,10	109,03	15,47	14,19
բ) 1 ձի ունեցողներ	178,12	174,26	17,77	10,20
շ) 2 » »	429,72	379,17	32,02	8,44
դ) 3 » »	752,19	632,86	49,55	7,83
է) 4 » »	987,66	937,30	67,90	7,23
զ) 5 և ավելի » »	1766,79	1593,77	86,34	5,42
	Միջինը	491,44	443,00	34,35
				7,75

Զիադուրկ ու մեկ ձի ունեցող գյուղացիները տուրքերի անվան տակ վճարում են իրենց համախառն ծախսի յոթերորդ ու տասերորդ մասը: Զաղկվ թե ճորտատիրական բահրաներն այսքան բարձր լինելին. կարգածատիրոջ համար ձեռնուու չեր լինի իբրև սեփականություն իրեն պատկանող գյուղացիների մասսայությունը լինել գյուղացիների անվանուակելի քայլայումը: Ինչ վերաբերում ե տուրքերի անյի անխուսափելի քայլայումը: Զեր յեկամուտներն իրենց յեկամաշախությանը, ապա այն վթակարի յեւ ունեուրներն իրենց յեկամուտների հարաբերությամբ յեռակի-կրկնակի քիչ են վճարում: Ինչից ե կախված այս անհամաչափությունը: Նրանից, վոր գյուղացիները տուրքերի գլխավոր մասը բաժանում են ըստ հողի: Գյուղացու համար տուրքերի բաժինը և նադելային հողի բաժինը ձուլվում են մեկ հասկացողության՝ «չունչ» հասկացողության մեջ: Յեկ յեթե մեր բերած որինակի մեջ հաշվենք տարբեր խմբերի 1 գեսայատին նադելային հողի վրա ընկնող տուրքերի և պարհակների գումարը, ապա այսպիսի թվեր կստանանք. ա) 2,6 ո., թ) 2,4 ո., դ) 2,5 ո., դ) 2,6 ո., է) 2,9 ո. և զ) 3,7 ո. ուրբերի: Մենք տեսնում ենք, վոր տուրքերը մատավորապես համաշափ են բաշխվում, բացի ամենից բարձր խմբերից, վորի մոտ հատուկ հարկվող խոչը արդյունաբերական ձեռնարկություններ կան: Ընդհանրապես և ամբողջովին վերցրած նադելային հողերի բաժինն այստեղ ել համապատասխանում ե տուրքերի բաժնին: Այս յերեսությը մեր համայնքի կոռ-բեղառային բնույթի ուղղակի մնացորդն (և ուղղակի ապացույցն) ե: Աշխատավճարային

անտեսության բուն պայմանների համաձայն այս ուրիշ կերպ ել լինել չի կարող. «ազատագրությունից» հետո կարվածատերերը չելին կարող կես դարով ազատովել իրենց սարկական աշխատավորներով հարեան դյուլացիներից, յեթե նույն այդ դյուլացիները կարված չլինելին քաղցած հողաբաժինների հետ, յեթե պարտավորված չլինելին յիսապատիկ թանգ վճարել նրանց համար։ Զպետք ե մոռանալ, վոր Ռուսաստանում XIX դարի վերջին ամենին հազվադեպ չեն այն գեղեցիրը, յերբ դյուլացիներն սովորված են փրկարգվել բաժնենհողից, «վերադիր» տալ նադելից հրաժարվելու համար, այսինքն՝ լրացուցիչ վորոշ գումար վճարել նրան, ով իր վրա յե վերցրել հեռացածի նադելը։ Պ-ն Ժրանկովն, որինակ, նկարագրելով Կոստրոմայի դյուլացիների կենցաղը, «Բանքա сторона» (Կոստրոմա, 1891 թ.) գրքում ասում է, վոր արտագնաց կոստրոմացի «անտեսատերերը հազվագյուտ դեսրերում են ստանում հողի համար տուրքերի վորոշ վոչ մեծ մասը, այլ սովորաբար հողը վարձակալության են տալիս միայն նրա համար, վորապես վարձողները նրա շուրջը ցանկապատեն, իսկ բոլոր տուրքերը վճարում ե ինքը տնտեսատերը»։ «Յարոսլավի նահանգի տեսության» մեջ, վորը լույս ե տեսել 1896 թվին, հանդիպում ենք մի ամբողջ շարք նույնանման ցուցումների, վորոնք վիճայում են, թե արտագնաց բանվորները հարկադրված են հողաբաժնից փրկարգվել։

Իհարկե, դուռտյերկրագործական նահանգներում այսպիսի «հողի իշխանության» չենք հանդիպի։ Բայց նաև նրանց համար մի ուրիշ ձեռով անպարհան ուժի մեջ ե այն յերեսութը, վոր դյուլի յերկու բնեոներում նադելային հողի գերն ընկնում է։ Այս ընդհանուր իրողություն ե։ Յեկ քանի վոր այսպես ե, ուրիշն տուրքերի բաշխումն ըստ նադելային հողերի անխուսափելիորեն առաջ ե բերում հարկման շատ ավելի և ավելի մեծ անհամաշխափություն։ Տնտեսական զարգացումը բոլոր կողմերից ու տարբեր ուղիներով տանում ե գետի այն, վոր փուլ են դալիս հողատիրության միջնադարյան ձեռքը, խորտակվում են դասային պատվարները (նադելային, կարվածատիրական և այլ հողեր), մեկ և մյուս հողատիրության բեկորներից անխոտի՛ դոյանում են տնտեսության նոր ձեռք։ XIX դարին իրեն անպայման պարտադիր խնդիր կտակում ե ավարտել հողատիրության միջնադարյան ձեռքի այս «զտումը»։ Պայքարն այն բանի համար ե զնում, թե այդ «զտումը» պիտի կատարվի հողի

դյուլացիական պետականացման ձեռվ, թե՞ համայնքը կուլակների կողմից արագորեն կողովութելու և կարվածատիրական տընտեսությունը յունկերականի վերածելու ձեռվ։

Դյուլացիական տնտեսության ժամանակակից կառուցվածքին վերաբերող տվյալների վերլուծությունը շարունակելով, հողի հարցից անցնենք անասնապահության հարցին։ Այսուղե ևս մենք կրկին անգամ պետք ե հավաստենք, վորակ ընդհանուր կանոն, վոր անամունի բաշխումը դյուլացիական տնտեսությունների միջնե շատ ավելի անհամաշխափ ե, քան նադելային հողերի բաշխումն ե։ Ահա, որինակ, Տավրիկյան նահանգի Դնեպրովսկի գավառի դյուլացիների անասնապահության չափը.

Մեկ ծփին ընկնում ե նադելային հող ընդհանուն անապահության	սուն գույխ
Զանողներ	6,4
Մինչև 5 դեսյատին ցանողներ	5,5
5—10	»
10—25	»
25—50	»
50-ից ավելի »	17,4
Մէջինը	11,2
	7,6

Ծայրաթերի խմբերի միջն տարբերությունն ըստ անասունի թվի տասնապատիկ ավելի յէ, քան ըստ նադելային հողերի քանակի։ Տնտեսության իսկական չափը նաև անասնապահության տվյալների համաձայն շատ քիչ ե նման այն բանին, ինչ սովորաբար ընդունում են, յերբ հողաբաժնի ամեն ինչ վորոշող դերի մասին սահմանափակվում են միջին տվյալներով ու յենթադրություններով։ Վոր գավառներն ել վերցնենք, ամենուրեք անասունների բաշխումը շատ ավելի անհամաշխափ ե, քան նադելային հողերի բաշխումն ե։ Ծիկրի 20% կազմող և նադելային հողերի 29—36% ունեցող ունեսոր ծփերն իրենց ձեռքում կենտրոնացրել են տվյալ գավառի կամ գավառների խմբի գյուլացիության ունեցած անասունների ամբողջ քանակի 37%-ից մինչև 57%։ Յածր խմբերի ծփերին, վոր 50% են կազմում, մնում ե անասունների ամբողջ քանակի 14%-ից մինչև 30%։

Բայց այս տվյալներն իսկական տարբերությունների ամբողջ խորության զնահատականը տալուց զեռ շատ հեռու յեն։ Անասունի քանակին վերաբերող հարցի կողքին վոչ պակաս, իսկ յերեմն նույնիսկ ավելի կարևոր նշանակություն ունի նրա վո-

բակի հարցը: Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր կիսաքայքայ-
գած գյուղացին, վորը խղճուկ տնտեսություն ունի և ամեն
կողմից կաշկանդված և սորկացմամբ, հնարավորություն չունի
ձեռք բերելու և պահելու քիչ թե շատ լավորակ անասուն: Սո-
ված և տերը (վա՛րտեր), սոված և և անասունը, այլ կերպ լինել
ել չի կարող: Վորոնեժի նահանգին վերաբերող բյուջետային
տվյալները չափազանց ակնառու կերպով ցույց են տալիս անաս-
նապահական տնտեսության վողջ վողորմելլությունը ձիազուրկի և
միաձի գյուղացիների մոտ, վորոնք Ռուսաստանի գյուղացիական
տնտեսությունների ամբողջ թվի յերեք հինգերորդ մասն են
կազմում: Գյուղացիների անասնապահական տնտեսությունները
բնութագրելու համար ընտրելով քաղվածք բերենք այդ տվյալ-
ներից.

Տարեկան ծախսերի
միջին չափը (սուբլի)

	1 տնտեսության ընկե- նող անասունների	ինվենտարի	Անասուն-
ա) Զիազուրկներ	0,8	0,08	8,12
բ) 1 ձի ունեցողներ	2,6	5,36	36,70
գ) 2 » »	4,9	8,78	71,21
դ) 3 » »	9,1	9,70	127,03
ե) 4 » »	12,8	30,80	173,24
զ) 5 և ավելի »	19,3	75,80	510,07
Միջինը	5,8	13,14	97,91

Զիազուրկ գյուղացիների քանակը Յելբոլական Ռուսաստա-
նում 1896—1900 թվականներին $3\frac{1}{4}$ միլիոն ծուլս եր: Կարելի յե-
պատկերացնել, թե ինչպես և յերկրագործական «տնտեսության»
գրությունը նրանց մոտ, յերբ կենդանի ու մեռյալ ինվենտարի
վրա տարեկան ծախսվում և ուր կոպեկ: Մեկ ձի ունեցող գյու-
ղացիները $3\frac{1}{2}$ միլիոն ծուլս են: Ինվենտարի և անասունների
լրացման համար տարեկան հինգ սուբլի ծախսելով, սրանք անե-
լանելի կարելի մեջ համբանապես տառապել միայն կարող են:
Նույնիսկ 2 ձի ունեցող ($2\frac{1}{2}$ միլիոն ծուլս) և 3 ձի ունեցող ($1\frac{1}{2}$ մի-
լիոն ծուլս) գյուղացիների մոտ կենդանի ու մեռյալ ինվենտա-
րի վրա կատարվող տարեկան ծախսն ընդամենը 9—10 սուբլի յե:
Միայն յերկու բարձր խմբերում (ամբողջ Ռուսաստանում գյու-
ղացիական այսպիսի տնտեսությունների թիվը 1 միլիոն և՝ գյու-

ղացիական բոլոր տնտեսությունների 11 միլիոնի հանդեպ) կեն-
դանի ու մեռյալ ինվենտարի վրա կատարվող ծախսը գոնե վորոշ
չափով մոտենում և կանոնավոր յերկրագործական տնտեսության
նմանությանը:

Միանդամայն բնական ե, վոր այսպիսի պայմաններում տար-
բեր խմբերի տնտեսությունների մեջ անասունի վորակը միատե-
սակ լինել չի կարող: Մեկ բանող ձիու արժեքն, որինակ, վորոշ-
վում ե՝ մեկ ձի ունեցող գյուղացու մոտ 27 սուբլի, յերկու-
ունեցողի՝ 37 սուբլի, յերեք ունեցողի՝ 61 սուբլի, չորս ունեցո-
ղի՝ 52 սուբլի և շատ ունեցողի մոտ՝ 69 սուբլի: Ծայրաթևե-
րի խմբերի միջև յեղած տարբերությունը 100%-ից բարձր է:
Յեկամ յերկությն ընդհանուր և կապիտալիստական բոլոր յեր-
կըրների համար, վորտեղ մանր ու խոշոր տնտեսություն կա:
«Ագրարն օպրոց» (часть I, Спб. 1908 г.)* գրքում ցույց
եմ տվել, վոր գերբանական յերկրագործության ու անասնապա-
հության ասպարեզում Դրեկսլերի կատարած ուսումնասիրու-
թյունները ճիշտ նույնանման արդյունք են տվել: Անասունի մի-
ջակ միավորի միջին քաշը խոշոր կարվածքներում 619 կիլոգրամ
եր կազմում (1884 թ., հիշատակված յերկ, եջ 259), 25 և ավե-
լի հեկտար ունեցող գյուղացիական տնտեսությունների մոտ՝
427 կղր., $7\frac{1}{2}$ —25 հեկտ.՝ 382 կղր., $2\frac{1}{2}$ — $7\frac{1}{2}$ հեկտ.՝ 352 կղր.
և վերջապես մինչև $2\frac{1}{2}$ հեկտ. ունեցող տնտեսությունների մոտ՝
301 կիլոգրամ:

Անասունի քանակից ու վորակից և կախված նաև հողի խնամ-
քը, մասնավորապես նրա պարարտացումը: Վերեւում մենք ցույց
տվենք, վոր ամբողջ Ռուսաստանում կատարված վիճակագրու-
թյան բոլոր տվյալները վկայում են, վոր կարվածատիրական հո-
ղերը գյուղացիականի հետ համեմտած ավելի լավ են պարա-
րտացվում: Այժմ տեսնում ենք, վոր ճորտատիրական իրավունքի
ժամանակ կանոնավոր և որինական համարված այս բաժանումը
հնացել է: Բանից դուրս և գալիս, վոր գյուղացիական զանազան
տնտեսությունների միջև խոր անդունդ կա, և տվյալ հարցում
«միջին» գյուղացիական տնտեսության պատկերացումից բղխող
բոլոր ուսումնասիրությունները, հաշիվները, ամփոփումներն ու
տեսությունները բացարձակապես անձիւտ յեղակացության են
հանդեցնում: Դժբախտաբար զեմսավային վիճակադրությունը
ծխերի զանազան խմբերը չափազանց սակալ և ուսումնասիրում,

* Տե՛ս Հոգնություններ, համ. XI, եջ 298—308: Խմբ.:

սահմանափակվելով համայնքային տվյալներով։ Բայց ահա Պերմի նահանգում (Կրասնուրֆիմսկի գավառ) ծխային հետազոտության ժամանակ, իբրև բացառություն, ստույդ տվյալներ են հավաքված հողերի պարաբռացման մասին՝ դյուղացիական տարբեր ծխերի կողմէց։

Հնդհանրապետական գոմաղը տանող անտեսութ. %/0-ը	1ծխի (դուրս տարբեր պարագաների առաջին շայլելով)	1ծխի (դուրս տարբեր պարագաների առաջին շայլելով)
Մինչ 5 դեսյատին մշակողներ	33,9	80
5—10 » »	66,2	116
10—20 » »	70,3	197
20—50 » »	76,9	358
50-ից ավելի » »	84,3	732
Միջինը	51,7	176

Այստեղ արգեն մենք տեսնում ենք տնտեսության տարբեր հողամշակութային տիպեր՝ կախված տնտեսության ծավալից։ Մեկ ուրիշ վայրում ևս այս հարցի վրա ուշադրություն դարձրած հետազոտողները նույնանման յեղրակացության են հանդել։ Որյում վիճակագիրները հաղորդում են, վոր ունեոր դյուղացիների մոտ մեկ զլուխ խոչը անասունի գոմաղը կույտը (СКОП) գրեթե կրնակի ավելի յե, քան չունեոր տնտեսությունների մոտ։ Ծխին 7,4 հատ անասուն ունենալու դեպքում այդ կույտը 391 փութե, իսկ ծխին 2,8 զլուխ ունենալիս՝ 208 փութ։ «Նորմալ» համարվում ե 400 փ. կույտը, հետեւաբար, միայն աննշան փոքրամասնություն կազմող ունեոր դյուղացիներն են համառում այդ նորմային։ Զքավորությունն ատիպիված ե հարդն ու դոմաղը գործածել իբրև վառելիք, իսկ յերբեմն գոմաղը նույնիսկ վաճառել և այլն։

Մրա հետ կապված պետք է քննել՝ ձիազութիւնների թվի աճման հարցը դյուղացիության մեջ։ Յելլուղական թուսաստանի 48 նահանգում 1888—1891 թվերին կար 2,8 միլիոն ձիազուրկ ծուլք՝ ընդհանուր 10,1 միլիոնից, այսինքն 27,3%։ Մոտավորապես 9—10 տարի հետո՝ 1896—1900 թվերին 11,1 միլիոն ծխերից 3,2 միլիոնը ձիազուրկ եր, այսինքն 29,2%։ Հետեւաբար դյուղացիության եքսպրոպրիացիայի աճումն անկասկածելի յէ։ Բայց յեթե այդ պրոցեսին նայենք աղբոնոմիական տեսակետից, այդ դեպքում առաջին հայացքից ստացվում է տարորինակ յեղրակացություն։ Այդ յեղրակացությունն արել և հայտնի նախագահ յեղացած է անհաջողություն։

Գրող պ. Վ. Վ. գեռ 1884 թվին («Վեստնիկ Европы»*, 1884 թ., № 7), Համագլուխով մեկ ձիուն ընկնող վարելահողի դեսյատինների քանակը՝ դյուղացիական մեր անտեսության և «Նորմալ» յեղացույան անտեսության մեջ—նորմալ աղբոնոմիայի տեսակետից։ Դուրս ե յեկել, վոր դյուղացիները չափազանց շատ ձի յեն պահում՝ նրանց մոտ մեկ ձիուն ընկնում է 5—8 դեսյատին վարելահող՝ աղբոնոմիայի կողմէց պահանջվող 7—10 դեսյատինի վոխարեն։ «Հետեւաբար, — յեղրակացը կը պ. Վ. Վ., մուսաստանի այս մարդի (կենտրոնական-սկահողային շերտի) բնակչության մի մասի ձիազրկությանը վորոշ չափով պետք ե նայել վորպես նորմալ հարաբերության վերականգնումն՝ բանող անասունի քանակի և մշակության յենթակա տարածության միջեւ։ Իրապես տարորինակությունը բացատրվում է այն բանով, վոր ձիազրկությանն ուղեկցում է հողերի կենտրոնացումն ունենոր ծխերի ձևոքում, վորոնց մոտ ձիերի քանակի և մշակվող տարածության «Նորմալ» հարաբերություն և ստացվում։ Այս «Նորմալ» հարաբերությունը չի «վերականգնվում» (քանի վոր այն մեր դյուղացիական տնտեսության մեջ յերբեք չի յեղել), այլ նվաճվում է միայն դյուղացիական բուրժուալիտայի կողմէց։ Իսկ «աննորմալությունը» մանր-լյուղացիական տնտեսության արտադրության միջոցների կոտորակելն է հանդիսանում։ Հողի այն քանակը, վոր մշակում են միաձի դյուղացիները, մեկ միլիոն ձիով, ունենոր դյուղացիները մշակում են ավելի լավ ու ավելի խնամքով ½ կամ ¾ միլիոն ձիով։

Գյուղացիական տնտեսության մեջ մենյալ ինվենտարի վերաբերյալ խոսելիս պետք է տարբերել սովորական դյուղացիական ինվենտարը և յերկրագործական կատարելագործված գործիքները։ Առաջինի բաշխումն ընդհանրապես և սմբողջովին առաջարարականությամբ համապատասխանում է բանող անասունի բաշխման։ այս կարգի ավյալների մեջ դյուղացիական տնտեսության բնորոշման համար նոր բան չենք գտնի։ Իսկ բարելավված գործիքները, վոր անհամեմատ թանգ արժեն, իբրև ծախսերը հանում են ավելի խոչը անտեսություններում, գործադրվում են միայն հաջողությամբ զարգացող տնտեսությունների կողմէց, կենտրոնացված են անհամեմատ ավելի ուժեղ։ Այս կենտրոնացման մասին յեղած

* «Վեստնիկ Европы» — հասարակական-քաղաքական, գիտա-պոլուլար ժուռնալ և, ուսական լիբերալիզմի չափավոր թեր որդանն եր։ Լույս եր տեսնում 1866 թվից մինչև 1918 թ.։ Խմբ.։

տվյալները չափազանց կարեւոր են, վորովհետև այդ միակ տվյալներն են, վոր թույլ են տալիս, ճշտությամբ դատել այն մասին, թե գյուղացիական անտեսության առաջադիմուրյունը վոր ուղղությամբ և հասարակական ինչ պայմաններում ե ընթանում։ Կասկած չկա, վոր 1861 թվից սկսած այս ուղղությամբ առաջ դնալու քայլեր արված են, բայց չատ հաճախ հերքվում ե կամ կասկածի տակ և առնվում այդ առաջադիմության կապիտալիստական բնույթը՝ վոչ միայն կալվածատիրական, այլև գյուղացիական անտեսության մեջ։

Ահա զեմստվային վիճակագրության տվյալները բարելավված դործիքների բաշխման մասին գյուղացիների միջև։

Տուրաքանչյուր 100 անտեսության ընկնում և բարելավված գյուղատնտե- սական գործիքները	Որյութի նահանգի գորոնեժի նա- շակառում հանդի 1 գավառում	
Զիազուրկներ	0,1	—
1 ձի ունեցողներ	0,2	0,06
2-3 ձի ունեցողներ	3,5	1,6
4 և ավելի ձի ունեցողներ	36,0	23,0
Միջնը	2,2	1,2

Այսուեղ բարելավված գործիքները համեմատաբար թույլ են տարածված գյուղացիների մեջ։ Միանդամայն անհշան և այդպի-սի գործիքներ ունեցող ծխերի ընդհանուր տոկոսը։ Սակայն ցածր խմբերը գրեթե բոլորովին չեն ուտավում նման գործիքներից, այնինչ բարձր խմբերում նրանք սիստեմատիկաբար գործածության մեջ են մտնում։ Սամարայի նահանգի նովոռովենակի գավառում տնտեսատերների միայն 13% ունի բարելավված գործիքներ, ըստվորում 5-20 գլուխ բանող անասուն ունեցող խմբում այս տոկոսը բարձրանում է մինչև 40%, իսկ 20 և ավելի գլուխ բանող անասուն ունեցող խմբում՝ մինչև 62%։ Պերմի նահանգի Կրասնոուֆիմսկի գավառում (գավառի յերեք շրջանում) յուրաքանչյուր 100 անտեսության ընկնում է 10 բարելավված գործիք։ այս ընդհանուր միջինն է. 20-50 գես. հող մշակող ամեն մի 100 անտեսության ընկնում է 50 գործիք, իսկ 50 գեսյատին մշակող 100 անտեսության՝ նույնիսկ 180 գործիք։ Յեթե վերցնենք տոկոսային այն հարաբերությունները, վոր վերենում վերցրել ենք զանազան գավառների տվյալների համեմատության համար, ապա բանից գուրս կղա, վոր 20% կազմող ունենոր ծխերն ունեն բա-

րելավված բոլոր գործիքների թվի 70%-86%, իսկ 50% չքայլության ընկնում է 1,3%-3,6%։ Հետեւաբար կասկածից միանգամայն դուրս ե, վոր գյուղացիության մեջ բարելավված գործիքների տարածման առաջադիմությունն ունենոր գյուղացիության առաջադիմությունն ե (այս առաջադիմության մասին, ի միջին այլոց, խոսում ե նաև ալ. Կառլ Փիմանը վերենում մեջբերված՝ 1907 թ. աշխատության մեջ)։ Գյուղացիական ծխերի ամբողջ թվի յերեք հինգերորդը՝ ձիազուրկներն ու մեկ ձի ունեցողները՝ զբեթե բոլորովին հնարապորություն չունեն այս բարելավված բումներից ողտվելու։

V

Գյուղացիական անտեսությունը քննելով մենք մինչև այժմ գյուղացիներին վերցրել ենք առավելապես վորսկես տնտեսատերների, միաժամանակ ցույց տալով, վոր ցածր խմբերը շարունակ դուրս են նետվում տնտեսատերների շարքերից։ Ո՞ւր են դուրս նետվում։ Պարզ ե, վոր պրոլետարիատի շարքերը։ Մենք պետք ե այժմ մանրամասնորեն քննենք, թե հատկապես ինչպես ե կատարվում պրոլետարիատի, առանձնապես գյուղական պրոլետարիատի առաջացումը և ինչպես ե կազմվում աշխատանքային ուժի շուկան յերկրագործության մեջ։ Յեթե աշխատավճարային տնտեսության համար դասակարգային տիպիկ գեմք են հանդիսանում կալվածատեր-ճորտատերն ու հողաբաժնին ստացած ստրկացած գյուղացին, ամլա կապիտալիստական տնտեսության համար տիպիկ են վարձող-ֆերմերն ու վարձվող բատրակը կամ որամշակը։ Կալվածատիրոջ և ունենոր գյուղացու վարձող դառնալը մենք ցույց տվինք։ Այժմ տեսնենք, թե գյուղացին ինչպես ե վարձվող դառնում։

Մերծ ե արդյոք վարձու աշխատանքի գործադրությունն ունենոր գյուղացիների կողմից։ Յեթե վերցնենք բատրակ ունեցող ծխերի միջին տոկոսը գյուղացիական ծխերի ընդհանուր թվի համեմատությամբ (ինչպես սովորաբար անում են), այդ գեպը ըստ կատանանք վոչ շատ բարձր տոկոս։ Տայրիկյան նահանգի Դնեպրովսկի գավառում՝ 12,9%, Սամարայի նահանգի Նովոռովենսկի գավառում՝ 9%, Սարատովի նահանգի Կամիչինսկի գավառում՝ 12,7%, Պերմի նահանգի Կրասնոուֆիմսկի գավառում՝ 10,6%, Ռոյլի նահանգի 2 գավառում՝ 3,5%, Վորոնեժի 1 գավառում՝ 3,8%, Նիժնի-Նովգորոդի նահանգի 3

դավառում՝ 2,6% : Բայց այս կարգի տվյալներն եյապես կեղծ են, վորովհետեւ բատրակ ունեցող ծխերի հարաբերությունը վորովում է ծխերի ընդհանուր թվի, նույն թվում նաև բատրակ տվյալ ծխերի համեմատությամբ։ Կապիտալիստական յուրաքանչյուր հասարակության մեջ բուրժուազիան բնակչության աննշան փոքրամասնությունն է կազմում։ Վարձու բանվորներ ունեցող ծխերի թիվը մեջաւ ել «քիչ» կլինի։ Հարցն այն է, թե արդյոք դոյանում է այստեղ տնտեսության առանձին տիպ, թե վարձումը պատահական է։ Յեկ այս հարցին միանդամայն վորոշ պատասխան են տալիս զեմստվային վիճակադրության տվյալները, վիճակադրություն, վորն ամենուրեք ցույց է տալիս, թե ունեսոր դյուղացիական խմբերում բատրակ ունեցող ծխերի տոկոսն անհամեմատ ավելի բարձր է, քան ընդհանրապես զավառին վերաբերող միջին տոկոսը։ Բերենք Փերմի նահանդի կրասնոուֆլիմսկի դավառի տվյալները, վորտեղ իբրև բացառություն տեղեկություններ կան վոչ միայն բատրակների, այլև որամշակների վարձման մասին, այսինքն վարձման այն ձևի մասին, վորն ավելի տիպիկ է յերկրագործության համար։

Բանվորներ վարձող

	տնտեսությունների տոկոսը				
1 ծիփ արա- կան աշխատա- ժամկե- մունքների վորների թիվը	տային	համար	համար	համար	
կանաչական մասին	0,6	0,15	0,6	—	—
Մինչ 5 դեռ. մշակողներ	1,0	0,7	5,1	4,7	9,2
5-10 » »	1,2	4,2	14,3	20,1	22,3
10-20 » »	1,5	17,7	27,2	43,9	25,9
20-50 » »	1,7	50,0	47,9	69,6	33,7
50-ից ավելի	2,0	83,1	64,5	87,2	44,7
Միջինը	1,2	10,6	16,4	24,3	18,8

Մենք տեսնում ենք, վոր ունեսոր ծխերն աչքի յեն ընկնում ընտանիքի ավելի մեծ կազմով և ավելի չափով իրենց, ընտանեկան աշխատավորներն ունեն, քան չունեսոր ծխերը։ Բայց և այս պես ունեսորներն անհամեմատ ավելի չափով վարձու աշխատանք են կիրառում։ «Ընտանեկան կոռպերացիան» հիմք է ծառայում տնտեսությունն ընդլայնելու համար և այսպիսով դառնում է կապիտալիստական կոռպերացիա։ Բարձր խմբերում բանվորներ վարձելը բացեիրաց դառնում է սիստեմ, ընդլայնած տնտեսություն վարելու պայման։ Այս դեպքում մինչև անդամ դյուղացիական միջին խմբերում զգալիորեն տարածված է որամշակների

վարձումը։ յեթե յերկու բարձր խմբերում (ծխերի 10,3%) ծխերի մեծամասնությունը բանվորներ է վարձում, ապա 10-20 դեսյատին մշակող խմբում (22,4%) բոլոր ծխերի յերկու հինգերորդից ավելին ե բանվորներ վարձում քաղի համար։ Յեղակացությունն այն է, վոր ունեսոր դյուղացիությունն առանց բատրակների և որամշակների ծառայելու համար պատրաստակամ միլիոնանոց բանակի դյուղություն ունենալ չեր կարող։ Յեկ յեթե դավառային ավալյաները բատրակ ունեցող ծխերի միջին տոկոսի մասին, ինչպես տեսանք, նկատելի տատանումներ են ցուցաբերում, ապա բատրակ ունեցող ծխերի կենտրոնանալը դյուղացիության բարձր խմբերում անդամյան ընդհանուր յերկույթ է, այսինքն՝ ունեսոր ծխերը գառնում են ձեռնարկողներ։ 20% կազմող ունեսոր ծխերը կազմում են բատրակ ունեցող ծխերի ընդհանուր քանակի 48%-78%։

Վիճակադրությունը սովորաբար տեղեկություններ չի տալիս դյուղի մյուս բնեսոր ծխերի թիվ մասին, վորոնք ամեն տեսակի վարձու բանվորներ են տալիս։ Զեմստվային մեր վիճակադրությունը մի ամբողջ շարք հարցերում՝ համեմատած հին, կազյոննի, նահանգապետական և ամեն տեսակի գեպարտամենտային հաշվետվությունների վիճակադրության հետ՝ չափազանց մեծ քայլերով առաջ և գնացել։ Բայց մի հարցում, հենց այսպես կոչված դյուղացիական «դատումների» հարցում, հին՝ կազյոննի տեսակետը պահպանվել ե նաև զեմստվային վիճակադրության մեջ։ Իր հողաբաժնի վրա հողագործություն անելը դյուղացու իսկական զբաղմունքն է համարվում, իսկ յուրաքանչյուր կողմնակի պարագմունք դասվում է կողմնակի «դատումների» կամ «արհեստագործությունների» շարքը, ըստվորում այստեղ իրար հետ շփոթվում են տնտեսական այնպիսի կատեգորիաներ, վորոնց զանազանելը պահանջում է քաղաքատնտեսության այրությունը։ Որինակ՝ «դյուղատանտեսական արդյունաբերողների» կարգում վարձու բանվորների կողքին դասվում են նաև տնտեսատերձեռնարկողները (որինակ՝ բոստանատերերը)։ սրանց կողքին նույնպես «դատումալոր ծխեր» են հաշվում մուրացկաններն ու առետրականները, սպասալորներն ու տնտեսատեր-արհեստավորները և այլն։ Պարզ է, վոր քաղաքատնտեսական այս աղաղակող շփոթը ճորտատիրության ուղղակի մնացորդ է։ Կալվածատիրոջ համար իսկապես տարբերություն չուներ, թե նրա բահրա տվող դյուղացին կողմնակի ինչ դորձով է զբաղվում՝ առետրով, վար-

Հու աշխատանքով, թե արդյունաբերությամբ—վորպես տնտեսատեր. ճորտատիրական բոլոր գյուղացիների վրա ընդհանուր բահրան ծանրանում եր հավասարաբար, ամենը համարվում է յին ժամանակավոր ու պայմանական բացակայության մեջ՝ իրենց իսկական դործից:

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո այս տեսակետն որեցոր շատ ավելի սուր հակասում եր իրականության: Դատումներ ունեցող գյուղացիական ծխերի մեծամասնությունն անկանած պատկանում ե վարձու աշխատողներ ալող ծխերի թվին, սակայն այստեղ մենք լիովին ստույգ պատկեր ունենալ չենք կարող, վորովհետև արդյունաբերող-տնտեսատերին փոքրամասնությունն այնուամենայնիվ ընկնում ե ընդհանուր թվի մեջ և գունազարդում ե կարիքավորների դրությունը: Պարզ պատկերավորման համար բերենք մի որինակ: Վիճակապերները Սամարայի նահանգի Նովուտղենսկի գավառի վերաբերյալ «արհեստագործություն» ընդհանուր զանգվածից զատել են «յերկրագործական արհեստագործությունը»: Իհարկե այս տերմինն ել անորոշ ե, սակայն պրոֆեսիաների թվարկությունը գոնե այն ե տալիս, վոր այս կարգի 14.063 «արդյունաբերողներից» 13.297-ը բարակներ և որամշակներ են: Նշանակում ե վարձու բանվորների գերակշռությունը շատ մեծ ե այստեղ: Յերկրագործական դատումի բաշխումը հետևյալ պատկերն ունի.

Յերկրագործական արհեստագործություններով զբաղված արական սեռի աշխատավորների տոկոսը

Բանող անասուն չունեցողներ	71,4
1 դուժի բանող անասուն ունեցողներ	48,7
2—3 » » »	20,4
4 » » »	8,5
5—10 » » »	5,0
10—20 » » »	3,9
20 և ավելի » » »	2,0
Գավառում	25,0

Հետևաբար, ճիազուրկ գյուղացիների յոթ տասերորդը, իսկ մեկ ծի ունեցողների գրեթե կեսը վարձու բանվորներ են: Կերպի նահանդի կրասնոութիմսկի գավառում յերկրագործական արհեստագործությամբ զբաղվող ծխերը միջին հաշվով հավասար

են 16,2%, հող չմշակողներից «արդյունաբերող» ե 52,3%, իսկ մինչև 5 դեսյատին մշակողներից՝ 26,4%: Մյուս գավառներում, վորտեղ յերկրագործական արհեստագործություններն առանձնապես զատված չեն, ավելի պակաս պայծառ պատկեր ե ստացվում, բայց և այնպես ընդհանուր կանոն ե մնում այն, վոր «արհեստագործություններն» ու «դատումներն» ընդհանրապես ասած ցածր խմբերի մասնագիտությունն են հանդիսանում: 50% կտղմող ցածր ծխերի խմբերին ընկնում ե դատումներ ունեցող բոլոր ծխերի 60%—93%:

Այսպիսով տեսնում ենք, վոր ժողովրդական տնտեսության ընդհանուր կառուցվածքում իրենց դիրքով՝ գյուղացիական ցածր խմբերը, մասնավորապես ձիազուրկներն ու մեկ ծի ունեցողները, նադել ունեցող բատրակներ ու որամշակներ են (լայն առումով՝ վարձու բանվորներ): Այս յերկրակացությունն են հաստատում թե վարձու աշխատանքի գործադրության աճմանը վերաբերող տվյալները՝ 1861 թ. հետո—ամբողջ Ռուսաստանում, թե ցածր խմբերի յեկամտի աղբյուրների մասին յեղած բյուջետային հետազոտությունները և թե, վերջապես, նույն խմբերի կենսական մակարդակի մասին յեղած տվյալները: Այս յեռակի ապացույցների վրա կանդ կառնենք քիչ ավելի մանրամասնորեն:

Ամբողջ Ռուսաստանում գյուղական վարձու բանվորների թվի աճման մասին ընդհանուր տվյալներ կան միայն արտադրությունների վերաբերյալ, առանց ճշտորեն տարբերելու յերկրագործական և վոչ-յերկրագործական բանվորներին: Առաջինի կամ յերկրորդի գերակշռության խնդիրն ընդհանուր թվի մեջ նարոդնիկական գրականությունը լուծում եր առաջինի սուտին, բայց մենք ներքեւում կրերենք հակառակ հայցքի հիմքեր: Արտադրության բանվորների թվի ավելացման փաստը գյուղացիության մեջ, 1861 թ. հետո, վոչ մի կառկածի յենթակա չե: Այս մասին վկայում են բոլոր աղբյուրները: Այս յերեսութիւնի վիճակադրական մոտավոր արտահայտությունն են հանդիսանում անցագրային յեկամտի և տված անցագրերի թվի մասին յեղած տվյալները: 1868 թվին անցագրային յեկամուտ յեղել ե 2,1 միլիոն ոռութիւն, 1884 թվին՝ 3,3 միլիոն ոռութիւն, 1894 թվին՝ 4,5 միլիոն ոռութիւն: Աճումը կրկնակի վեց ավելի յե: Յեվրոպական Ռուսաստանում 1884 թվին տրված անցագրերի և անցագրման թիվը 4,7 միլիոն եր, իսկ 1897—1898 թվերին՝ 7,8—9,3 միլիոն: Այստեղ տասերեք տարվա մեջ կրկնակատկում ենք տեսնում: Ընդհանրապես և ամ-

բողջովին առած՝ այս բոլոր տվյալները համապատասխանում են ուրիշ հաշվարկումներին, որինակ, ող. Աւլարովի հաշվարկումին, վորը 20 նահանգի 126 գավառի զեմստվային վիճակքության մեջ մասամբ հնացած տվյալների ամփոփումներ կատարելով արտադնաց բանվորների հավանական թիվը վորոշեց 5 միլիոն մարդ։ Պ-ն Ս. Կորունկոն տեղական հավելական (избыточный) բանվորների քանակին վերաբերող տվյալների հիման վրա այդ թիվը վորոշում եր 6 միլիոն մարդ։

Պ-ն Նիկոլայ —ոնի կարծիքով այս ամբողջ գումարից «հսկայական մեծամասնությունը» յերկրագործական արհեստագործություններն են։ «Կապիտալիզմի զարդացումը» * գրքում յես մանրամասնորեն շարադրել եմ, վոր 60-ական, 80-ական և 90-ական թվականների տվյալներն ու ուսումնասիրությունները լիովին արացուցում են այս յերկրակացության անձառությունը։ Արտադնաց բանվորների մեծամասնությունը, թեև վոչ հսկայական մեծամասնությունը, վոչ—յերկրագործական բանվորներ են։ Ահա ամենալրիվ ու ամենանոր տվյալներ Յելլրոպական Ռուսաստանում 1898 թվին տարբած բնակագրերի (вид на жительство) բաշխման մասին՝ ըստ նահանգների։

1898 թ. տրված բոլոր տե-

նահանգների խմբերը սակի բնակագրերի քանակը

1) 17 նահանգ՝ վոչ—յերկրագործական արտադնացության գերակշռությամբ	3.369.597
2) 12 նահանգ՝ անցողիկ	1.674.231
3) 21 նահանգ՝ յերկրագործական արտադնացությամբ	2.765.762
Ընդամենը 50 նահանգում	7.809.590

Յեթե անցողիկ նահանգներում կեսին համարենք յերկրագործական բանվորներ, այդ գեղքում մոտավոր, ամենից հավանական բաշխումն այս կենի՝ մոտ 4,2 միլիոն վոչ—յերկրագործական վարձու բանվոր և մոտ 3,6 միլիոն յերկրագործական վարձու բանվոր։ Այս թվին զուգահեռ պետք է դնել պ. Ռուլնելի թիվը։ Աս 1894 թվին համատեղել ե զեմստվային վիճակագրության տվյալները 19 նահանգի 148 գավառի վերաբերյալ և դյուզաթը-

տեսական վարձու բանվորների մոտավոր թիվը վորոշել ե 3½ միլիոն մարդ։ Բայ 80-ական թվականների տվյալների այս թիվն ընդգրկում է յերկրագործական թե տեղական և թե արտագնաց բանվորներին։ 90-ական թվականների վերջին դյուզատնտեսական միայն արտագնաց բանվորների թիվն այդքան եր։

Յերկրագործական վարձու բանվորների թիվի աճումն ուղղակի կապ ունի կապիտալիստական ձեռնարկության այն զարգացման հետ յերկրագործության մեջ, վոր մենք յերեան բերինք կալվածատիրական ու գյուղացիական տնտեսության մեջ։ Վերցրեք, որինակ, մեջնաների գործադրությունը գյուղատնտեսության մեջ։ Ճշգրիտ տվյալներով մենք ցույց տվինք, վոր ունենոր գյուղացիների կողմից մեջնաներ գործադրելը ձեռնարկողական տընտեսության անցնելու նշան է։ Իսկ կայլածատիրական տնտեսության մեջ մեջնաների կամ ընդհանրապես բարելավ գործիքների գործադրությունն աշխատավճարումների անխուսափելի արտադղումն և կապիտալիզմի կողմից։ Գյուղացիական ինվենտարին մուսարիկում և կալվածատիրականը, չին յեռադաշտին՝ գործիքների փոփոխության հետ կապված տեխնիկական նոր յեղանակներ։ Ատրկացած գյուղացին պիտանի չե բարելավված գործիքներով աշխատելու համար, և նրա տեղը գրակում ե բատրակը կամ որպաշտ։

Յելլրոպական Ռուսաստանի այն շրջանում, վորտեղ ունի քորութիւնը հետո ամենից շատ և զարգացած մեջնաների գործադրությունը, ամենից շատ ել տարածված և յեկվոր բանվորների վարձու բանվորական ուժի կիրառումը։ Այդ շրջանը Յելլրոպական Ռուսաստանի հարավային և արևմտյան ծայրամասերն են։ Յերկրագործական բանվորների այս շրջան գալը չափազանց տիպիկ ու պայծառ արտահայտված կապիտալիստական հարաբերություններ առեղծեց։ Անհրաժեշտ և անդրադապնալ նրանց վրա, համարելու համար չին, մինչեւ այժմ տիրապետող աշխատավճարումներն ավելի ու ավելի ճանապարհ բացող հորձանքի հետ։ Ամենից առաջ պետք ե նշել, վոր հարավային շրջանն աչքի յե ընկնում ամենից բարձր աշխատավարձով յերկրագործության մեջ։ Ամբողջ տասնամյակի (1881—1891 թ. թ.) վերաբերող տվյալների համաձայն, վորը վերացնում է ամեն տեսակի պատահական տառանումները, Ռուսաստանում աշխատավարձն ամենից բարձր և Տավրիկյան, Բևսարաբիայի և Դոնի նահանգներում։ Այսեղ տարով վարձվող գործավորն ստանում է 143 ո. 50 կ.՝ ապրու-

* Տե՛ս Հոգնեան գործականության համար։

տըն ել հետը հաշված, իսկ ժամկետային դործավորն (ամառվարդացքացը)՝ 55 ռ. 67 կ.: Հետևյալ տեղն ըստ աշխատավարձի բարձրության գրավում ե ամենից արդյունաբերական շրջանը՝ Պետերբուրգի, Սովորայի, Վլադիմիրի և Յարոսլավլի նահանգները: Այստեղ տարով վարձվող գյուղական բանվորին վճարում են 135 ռ. 80 կ., իսկ ժամկետայինին՝ 53 ռուբլի: Աշխատավարձի ամենից ցածր մակարդակի հանդիպում ենք կենտրոնական յերկրագործական նահանգներում (Կազանի, Գենդայի, Տամբովի, Ռյազանի, Տուլայի, Ուրյոլի և Կուրսկի նահանգներում), այսինքն աշխատավարձառումների, ստրկացման ու ճորտատիրական ամեն տեսակի մաշցորդների գյուղավոր վայրերում: Այստեղ տարով աշխատողը յերկրագործության մեջ ստանում է ընդամենը 92 ռ. 95 կ., այսինքն՝ մեկ ու կես անդամ պակաս, քան ամենից կապիտալիստական նահանգներում, իսկ ժամկետայինն ստանում է 35 ռուբ, 64 կ., այսինքն՝ ամառվա համար 20 ռ. պակաս, քան հարավում: Հենց կենտրոնական այս շրջանից ել, մենք նկատեցինք, հսկայական թվով բանվորներ են մեկնում: Յուրաքանչյուր դարձան այստեղից ամելի քան 1½ միլիոն մարդ ե զնում յերկրագործական գաստումների (գյուղավորապես դեպի, հարավ, իսկ մասսամբ, ինչպես ներքեւում կտեսնենք, դեպի արդյունաբերական նահանգները), ինչպես նաև զնում են վոչ-յերկրագործական աշխատանքի՝ մայրաքաղաքներն ու արդյունաբերական նահանգները: Արտագնացության այս գյուղավոր շրջանների (յերկրագործական հարավ և մայրաքաղաքները յերկու արդյունաբերական նահանգներով) մինչև ընկած են միջին աշխատավարձ ունեցող նահանգների շերտերը: Այս նահանգները դեպի իրենց են գրավում բանվորների վորոշ մաս՝ ամենից «եթան» և ամենից քաղցած կենտրոնից, իր հերթին իրենց միջից վորոշ թվով բանվորներ են տալիս ամելի թափ շրջաններին: Պ-ն Ս. Կորունկոյի «Ազատ վարձու աշխատանք» դրսում շատ ընդարձակ նյութերի հիման վրա մանրամասնաբար նկարագրված ե բանվորների դեղերումների և բնակչության տեղափոխությունների այդ պլոցեաը: Կապիտալիդն այս միջոցով բնակչության ավելի համաչափ տեղավորումն ե կատարում (ինարկե, կապիտալի պահանջների տեսակետից). հարդարում ե աշխատավարձն ամբողջ յերկրում, ստեղծում ե աշխատանքի իսկապես միասնական աղղային շուկա, աստիճանաբար քանդում ե արտադրության հին յեղանակների հիմքերը՝ ստրկա-

ցած գեղջուկին բարձր աշխատավարձով «հրապուրելու» միջոցով: Այստեղից ել առաջանում են պարոնայք կալվածատերերի անվերջ գանդասաները, թե տեղական բանվորներն անառականում են, արտագնացությունից առաջանում ե սանձարձակություն ու հարբեցողություն, քաղաքը բանվորներին «փչացնում ե» և այլն և այլն:

Բանվորների ամենից շատ ներեկության շրջանում XIX դարի վերջին բավականին խոչըր կապիտալիստական ձեռնարկություններ եյին գոյացել յերկրագործության մեջ: Կապիտալիստական կոռպերացիան կազմակերպվում ե այնպիսի մեքենաների գործադրության շուրջը, որինակ, ինչպիսին կալվիչներն են: Պ-ն Տեղակովը նկարագրելով Խերսոնի նահանգի գյուղատնտեսական բանվորների կյանքի ու աշխատանքի պայմանները, մատնանշում ե, վոր ձիու կալվիչը պահանջում է 14—23 և ավելի բանվորներ, իսկ շոգեկալիչը՝ 50—70: Միքանի տնտեսություններում հավաքվում եր 500—1000-ական բանվոր, վորպիսի թիվը չափազանց բարձր ե յերկրագործության համար: Կապիտալիդը հնարավորություն ե տիվել տղամարդու ավելի թանգ աշխատանքը փոխար իւնանց ու յերեխաների աշխատանքով: Որինակ՝ Տալրիկյան նահանգի բանվորական գլխավոր շուկաներից մեկը հանդիսացող կախովկա ավանում, վորտեղ առաջ մինչև 40·000, իսկ անցյալ դարի 90-ական թվականներին 20—30 հազար բանվոր եր հակաքվում, 1890 թվին տոմարագրված եր 12,7% կին, իսկ 1895 թվին՝ արգեն 25,6%: Յերեխաները 1893 թվին կազմում եյին 0,7%, իսկ 1895 թվին՝ արգեն 1,69%:

Կապիտալիստական տնտեսությունները նույսատանի բոլոր ծայրերից բանվորներ հավաքելով՝ տեսակալվորում եյին նրանց կարիքների համաձայն, ստեղծելով գործարանային բանվորների հիերարխիայի նման մի բան: Որինակ՝ զանազանում են լրիվ բանվորներին, կիսաբանվորներին, սրանցից ել զատում են «մեծության վորություններին» (16—20 տարեկան) և «փոքր ոգնության» կիսաբանվորներին (8—14 տարեկան յերեխաներ): Կալվածատիրոջ հին, այսպես կոչված «նահապետական» հարաբերությունների միջ հետք այստեղ չի մնում դեպի «իր» գյուղացին: Աշխատանքային ուժը դառնում ե ապրանք՝ նման վորեւե այլ ապրանքի: «Իսկական-ռուսական» տիպի ստրկացումն անհետանում ե, տեղի տալով շաբաթական փողային վճարումներին, կատաղի

մրցման և բանվորների ու տնտեսատերերի ընդհարումներին։ Բանվորական մասնաների հսկայական կուտակումը վարձման չուկաներում, աշխատանքի աներևակայելի ծանր ու հակառազգապահական պայմանները խոչոր տնտեսությունների վրա հասարակական հսկողություն սահմանելու փորձեր առաջ բերին։ Այս փորձերը բնորոշ են յերկրագործական «խոշոր ինդուստրիալի» համար, բայց հասկանալի յէ, վոր քաղաքական աղատության ու բանվորական բացահայտ կազմակերպությունների բացակայության ժամանակ նրանք վոչ մի կայունություն ունենալ չեն կարող։ Յեկվոր բանվորների աշխատանքի պայմանների ծանր լինելը նրանից ե յերեսում, վոր աշխատանքային որը տեսում է 12½—15 ժամ։ Մեքենաների վրա աշխատող բանվորների վիրավորում-խեղումները սովորական յերեսության դարձել։ Բանվորների մեջ զարգացել են պրոֆեսիոնալ հիմքությունները (որ՝ կալսիչների վրա աշխատաղների) և այլն։ Զուտ կապիտալիստական շահագործության բոլոր «հրաշալիքներն» ամենից զարգացած, ամերիկյան պատկերով կարելի յէ տեսնել XIX դարի վերջի Ռուսաստանում և այս՝ աշխատավճարային ու կոռային տնտեսության զուտ-միջնադարյան և առաջավոր յերկրներում վաղուց վերացված-անհետացած յեղանակների կողքին։ Ադրաբային հարաբերությունների ամբողջ վիթխարի բազմազանությունը Ռուսաստանում շահագործման ճորտատիրական ու բուրժուական յեղանակների հյուալածք և հանդիսանում։

Ռուսական յերկրագործության մեջ վարձու աշխատանքի պայմանների շարադրանքն ավարտելու համար բերենք նաև բյուջետային տվյալներ ցածը խմբերի գյուղացիների տնտեսության մասին։ Վարձու աշխատանքն այսուղ յերեան և դալիս «գատում-ների» կամ «արհեստագործությունների» եկամուտական անվան տակ։ Ի՞նչպես են հարաբերում այս դատավորներից տատացված յեկամուտները յերկրագործական տնտեսությունից ստացված յեկամուտներին։ Այս հարցին ճշգրիտ պատասխան են տալիս վորոնեժի նահանգի ձիազուրկի և մեկ ձի ունեցող գյուղացիների բյուջեները։ Զիազուրկի համար բոլոր աղբյուրներից ստացվող ընդհանուր յեկամուտը հաշվվում է 118 ռ. 10 կ., վորի թվում յերկրագործությունից 57 ռ. 11 կ. և «արհեստագործությունից» 59 ռ. 4 կ.։ Այս վերջին գումարը կազմվում է «անձնական արհեստագործությունից» ստացված 36 ռ. 75 կ. յեկամուտից և 22 ռ.

29 կ. դանազան յեկամուտներից։ Վերջինիս թմբին ե պատկանում վարձու տվյալ հոդի՝ յեկամուտը։ Մեկ ձի ունեցող գյուղացու ընդհանուր յեկամուտն է 178 ռուբլի 12 կ., վորից 127 ռ. 69 կ. յերկրագործությունից և 49 ռ. 22 կ. արհեստագործություններից (35 ռ. անձնական արհեստագործությունից, 6 ռ. ասյլորդությունից, 2 ռ. «առևտրա-արդյունաբերական գործատներից» և 6 ռ. այլ յեկամուտներից)։ Յեթե հողային տնտեսության ծախսելու հանենք, այդ դեպքում յերկրագործությունից կունենանք 69 ռ. 37 կ., արհեստագործականի 49 ռ. 22 կ. հանդեպ։ Ահա թե ինչպես ե իր համար ապրուստի միջոց հայթայթում գյուղացիական ծխերի յերեք հինգերությունը մակարդակը բարձր չեն, իսկ յերբեմն ել ցածը և բարակեների կյանքի մակարդակը բարձր չեն, իսկ յերբեմն վարձը 1881—1891 տասնամյակում) 57 ռուբլի յեր, գումարած ապրուստը, վոր արժեքը 42 ռ.։ Մինչդեռ ձիազուրկների չորս չնչից բաղկացած ամբողջ ընտանիքի ապրուստի արժեքը 78 ռուբլի յետարեկան, իսկ մեկ ձի ունեցողինը, հինգ չնչից բաղկացած մինելու դեպքում, 98 ռուբլի։ Ռուսական գյուղացին աշխատավճարումների, հարկերի և կապիտալիստական շահագործման չնորհիվ այսպիսի աղքատության և կյանքի այնպիսի քաղցած մակարդակի յէ հասել, վոր Յեվրոպայում անհավանական ե թվում։ Այնտեղ նման սոցիալական տիպը կոչում են պառպեր։

VI

Գյուղացիության կազմալուծման մասին վերևի ամբողջ ասածի ամփոփումը տալու համար մենք նախ կբերենք գրականության մեջ յեղած միակ հանրագումար տվյալներն ամբողջ Յեվրոպական Ռուսաստանի վերաբերյալ, վորոնք թույլ են տալիս դատել զանազան ժամանակաշրջաններում գյուղացիության ներսում գըտնված զանազան իմբերի մասին։ Այդ՝ ձիերի զինվորական վիճակագրության տվյալներն են։ «Կապիտալիդմի զարգացումը»* գրքիս յերկրորդ հարաբերակության մեջ յետ համատեղել եմ այդ տվյալները Յեվրոպական Ռուսաստանի 48 նահանգի վերաբերյալ 1888—1891 և 1896—1900 թվականների ժամանակաշրջանի համար։ Ահա ալելի եյական արդյունքների քաղցածքը.

* Տե՛ս Հոգնական հարցը Ռուսաստանում—5

Գյուղացիական ծխերի թիվը (միլիոններ)				
1888—1891 թվերին		1896—1900 թվերին		
	Ընդամենը	%	Ընդամենը	%
Զիտուրիկներ	2,8	27,3	3,2	29,2
1 ձի ռնեցողներ	2,9	28,5	3,4	30,3
2 » »	2,2	22,2	2,5	22,0
3 » »	1,1	10,6	1,0	9,4
4 և ավելի »	1,1	11,4	1,0	9,1
Ընդամենը	10,1	100,0	11,1	100,0

Այս տվյալները, ինչպես յես հարեւանցիորեն նշեցի վերեւում՝ վկայում են դյուղացիության աճող եքսուսոպիացիայի մասին։ Ծխերի թվի վորզ միլիոնանոց աճումը գնացել է յերկու ցածր խմբերի ավելացման ուղղությամբ։ Զիերի ընդհանուր թիվը հիշյալ ժամանակաշրջանում 16,91 միլիոնից իջել է 16,87 միլիոնի, այսինքն՝ ամբողջ գյուղացիությունն ընդհանուր առմամբ ձիերի կողմէից միքիչ ավելի յե աղքատ։ Աղքատացել են նաև բարձր խումբը, վորը 1888—1891 թվերին ուներ 5,5-ական ձի յուրաքանչյուր ծմին, իսկ 1896—1900 թվերին՝ 5,4-ական ձի։

Այս տվյալներից հեշտ է այն յեզրակացությունն անել, վորդյուղացիության մեջ «դիֆերենցիացիա» չի կատարվում. ամենից շատ ավելացել է ամենից աղքատ խումբը, ամենից շատ (ըստ ծիսերի թվի) պակասել է ամենից հարուստ խումբը: Այս վոչ թե դիֆերենցիացիա, այլ աղքատության համահարթումն է (հավելի-քառօրական): Յեզ այսպիսի յեզրակացությունների, վորոնք հիմնված են նման յեղանակների վրա, շատ հաճախ կարելի յէ հանդիպել գրականության մեջ: Իսկ յեթե մենք հարց դնենք, թե վորոնք ե արդյոք խմբի փոխհարաբերությունը դյուղացիության ներսում, ապա այլ բան կտևնենք: Յածը խմբերի ծխերի կեսը 1888—1891 թվերին ուներ ձիերի ընդհանուր թվի 23,7%, նաև 1896—1900 թվերին ճիշտ նույնպիսի տոկոս է: Ծիսերի հինգերորդ մասը կազմող ամենից ունեող խումբն առաջին շրջանում ուներ ձիերի ամբողջ թվի 52,6%, իսկ յերկրորդում՝ 53,2%: Պարզ է, վորդյուղերի փոխհարաբերությունը գրեթե չի փոխվել: Գյուղացիությունն աղքատացել է. հարուստ խմբերն աղքատացել են. 1891 թվի ճնշաժամն իրեն զգացնել է տվել շատ լուրջ կերպով, սակայն սրանից գյուղական բուրժուազիայի հարաբերությունները քայլային դյուղացիության նկատմամբ չեն փոխվել և ըստ դործի եյության չեյին ել կարող փոխվել:

Այս հանգամանքը հաճախ աչքաթող են անում մարդիկ, վորոնք գյուղացիության կազմալուծման մասին հանձն են առնում դատել անջատ վերցրած վիճակաբական տվյալները հիմք ընդունելով։ Ծիծաղելի կլիներ մտածել, վոր ձիերի բաշխման մասին յեղած առանձին տվյալները կարող են զեթ վորոն բան բացարել գյուղացիության կազմալուծման վերաբերյալ։ Այդ բաշխումը դեռ բացարձակապես վոչինչ չի ապացուցում, յեթե այն չվերցնենք գյուղացիական տնտեսությանը վերաբերող տվյալների ամբողջ կապակցությամբ։ Յեթե մենք քննելով այդ տվյալները սահմանել ենք, թե խմբերի միջև ինչն ե ընդհանուր՝ հողի վարձակալելու ու վարձու տալու, բարեկալ գործիքների ու պարաբռացման, դատումի ու գնուող հողերի և բանվորների ու անասունի քանակի բաշխման գործում, յեթե մենք ապացուցել ենք, վոր յերկույթի այս բոլոր տարրեր կողմերն անբաժանելիութեն կապված են իրար հետ և իսկապես յերեան են բերում տնտեսական հակառել տիպերի՝ պրոլետարիատի ու գյուղական բուրժուազիայի առաջ գալը, յեթե մենք այս ամենը սահմանել ենք, և միայն այն չափով, ինչ չափով այս սահմանված է, մենք կարող ենք վերցնել առանձին տվյալներ, թեկուղ ձիերի բաշխման վերաբերյալ, վերսի ամբողջ շարադրածը պատկերավորելու համար։ Բնդհակառակը, յեթե մեղ մատնանշում են ձիերի քանակը պակասելու այս կամ այն գեպքը, յենթադրենք ունենոր խմբում այս-ինչ ժամանակաշրջանում, ապա միայն այստեղից վորեե ընդհանուր յեղբակացություն անելը՝ գյուղական բուրժուազիայի փոխհարաբերության մասին գյուղացիության ներսում և նրա մյուս խմբերի նկատմամբ՝ աղաղակող տիմարություն կլիներ։ Կապիտալիստական վոչ մի յերկրում, տնտեսության վոչ մի ձյուղում համաշտի զարգացում չկա և չի կարող լինել (շուկայի գերիշմանության ժամանակ)։ Կապիտալիզմը չի կարող այլ կերպ զարդարակ, քան թոհջջներով, դիդղաղներով, մերթ արագընթաց առաջ քայլելով, մերթ նախկին մակարդակից ժամանակավորապես ցած ընկնելով։ Յեվ ոռուսական տղբարային ճղնաժամի և առաջիկա հեղաշրջման հարցում եյականը բոլորովին այն չե, թե հատկապես ինչ աստիճանի վրա յե դանվում կապիտալիզմի զարդացումը կամ այս զարդացման տեմպն ինչպես և, այլ այն և, թե արդյոք այդ կապիտալիստական ճղնաժամն ու հեղաշրջումը կա՞, մե՞ վոչ, կատարվում ե այս արդյոք գյուղացիությունը գյուղական բուրժուազիայի ու պրոլետարիատի վերածելու պայման-

ներում, թե՞ վաչ, բուրժուակա՞նն են հանդիսանում՝ արդյոք համայնքի ներսում առանձին խմբերի հարաբերությունները, թե՞ վոչ։ Այլ խոսքերով՝ Ռուսաստանի ադրաբայլին հարցին վերաբերող յուրաքանչյուր ուսումնասիրության առաջին խնդիրը ադրաբայլին հարաբերությունների դասակարգային եյությունը բնութագրելու համար հիմնական տվյալներ սահմանելն ե հանդիսանում։ Յեկմիայն դրանից հետո, յերբ պարզված ե, թե դասակարգերի ու զարդացման ինչ ուղղության հետ մենք դործ ունենք, կարող են խոսք լինել մասնավոր հարցերի, զարդացման թափի, ընդհանուր ուղղության ալև կամ այն ձևագործության մասին և այլն։

Ուստաստանի հետոև Փորմյան գլուխացիական տնտեսության մասին մարզսիստական հայացքների հիմքն այդ տնտեսության տիպը մանր-բուրդուական ճանաչելն և հանդիսանում : Յեկ մարզսիստական բանակի տնտեսագետների վեճերը տնտեսագետնարողների հետ ամենից առաջ հենց այն մասին երին գնում (և պիտի գնան, յեթե նկատի յե առնվորմ տարածայնությունների բուն եյության պարզաբանումը), թե ճիշտ ու կիրառելի յե արդյոք այսպիսի բնութագրումը: Այս հարցը, լիակատար վորոշակիությամբ չպարզած, վորեւե ապէլի կոնկրետ կամ գործնական հարցերում մի քայլ խոհ առաջ գնալ չի կարելի: Արինակ՝ քննել ապրարային հարցի լուծման այս կամ այն ուղիները, վոր XIX դարի կողմից կտակված են XX դարին, միանդամայն անհուսալի ու շփոթ ձեռնարկում կլիներ, յեթե վոր նախապես պարզված չե, թե ընթհանրապես ինչ ուղղությամբ ե ընթանում մեր ապրարային եկոլոգիան, ինչպիսի դասակարգեր կարող են շահել զեպքերի այս կամ այն ընթացքի ժամանակի և այլն:

Գյուղացիության կազմալուծման մասին վերևում բերված մանրամասն տվյալներն աղքարային հեղաշրջման մնացած բոլոր խնդիրների հենց այն հիմքն են պարզում, վորը չհակացած անկարելի յէ առաջ գնալ: Գյուղացիության զանազան խմբերի միջև յեղած փոխհարաբերությունների այն գումարը, վոր մենք մանրամասնորեն ուսումնասիրեցինք Ռուսաստանի հակագիր ծայրերում, հասարակական-տնտեսական հարաբերությունների հենց եյտթյունն եց ցույց տալիս մեզ համայնքի ներսում: Այս հարաբերություններն ակնառու կերպով ցույց են տալիս դյուլացիական տնտեսության մանր-բնուրժուական բնույթը պատմական տվյալ պարագայում: Յերբ մարզսիստներն ասում եյին, թե յերկրագործության մեջ մանր արտադրողը (նադելային հողի կամ վո-

բեկ ուրիշ հողի վրա յե նա տնտեսագլարում, այդ միենույն ե՛, ապրանքային տնտեսության զարգացման ժամանակ անխռուսավիելիորեն մանր բուրժուա յե հանդիսանում, այս դրությունը տարակուսանք եր առաջ բերում. ասում եյին, վոր այս անապացուցելի յե, շաբան կերպով փոխանցվում է մեր յուրահասուկ պայմանների վրա ոտար որինակներից: Բայց տվյալները՝ խմբերի փոխհարաբերությունների մասին, հարուստ համայնքիների կողմից աղքատ համայնքիների ձեռքից վարձակալած հողերը խլելու մասին, առաջինների կողմից բարակ վարձելու մասին և այլն և այլն՝ այս բոլոր տվյալները հաստատում և անվիճելի յեն դարձնում մարքսիզմի թեորիական յեղակացությունները: Ուստատանի տնտեսական զարգացման ուղղության գործում համայնքի նշանակության մասին հարցը անվերադարձ վեռվում և այս տվյալներով, քանի վոր մեր ավյալները իսկական (և վոչ մտացածին) համայնքի հենց այս իսկական ուղղությունն ել ցույց են տալիս: Զնայած նադելային հողերի ամբողջ հալասարարությանը, չնայած վերաբաժնություններին և այլն, պարզվում են, վոր դյուդացի-համայնքիների իսկական տնտեսական զարգացման ուղղությունը հենց դյուդական բուրժուազիա առաջացնելն և և ամենից չքավոր տնտեսատերերի մասսաներին դուրս մղելն և գետի պրուետարիատի շարքերը: Յեվ սոսոլիպինյան ագրարային քաղաքականությունը*, ինչպես ներքեւում կտեսնենք, և տրութովիլիների պահանջած հողի աղդայնացումը ընկած են զարգացման այս գծի վրա, չնայած վոր հասարակական զարգացման արագության,

* Յարսկան մինիստր Ստոլիշենի մէջցառումներն ուղղված էին այն բանին, վորովեսքի ցարիզմի համար գյուղում ամուր հենարան ստեղծի՝ հանձին կուլափության։ Այդ առիթի Համար Կըտամուս դարձին կուլափության։ Այդ առիթի Համար Կըտամուս դարձին կուլափության։

«1906թ. նոյեմբերի 9-ին Ստոլիպինը հողային նոր որենք հրատարակեց զյուղացիներին համայնքից հանելու և խուսորներ կազմելու մասին։ Ստոլիպից հողային որենքով կործանվում էր հողի համայնական ոգտագործումը։ Յուրաքանչյուր զյուղացու առաջարկվում էր վերցնել իր հողաբաժինը առանձնապես տիբատիետելու համար, առանձնանալ համայնքից։ Գյուղացին առանձնապես տիբատիետելու համար, վոր առաջ նա իրավունք չուներ անեկարող էր վաճառել իր հողաբաժինը, վոր առաջ նա իրավունք չուներ անելու։ Հասարակությունը պարտավոր էր համայնքից գուրս յեկող գյուղացիներին հող հատկացնել մի տեղում (խուսոր, ոսրուր)։

Հարուստ գյուղացիները՝ կուլակները հնարավորություն ենին սահմանը՝ Հարուստ գյուղացիներից էժան գնով զնելու նրանց հողը: Այդ ընդունմին սակավագոր գյուղացիներից էժան գնով զնելու նրանց հողը:

արտադրողական ուժերի աճման և մասսաների շահերի առավելացն պույն պաշտպանության տեսակետից ագրարային հարցի «լուծման» այս յերկու ձևերի մեջ վիթխարի տարբերություն կա:

Այժմ մեզ հարկավոր ե քննել առևտրային յերկրագործության դարձացման հարցն ել թուսաստանում: Նախորդ չարգրանքն իր մեջ իրեւ նախադրյալ բովանդակում եր հանրածանոթ այն փաստը, վոր հետուեֆորմյան ամբողջ ժամանակաշրջանն աչքի յե ընկնում առևտրի ու փոխանակության աճումով: Այս հանդամանքը հավաստող վիճակադրական տվյալներ բերելը միանգամայն ամենալուրջ ե թվում մեզ: Բայց հարկավոր ե ցույց տալ նախ, թե ինչ չափով այժմյան գյուղացիական տնտեսությունն իրապես յենթարկված է արդեն շուկային, իսկ յերկրորդ՝ յերկրագործությունն ինչպիսի հատուկ ձևեր ե ընդունում շուկային յենթարկվելու կապակցությամբ:

Առաջին հարցի վերաբերյալ ամենից ավելի առույգ տվյալներ կան վարոնեթի զեմստվոյի բյուջետային վիճակադրության մեջ: Այսուել մենք գյուղացիական ընտանիքի ամբողջ յեկամտից, ու ծախսից (ընդհանուր գումարները բերվել են վերևում) կարող ենք զատել դրամական յեկամուան ու ծախսը: Ահա փոքրիկ աղյուսակ, վորը ցույց ե տալիս շուկայի դերը.

Ե՞նչ տոկոս են կազմում գյուղացու դրամական ծախսն ու յեկամուան ամբողջ ծախսի ու յեկամուանի

	%	%
	նկատմամբ	%
Զիազուրկներ	57,1	54,6
1 ձի ունցողներ	46,5	41,4
2 » »	43,6	45,7
3 » »	41,5	42,3
4 » »	45,4	40,8
5 և ավելի »	60,2	59,2
Միջինը	49,1	47,5

Այսպիսով նույնիսկ միջին գյուղացու տնտեսությունը չափազանց ուժեղ չափով շուկային ե յենթարկված, ել չենք խսում ունեոք և աղքատացած, կիսապրոլետար գյուղացիների տնտես-

ավելի սակավազր գյուղացիներ բոլորին գրկեցին հողից և քայլարմեցին: Ի հաշիվ սակավազր գյուղացիների հողապրկան անեց կուլակային խուսորների և սարուրների քանակը... Ստուփինն ուզում եր կուլակներին դարձնել փոքրիկ կարմածատերեր՝ ցարական ինքնակալության հավատարիմ պաշտպաններ»: Խմբ.:

առեթյան մասին: Այս պատճառով արմատապես ճիշտ չեղուղացիական տնտեսությանը վերաբերող յուրաքանչյուր դատողություն, վորը անտեսում ե շուկայի, փոխանակության, ապրանքային արտադրության դերիշխող ու աճող դերը: Ճորտատիրական լատիֆունդիաների ու կալվածատիրական հողատիրության խորտակում—այս միջոցը, վորի վրա XIX դարի վերջին ուսական գյուղացիության ամբողջ միտքն ե կենտրոնացած, կուժեղացնի և վոչ թե կթուլացնի շուկայի հշխանությունը, վորովհետեւ առևտրի ու ապրանքային արտադրության աճումը հետ ե պահպան աշխատավճարումով ու ստրկացմամբ:

Յերկրորդ հարցի վերաբերյալ անհրաժեշտ ե նշել, վոր կապիտալի մուտքը յերկրագործության մեջ յուրատեսակ պրոցես է, վորը չի կարելի ճշտորեն ըրբանել, յեթե սահմանափակվենք համընդհանուր, համառուսական տվյալներով: Յերկրագործությունն առևտրային ե գառնում վոչ մեկ անդամից, և զանազան տնտեսություններում ու պետության զանազան ըրջաններում վոչ միատեսակ ձևով: Ընդհակառակը, սովորաբար շուկան մի տեղում իրեն ե յենթարկում յերկրագործական բարդ տնտեսության մի կողմը, իսկ մի ուրիշ տեղում՝ մի այլ կողմը, ըստվորում մնացած կողմերը չեն անհետանում, այլ հարմարվում են «դլատվոր», այսինքն՝ փողային կողմին: Որինակ՝ մի վայրում գլխավորակներ կազմակերպվում ե առևտրային հատիկային տնտեսություն. վաճառքի համար արտադրվող գլխավոր արտադրանքը հացատիկներն են: Այսպիսի տնտեսության մեջ անասնապահցականությունը ստորագրական միակողմանի զարգացման ծայրահեղ դեպքերում՝ որեթե անհետանում ե: Որինակ՝ հեռավոր արևմուտքի «ցորենի գործարաններն» Ամերիկայում կազմակերպվում են յերբեմն մեկ ամառվա համար գրեթե առանց անսառունի: Ուրիշ վայրերում կազմակերպվում ե գլխավորապես առևտրային անասնապահական տնտեսություն. վաճառքի համար արտադրված գլխավոր արտադրանքները հանդիսանում են մսի ու կաթնային արտադրանքներ: Այսուղ զուտ-հողագործական տնտեսությունը համարվում ե անասնապահականին: Հասկանակի յե, վոր մեկ և մյուս դեպքում տնտեսության ծավալն ու տնտեսության կազմակերպության յեղանակները տարբեր կլինեն: Յանքերի տարածությամբ միանքուրենակ կաթնային կաթնատեսության մասի կարելի դատել յենթարկացին կաթնատեսության միատեսակ չամբ: Զի կարելի խոչը ու մանր տնտեսության միատեսակ

միանից վերցնել տափաստանի ցանքրարի, բանջարանողպանի, ծխախոտագործի, «կաթի ֆերմերի» (յեթէ գործածենք անգլիական արտահայտություն) համար և այլն:

Փոխանակության և առևտըի մուտք գործելը յերկրագործության մեջ առաջ ե բերում նրա մասնագիտացումը, և այդ մասնագիտացումը շարունակ աճում է: Տնտեսության միենույն ցուցանիշները (որինակ՝ ձիերի թիվը) առևտրային յերկրագործության զանազան շրջաններում տարրեր նշանակություն են ստանում: Յենթամայրագաղաքային վայրերի ձիազուրկ գյուղացիների մեջ, որինակ, կան խոշոր տնտեսատերեր, վորոնք ունեն, ընդունենք, կաթնասու անասուն, մեծ շրջանառություն են կատարում, վարձու բանվորներ են պահում: Իհարկե, ձիազուրկների և մեկ ձի ունեցողների ընդհանուր զանգվածի մեջ նման ֆերմերների թիվը միանդամայն չնչին է, բայց յեթե մենք պիտի վերցնենք ամբողջ յերկերն ընդդրկող համախառն տվյալներ, ապա չենք կարող հաշվի առնել կապիտալիզմի առանձին տեսակը յերկրագործության մեջ:

Այս հանգամանքի վրա հատուկ ուշագրություն պետք է դարձնել: Այս անտեսելով, չի կարելի ճիշտ պատկերացում կազմել կապիտալիզմի զարգացման մասին յերկրագործության մեջ և հեշտությամբ կարելի յե ընկնել պարզեցման սխալանքի մեջ: Յերկրագործության խսկական առանձնահատկությունները հաշվի առնելով միայն կարելի յե ընդդրկել պրոցեսի ամբողջ բարդությունը: Յերբ ասում են, թե իր առանձնահատկությունների չնորհիվ յերկրագործությունը կապիտալիստական զարգացման որենքներին չի յենթարկում, ապա այս միանգամայն սխալ է: Յերկրագործության առանձնահատկությունները ձգձգում են յերկրագործության յենթարկումը շուկային, այս այդպես և բայց և այնպես ամեն տեղ ու բոլոր յերկրներում առևտրային յերկրագործության անմասն պրոցեսն անդիմադրելի ընթացք ունի: Բայց առևտրային յերկրագործության այս առաջացման ձևերն խսկակեռ յուրատեսակ են և ուսումնասիրության առանձին մեթոդներ են պահանջում:

Մեր ասածը պարզելու համար ակնառու որինակներ վերցնենք առևտրային յերկրագործության զանազան շրջաններից Ռուսաստանում: Առևտրային հատիկային տնտեսության ըրջանում (Նորառուսիա—Անդրվոլգա) հացահատիկների հավաքի չափադաշտ աճուրուն աճուրում ենք տեսնում. 1864—1866 թվերին այս նա-

հանդիները կենտրոնական—սևահողային նահանգներից հետ ելին, բնակչության չնչին միայն 2,1 չետվերտ մաքուր հավաք ունեցին. 1883—1887 թվերին այս նահանգները կենտրոնից առաջ ելին և չնչին 3,4 չետվերտ մաքուր հավաք ունեցին: Յանքսերի ընդարձակում—ահա թե ինչն ե ամենից ավելի բնորոշ այս շրջանի համար հետուեփորմյան ժամանակաշրջանում: Հողի մշակությունն այստեղ շատ հաճախ միանգամայն պրիմիտիվ է. ամբողջ ուշագրությունն ուղղված է կարելույն չափ ավելի մեծ տարածություն վարելու կողմը բացառապես: XIX դարի յերկրորդ կեսին այստեղ կազմվել են ձեռնարկություններ՝ նման ամերիկյան «ցորենի գործարաններին»: Յանքսերի մեծությունը (վոր բարձր խմբերի գյուղացիների մոտ մինչև 271 դես. ե համուռմ ծխին) լիովին կարելի յե դատել տնտեսության ծավալի ու տիպի մասին: Մյուս շրջանում՝ արդյունաբերականում և մասնավորապես յենթամայրագաղաքայինում՝ ցանքսերի նմանորինակ ընդարձակման մասին խոսք անդամ լինել չի կարող: Վոչ թե առևտրային հատկային, այլ առևտրային անասնապահական տնտեսությունն ե առանձնապես բնորոշ հանդիսանում այստեղ: Մշակվող հողի դեսյատինների կամ բանող ձիերի թվով այստեղ արդեն չի կարելի ճիշտ պատկերացում ունենալ տնտեսության մասին: Շատ ավելի պիտանի չափանիչ հանդիսանում է կովերի թիվը (կաթնասնտեսություն): Խոշոր տնտեսության առաջադիմության հատկանիշն այստեղ վոչ թե ցանքսերի ընդարձակումը, այլ ցանքափոխության բարելավումն ու խոտացանությունն են հանդիպանում: Շատ ձի ունեցող ծիսերն ավելի քիչ են. կարող ե պատահել, վոր ձիերի թվի պակասելն անդամ տնտեսության առաջադիմությունն է ցույց տալիս յերեմն: Սրա հանդեպ այստեղի գյուղացիները կովերով ավելի հարուստ են, քան մնացած Ռուսաստանում: Պահ թլաղովիշչենսկին գեմսովային վիճակադրության ամփոփումների հիման վրա ծիսին միջին թվով հաշվում է 1,2-ական կով. Գետերբուրդի, Մոսկվայի, Տվերի և Սմոլենսկի նահանգների 18 գավառում ունենք 1,6-ական կով, իսկ միայն Գետերբուրդի նահանգում՝ 1,8-ական կով ծիսին: Յել առևտրական կապիտալը և արտադրության մեջ ներդրվող կապիտալը գերազանցապես անասնապահական արտադրանքի ուղղությամբ են գործում այստեղ: Յեկամութի չափն ամենից ավելի կթու կովերի թվից ե կախված: Կազմվում են «կաթնատեսական ֆերմաներ»: Զարգանում է յերկրագործական բանվորների վարձումն ունենոր

Դյուլացիների կողմից. մէնք արդեն նշել ենք, վոր ուժասպառ կենտրոնից յերկրագործական աշխատանքների համար զեղի արդյունաբերական նահանգներն են գալիս։ Մի խոսքով՝ հասարակական-անտեսական միենույն հարաբերություններն այստեղ յերեան են գալիս բոլորովին այլ ձևով, դուա-յերկրագործականին վոչ նման հողամշակութային պայմաններում։

Խակ յեթե հատուկ մշակույթները, որինակ, ծխախոտագործությունը, կամ յերկրագործությունը վերցնենք արտադրանքի տեխնիկական մշակության հետ միացած (ողեհանության և հակնդեղ-շաքարային, յուղագործական, գետնախնճոր-ուլային և այլ արտադրություններ), ապա այստեղ ձեւնարկողական հարաբերությունների արտահայտման ձեւերը նման չեն լինի՝ վոչ նրանց, վոր գոյություն ունեն առեւտրային հատիկային տնտեսության ժամանակ, և վոչ ել նրանց, վորոնք կազմվում են առեւտրային անասնապահության ժամանակ։ Այստեղ չափանիշ պետք է վերցնել կամ հատուկ ցանքսերի քանակը, կամ արտադրանքի տեխնիկական մշակման այն ձեռնարկության չափը, վոր կազմած է ալյալ անտեսության հետ։

Յերկրագործության համախառն վիճակագրությունը, վորը միայն տարածության չափի կամ միայն անասունի քանակի հետ դործ ունի, ձեւերի այս ամբողջ բազմազանությունը հաշվի չի առնում, և այդ խակ պատճառով շատ անդամ միայն նման վիճակագրության տեղեկանքի վրա հիմնված յերգակացությունները սխալ են դուրս գալիս։ Առեւտրային յերկրագործության աճումը շատ ավելի արագ է ընթանում, փոխանակության ազդեցությունն ավելի լայն է տարածվում, կապիտալը կերպարանափոխում է գյուղատնտեսությանը շատ ավելի խորը, քան կարելի յե մտածել ընդհանուր, համախառն թվերի և վերացական միջնինի վրա հիմնված։

VII

Այժմ ամփոփենք վերկում շարադրածն աղբարային հարցի ու աղբարային ճգնաժամի եյության մասին՝ Ռուսաստանում XIX դարի վերջին։

Վո՞րն է այս ճգնաժամի եյությունը։ «Муниципализация или раздел в собственность» (Вильна, 1907 г.) բրոշյուրի մեջ Մ. Շանինը պնդում է, վոր մեր յերկրագործական ճգնաժամը հողամշակույթային ճգնաժամ է, վոր նրա ամենից խոր արմատները Բուսաստանում անսահման ցածր աստիճանի վրա գտնվող

յերկրագործական տեխնիկայի բարձրացման անհրաժեշտությունն է, դաշտավարության բարձր սխառեմներին անցնելու անհրաժեշտությունը և այլն։

Այս կարծիքը ձիւտ չե, վորովհետև այն չափազանց վերացական է։ Բարձր տեխնիկայի անցնելու անհրաժեշտությունը կասկածից դուրս է, բայց նախ այդ անցումն իրավես կատարվել է Ռուսաստանում 1861 թվից հետո։ Վորքան ել դանդաղ է առաջարկմությունը, բայց միանգամայն անիշենիլի յե, վոր թե կալվածատիրական և թե գյուղացիական անտեսությունը հանձննառներու վորքամասնության անցումն ելին խոտացանության, բարելավիած գործիքներ բանեցնելուն, հողի ավելի սխտեմատիկ ու խնամքու պարաբռացման և այլն։ Յեվ քանի վոր յերկրագործական տեխնիկայի այս դանդաղ առաջարկմությունն ընդհանուր պլրոցես է, վոր սկսված է 1861 թվից, ապա ակներեւ է, վոր այն ցույց տալը գեռ բավական չե բացարելու համար յերկրագործական ճգնաժամի ամենքի կողմից ճանաչված սրումը XIX դարի վերջին։ Յերկրորդ՝ աղբարային հարցի «լուծման»՝ կյանքում նշված յերկու ձեւերը, և նրա ստոլիալինյան լուծումը վերիից՝ կալվածատիրական հողատիրությունը պահպանելու, համայնքը վերջնականապես խորտակելու, կուլակների կողմից համայնքը կողոպտելու միջոցով, և կյուղացիական (տրուգովիկյան) լուծումը ներքինից կալվածատիրական հողատիրությունը խորտակելու և ամբողջ հողն ազգայնացնելու միջոցով։ այս յերկու լուծումն ել յուրատեսակ կերպով գյուրացնում են անցումը դեպի բարձր տեխնիկա, ընթանում են հողամշակույթային առաջարկմության գծով։ Միայն մեկ լուծումն այս առաջարկմությունը հիմնում է գյուղացիական չքավորությանը յերկրագործությունից դուրս մղելու պլրոցեսի արագացման վրա, մյուսը՝ ճորտատիրական լատիֆունդիտաները վոչնչացնելու միջոցով՝ աշխատավճարումների գուրմադման պրոցեսի արագացման վրա։ Անկասկածելի իրողություն է, վոր գյուղացիական չքավորությունն իր հողերի վրա չափազանց վատ և «անտեսավարում»։ Ուրեմն կասկածից դուրս է, վոր յեթե նրա հողերը մի խումբ ունենոր գյուղացիության հեղեղին ու կողոպտեին հանձնվեն, ապա հողամշակույթը կրաքարանա։ Սակայն ճիշտ նույնպիսի իրողություն է նաև այն, վոր աշխատավճարումների ու ստրկացման միջոցով շահագործվող կալվածատիրական հողերը ևս չափազանց վատ՝ նադելային հողերից ավելի վատ են մշակվում (հի-

Հեցեք վերևում բերված տվյալները՝ 1 դեռ. բաժնեհողի բերքը՝ 54 փութե, տնտեսավարականը՝ 66 փ., կիսրար մշակությանը՝ 50 փ. և գյուղացիների տարով փորձագիրն՝ 45 փութ): Կարմածատիրական տնտեսության աշխատավճարային սիստեմը յերկրագործության անասելի հետամնաց յեղանակների պահպանությունն ե, բարբարոսության հավերժացումն ե թե մշակույթի մեջ և թե ամբողջ հասարակական կյանքում: Կասկածից դուրս ե, ուրեմն, վոր յեթե աշխատավճարումներն արմատախիլ արվեն, այսինքն՝ կարմածատիրական ամբողջ հողատիրությունն իսպատ (ընդլորում առանց փրկագնի) վուչչացի, ապա հողամշակույթը կրաքարանա:

Հետևարար աղբարային հարցի ու աղբարային ճղնաժամի ելությունն այն չե, վորակեսզի հողամշակույթի բարձրացման արդելքները վերացվեն, այլ այն ե, թե ի՞նչ ձևով վերացվի այդ արգելքը, վո՞ր դասակարգը և ի՞նչ մեթոդներով անցկացնի այդ վերացումը: Իսկ յերկրի արտադրողական ուժերի զարգացման արգելքների վերացումն անպայման անհրաժեշտ ե բառի վոչ միայն սուրբեկտիլ իմաստով, այլև որյեկտիվ, այսինքն՝ այդ վերացումն անխուսափելի յե, և վոչ մի ուժ չի կարող կանխել այն:

Մ. Շանհնի սիսան այն ե, վոր անում են նաև ուրիշ շատ գրողներ աղբարային հարցի վերաբերմանը, վոր նու յերկրագործական տեխնիկայի բարձրացման անհրաժեշտության մասին ճիշտ դրությունը վերցրել ե ինստ վերացական կերպով, առանց հաշվի առնելու ուստական յերկրի հարցը վերաբերման անհրաժեշտության մասին արտադրողական արգելքը, առանց հաշվի առնելու ուստական յերկրի հարցը վերաբերման անհրաժեշտության մասին արտադրողական արգելքը: Առուսական գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման գլխավոր ու հիմնական արգելքը նորատիրական մնացորդներն են, այսինքն՝ ամենից առաջ աշխատավճարումներն ու սուրբկացումը, ապա ճորտատիրական հարկերը, գյուղացու անիրավականարությունը, նրա նվաստացումը բարձր գասերի հանդեպ և այլն և այլն: Ճորտատիրության այս մնացորդների վերացումը վաղուց տնտեսական անհրաժեշտություն ե զարձել, և XIX դարի վերջին յերկրագործության ճղնաժաման անահաման ուժությամբ սրվեց հենց այն պատճառով, վոր միջնադարականությունից նույսատանի աղատիկելու պրոցեսը չափագանց ուշացավ, վոր աշխատավճարումներն ու սորիացումը չափագանց յերկար «ապրեցին»: 1861 թվից հետո նրանք կենսագրկվում եյին այնպիսի գանդաղությամբ, վոր ճորտատիրությունից արագորեն

ճաքըլելու համար նոր որդանիզմը բանի միջոցների պահանջն զգաց:

Վո՞րն ե տնտեսական յերկրագործության տնտեսական այս նոր որդանիզմը: Նախորդ գլխում մենք աշխատեցինք առանձին մանրամասնությամբ ցույց տալ այս, վորովհետեւ այս առթիվ առանձնաւայիս սխալ պատկերացումն ունեն լիրերալնարողնիկական բանակի տնտեսագետները: Նոր տնտեսական որդանիզմը, վորը մեղ մոտ դուրս ե գալիս ճորտատիրական կեղեկից, առետրային յերկրագործությունն ու կապիտալիզմն են: Կարմածատիրական տնտեսության տնտեսագրությունը, վորչափով վոր այն չի տարվում աշխատավճարումների միջոցով ու նադելային գյուղացիների ստրկացմամբ, լիովանար պարզությամբ կապիտալիստական գծեր ե ցուցաբերում: Գյուղացիական տնտեսության տնտեսագրությունը, վորչափով վոր մենք կարողանում ենք թափանցել համայնքի ներսը և տեսնել, թե ինչ ե կատարվում կյանքում՝ հակառակ նադելային հողատիրության պաշտոնական հավասարաբության, միշտ և ամենուրեք նույնակես զուտկապիտական գծերը ե ցուցաբերում: Զնայած բոլոր արդելքներին՝ առետրային յերկրագործությունը նույսատանում անընդհատ աճում է և այս առետրային յերկրագործությունն անխուսափելիորեն կապիտալիստական ե գառնում, թեև այդ գառնալու ձեկերը բազմազան են և առանձին շրջաններում ձևափոխվում են:

Ինչո՞ւմն ե կայանալու միջնադարյան կեղեկի այն բանի վերացումը, վորը տնտեսական նոր որդանիզմի հետագա ազատ զարգացման համար անհրաժեշտություն ե դարձել: Միջնադարյան հողատիրության վերացման մեջ ե կայանում այն: Մինչեւ այժմ նույսատանում միջնադարյան ե հանդիսանում ե կարմածատիրական հողատիրությունը և դրայի մասով նաև գյուղացիականը: Մենք անսանք, թե ինչպես տնտեսական նոր պայմանները խորակում են հողատիրության այլ միջնադարյան շրջանակներն ու պատվարները, հարկադրելով չքալիք գյուղացուն վարձակալության առաջ իր ավանդական հողակառներից՝ և' բաժնային, և' զնոտի, և' կարմածատիրողից վարձակալած հողերից: Կարմածատիրական հողերի բաժանումը ևս աշխատավճարային մշակության, գյուղացիական տարեկան վարձակալության և տնտեսագրաբական

ցանքսի համար, ցույց ե տռալիս, վոր անտեսության նոր սխալ տեմները կառուցվում են հին, միջնադարյան հողատիրության շրջանակներից դուրս:

Այդ հողատիրությունը կարելի յէ վոչնչացնել միանդամից, վճռականորեն խղելով անցյալի հետ: Այսպիսի միջոց ե հանդիսանում հողի ազգայնացումը, վորը և այլելի կամ պակաս հետևողականությամբ պահանջում ելին գյուղացիության բոլոր ներկայացուցիչները 1905—1907 թվերի ըրջանում: Հողի մասնավոր սեփականատիրության վոչնչացումն ամենաեն չի փոխում առևտրային ու կապիտալիստական հողատիրության բուժուական հիմքերը: Զկա այլելի սխալ կարծիք, քան այն, վոր իր թէ հողի ազգայնացումը վորեւ ընդհանուր բան ունի սոցիալիզմի կամ նույնիսկ հողովագործության հավասարացության հետ: Ինչ վերաբերում ե այցիալիզմին, ապա հայտնի յէ, վոր նաև ապրանքային տնտեսության վոչնչացումն ե: Իսկ ազգայնացումը հողը պետության սեփականություն դարձնելն ե, և այսպիսի դարձումը բոլորովին չի դիմչնում մասնավոր տնտեսությանը հողի վրա: Արդյոք հողը սեփականություն կամ ամրող յերկրի, ամրող ժողովրդի «կարողությունը» կլինի, դրանից չի փոխվում տնտեսության սխանմը հողի վրա ճիշտ այնպես, ինչպես և չի փոխվում ունենոր գեղացու տնտեսության (կապիտալիստական) սխանմն այն բանից, թէ արդյոք նա հողը գնում է «ընդմիջություն», արդյոք վարձակալում ե կարգածատիրական կամ պետական հող, արդյոք «հավաքում ե» ընկած, չունեոր գյուղացիների հողաբաժինները: Քանի վոր փոխանակությունը մնում է, սոցիալիզմի մասին խոսելը ծիծաղելի յէ: Իսկ յերկրագործական արտադրանքի և արտադրության միջոցների փոխանակությունը հողատիրության ձեւերից բոլորովին կախում չունի (փակագծի մեջ նկատեմ, վոր յէս այստեղ ներկայացնում եմ ազգայնացման միայն տնտեսական նշանակությունը և չեմ պաշտպանում այն վորպես ծրագիր, այսպիսի պաշտպանություն յէս արել եմ վերեւում հիշատակված աշխատության մեջ):

Ինչ վերաբերում ե հավասարարության, ապա մենք արդեն ցույց ենք տվել վերեւում, թէ այն ինչպես ե կիրառվում իրականում՝ բաժնեհողերի բաշխման ժամանակ: Մենք տեսանք, վոր համայնքի ներսում բաժնեհողերը բաշխվում են բավականաչափ հավասար կերպով, թեթև չափով միայն շեղելով դեպի հա-

րուստները: Սակայն այս հավասարարությունից վերջինիքո շատ քիչ բան ե մնում՝ չքայլորության կողմից հողը վարձակալության տրվելու և հարուստների կողմից վարձակալությունը կենարունացնելու հետևանքով: Պարզ ե, վոր հողատիրության վոչ մի հավասարարություն ուժ չունի վերացնելու իրական հողոդառագործության անհավասարությունը, քանի գույքային տարբերություն կա տնտեսատերերի միջև և քանի դոյլություն ունի այդ տարբերությունները սրող փոխանակության սխատեմը:

Ազգայնացման տնտեսական նշանակությունը բոլորովին այն չե, վոր միջու և ամենուրեք վորոնում են: Նրա նշանակությունը վոչ թե բուժուական հարաբերությունների դեմ պայքարելու, այլ ճորտատիրական հարաբերությունների դեմ պայքարելու մեջ ե կայանում (ազգայնացմը, ինչպես վաղուց ցույց ե տվել Մարքը, ամենից հետևողական բուժուական միջոց ե): Միջնադարյան հողատիրության խայտաբղետությունը դանդաղեցնում ե տնտեսական զարգացումը, դասային ըրջանակները խանգարում են առևտրական ըրջանառությունը, չին հողատիրության և նոր տնտեսության անհամապատասխանությունն ստեղծում ե սուր հակասությունները. կալմածատերերը լատիֆունդիստների չնորհիվ յերկարացնում են աշխատավճարումների գոյությունը, գյուղացիները փակիված են վոնց վոր գետտոյի* մեջ, բաժնային հողատիրության մեջ, վորի ըրջանակները կյանքն ամեն քայլափոխում խորտակում ե: Ազգայնացումն խոպան սրբում ե միջնադարյան բոլոր հարաբերությունները յերկրագործության միջից, խորտակում ե արհեստական բոլոր պատվարները հողի վրա, հողը դարձնում ե իսկապես աղատ—ում համար. յուրաքանչյուր քաղաքացու համար: Ցոլորովին վոչ: Զիազուրիկ գյուղացիների (այսինքն՝ 3/4 միլիոն ծիսի) աղատությունն, ինչպես տեսանք, նաղելային հողերը հանձնելու մեջ ե կայանում: Հողն աղատ և գառնում տնտեսատիրոջ համար, նրա համար, ով իսկապես ուզում ե և կարող ե այնպես մշակել հողը, ինչպես այն պահանջում են տնտեսության արդի պայմաններն ընդհանրապես և հա-

* Գետտոններ — հասուն գաղաքի մնացած բնակչությունից առանձնացած թաղամասներ ելին, վորոնց մեջ միայն իրավունք ունելին ապրելու հրեաները: Գետտոններ գյուղյուն ունելին Յելբուղյութ շատ քաղաքներում միջին գարերում: Հրեաներին հատկացվում ելին ամենից նեղ, մութ, կեղաստ թաղամասները: Գետտոյի սահմաններից գուրս հրեաները կարող ելին ինակվել միայն իշխանությունների թույլավությամբ: Խմբ:

մաշխարհային շուկայինը մասնավորապես։ Ազգայնացումը կշտապեցներ ճորտանիրության մահը, զուտ-բուրժուական ֆերմերության զարգացումը՝ ամեն տեսակի միջնադարյան խլամից ազատ հռովի վրա։ Ահա ազգայնացման խևական պատմական նշանակությունը Ռուսաստանում, ինչպես վոր այն առաջացել է XIX դարի վերջին։

Ինչ վերաբերում է հողատիրությունը կապիտալիզմի համար մաքրելու մյուս՝ ոբյեկտիվորեն վոչ անհնարին ուղղուն, ինչպես տեսանք, վոր հարուստների կողմից համայնքն արագորեն կողովատելու և ունենոր գյուղացիության մոտ հողի մասնավոր սեփականությունն ամրապնդելու մեջ ե կայանում այն։ Այս դեպքում՝ աշխատավճարումների ու ստրկացման դլիսավոր աղբյուրն անձեռնմխելի յե մնում, կալվածատիրական լատիֆունդիաները մնում են։ Պարզ ե, վոր կապիտալիզմի համար ուղիներ մաքրելու այսպիսի յեղանակն առաջնից անչափ ավելի քիչ չափով և ավահովում արտադրողական ուժերի զարգացումը։ Քանի վոր պահպանվում են լատիֆունդիաները, անխուսափելի յե և ստրկացած գյուղացու, կիսրարության, միամյա մանր վարձակալության, գյուղացիական ինվենտարով «կալվածատիրական» հողերի մշակության պահպանումը, այսինքն՝ պահպանումն ամենից հետամնաց մշակույթի և ասիստական բարբարոսության և այն ամենի, վոր գյուղական նահապետական կենցաղ և կոչվում։

Զարդարող բուրժուական Ռուսաստանի աղբարային հարցե «լուծման» իմ կողմից նշված յերկու յեղանակը համապատասխանում է կապիտալիզմի զարդացման յերկու ուղիներին յերկրագործության մեջ։ Յես այդ ուղիներն անվանում եմ պրուսական և ամերիկական։ Առաջինը բնութագրվում է նրանով, վոր հողատիրության միջնադարյան հարաբերությունները մեկ անդամից լուծարքի չեն յենթարկվում, այլ դանդաղորեն հարմարվում են կապիտալիզմին, վորը յերկար ժամանակ ուժի մեջ և պահում կիսափեռդաշտական գծերը։ Պրուսական կալվածատիրական հողատիրությունը բուրժուական հեղափոխությամբ չի ջախջախվել, այլ մնացել է անխառ և հիմք է դարձել «յունկերական» տնտեսության, վորն իր հիմքում կապիտալիստական է, սակայն չի կարող կառավարվել առանց գյուղական բնակչության վորոշիկախումբի, ինչպես Cesindeordnung¹ և այլն։ Սրանով ամրապնդ-

վել է յունկերների սոցիալական և քաղաքական տիրապետությունը յերկար տասնամյակներով՝ 1848 թվից հետո, և գերմանական յերկրագործության արտադրողական ուժերի զարգացումն ընթանում էր անհամեմատ ավելի դանդաղ, քան Ամերիկայում։ Այսեղ, ընդհակառակը, կապիտալիստական յերկրագործության հիմք ծառայեց վոչ թե խոշոր կալվածատերերի հին ստրկատիրական տնտեսությունը (քաղաքացիական պատերազմը ջախջախեց ստրկատիրական տնտեսությունները), այլ ազատ ֆերմերի ազատ տնտեսությունն ազատ հողի վրա, ազատ՝ մի կողմից բոլոր միջնադարյան կապանքներից, ճորտատիրությունից ու Փեոդալիզմից, իսկ մյուս կողմից՝ նաև հողի մասնավոր սեփականության կապանքներից։ Ամերիկայում հողերը բաժանվում եյին նրանկայական հողային պահեստից նոմինալ վճարով, և այնաեղ այժմ հողի մասնավոր սեփականությունը զարգացավ միայն նոր, լիովին կապիտալիստական հիմունքով։

Կապիտալիստական զարգացման այս յերկու ուղիները Ռուսաստանում միանդամայն պարզ գծագրուեցին 1861 թվից հետո։ Կալվածատիրական տնտեսության առաջադիմությունն անկամածելի յե, ըստվորում այս առաջադիմության դանդաղությունը պատահական չե, այլ անխուսափելի յե, քանի ողահպանվում են ճորտատիրության մնացորդները։ Անկամածելի յե նույնական, վոր ինչքան ազատ է գյուղացիությունը, նույնքան քիչ ճնշում ունեն նրա վրա ճորտատիրական իրավունքի մնացորդները (որինակ՝ հարավում բարենպաստ այս բոլոր պայմանները կան)։ Վերջապես, ինչքան գյուղացիությունն ընդհանուր առմամբ լավ և ազահովված հողով, այնքան ավելի ուժեղ է գյուղացիության կազմալուծումը, այնքան ավելի արագ և ընթանում գյուղական ձեռնարկող-ֆերմերների դասակարգի կազմվելը։ Յերկրի հետագա զարգացման վողջ խնդիրն այն է, թե զարգացման այդ ուղիներից վորը վերջնականացնելու մյուսին և սրա համեմատ՝ վոր զասակարգը կիրառական անհրաժեշտ ու անխուսափելի կերպարանափոխությունը, հին բարին-հողատերն արդյոք թե ազատ գյուղացի ֆերմերը։

Մեղ մոտ հաճախ մտածում են, վոր հողի աղղայնացումը

շատ գծեր։ Որինակ, նրա պարագագներից մեկն առում էր. «Ծառան պարտավոր և համբերությամբ կրել իրեն արշող բանավոր նկատողությունները և իրավունք չունի վերագրանքի մասին մտածել, յեթե անդամ պարոնն այդ դորժագրելու ժամանակ թույլ է ավել խիստ արտահայտություններ»։ Խմբ։

* «Gesindeordnung» — կանոնադրություն է ծառայի, չելյագի ժաման, վոր այն ժամանակ (1908 թ.) պահպանել եր ճորտատիրության իրավունք

նշանակում ե հողի բացարկում առևտրական շրջանառությունից : Անպայման այս տեսակետի վրա յեն կանգնած առաջավոր դյուզացիների մեծամասնությունն ու զյուղացիության խեռլուզները : Բայց նման կարծիքն արմատափես սխալ է : Ուղղակի սրա հակառակն է : Հողի մասնավոր սեփականությունն արգելք ե հանդիսանում կապիտալի աղատ կիրառմանը հողի նկատմամբ : Այս պատճառով հողը պետությունից աղատ վարձակալելու ժամանակ (բուրժուական հասարակության մեջ հողի աղջայնացումը հենց այս իմաստն ունի) հողն ավելի ուժեղ կերպով ե ներդրավում առևտրական շրջանառության մեջ, քան հողի մասնավոր սեփականության տիրապետության ժամանակ : Կապիտալի աղատ կիրառումը հողի նկատմամբ, մրցության աղատությունը յերկրագործության մեջ չատ ավելի մեծ ե աղատ վարձակալության, քան մասնավոր սեփականության ժամանակ : Հողի աղջայնացումն այսպես ասած լենդլորդիզմ ե առանց լենդլորդի : Իսկ թե ինչ ե նշանակում լենդլորդիզմ յերկրագործության կապիտալիստական զարգացման գործում, այդ մասին յերեւլի խորությամբ դատում ե Մարքսը «Հավելյալ արժեքի թեորիաներում» : Յես նրա դատողությունները բերել եմ արբարային ծրագրի մասին վերելում հիշատակված աշխատության մեջ, բայց հարցի կարեռությունը նկատի առնելով, թույլ եմ տալիս ինձ մի անդամ ևս կրկնելու այն այստեղ * :

Ռիկարդոյի** ռենտայի թեորիայի պատմական պայմաններին նվիրված պարագաՓում («Theorien über den Mehrwert», II Band, 2 Thoil Stuttgart 1905, S. 6—7)*** Մարքսն ասում է, վոր Ռիկարդոն և Անդերսոնը «յելում են մի հայացքից, վորը մայր ցամաքում շատ տարրինակ ե թվում» : Այսինքն՝ նրանք յենթագրում են, վոր «բոլորովին դոյլություն չունի հողային սեփականություն, վորպես արգելք կապիտալի վորեն կիրառմանը հողի նկատմամբ» : Առաջին հայացքից այս հակառակություն է, վորովհետեւ հետեւ հենց Անդիլիայում առանձնապես լրիվ պահպանված ե համարվում ֆեոդալական հողային սեփականություն : Բայց Մարքսը բացարձում է, վոր հենց Անդիլիայում կապիտալն «այնպես ունինա կերպով եր հաշիվ տեսնում տրադիցիոն յերկրագործական

* ՏԵ՛՛ Սочинения, 4. II, Էջ 373—375 : Խմբ. :

** Ռիկարդո Գավիդ (1772—1823)—անգլիական նշանավոր տնտեսագետ, բուրժուական կլասիկ քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկն է : Խմբ. :

*** —«Հավելյալ արժեքի թեորիան», II դիրք, 2-րդ մաս, Շտուտգարդ, 1905 թիվ, Էջ 6—7 : Խմբ. :

կարդերի հետ, ինչպես և վոչ մի տեղ աշխարհում» : Այս տեսակետից Անգլիան «ամենից հեղափոխական յերկիրն ե աշխարհում» : «Պատմականորեն ժառանգած բոլոր կարդերն այնտեղ, վորտեղ նրանք հակասում ելին կապիտալիստական արտադրության պայմաններին յերկրագործության մեջ կամ անհամապատասխան ելին այդ պայմաններին, անխնայորեն մաքրվեցին. վոչ միայն փոխվել ե զյուղական շենքերի տեղադրությունը, այլ մաքրվել են հենց այդ շենքերը. վոչ միայն մաքրվել են բնակարաններն ու զյուղատնտեսական բնակչության բնակալայրերը, այլև ինքն այդ բնակչությունը. վոչ միայն մաքրվել են տնտեսության հնագույն կենտրոնները, այլև ինքն այդ տնտեսությունը : Գերմանացիների մոտ, շարունակում ե Մարքսը, տնտեսական կարգ ու կանոնները վորովցիցին համայնական հողերի ավանդական հարաբերություններով (Feldmarken), տնտեսական կենտրոնների տեղադրություններով, ժողովրդի կուտակման հայտնի վայրերով : Անգլիացիների մոտ յերկրագործության պատմական կարգ ու կանոններն աստիճանաբար ստեղծվեցին կապիտալիզմի կողմից XV դարից սկսած : Անգլիական «clearing of estates» («հողերի մաքրում») տեխնիկական արտահայտությունը մայր ցամաքի վոչ մի յերկրում չի պատահում : Իսկ ի՞նչ ե նշանակում այս cleaning of estates : Այս նշանակում է, վոր բոլորովին հաշվի չելին առնում վոչ նստակյաց բնակչությանը՝ նրան հեռացնում ելին, վոչ գոյություն ունեցող գյուղերը՝ նրանց տալիս ելին համելելու, վոչ տնտեսական կառուցվածքները՝ նրանց տալիս ելին համելելու, վոչ գյուղատնտեսության տվյալ ձեռերը՝ նրանց փոխում ելին մեկ հարվածով, որինակ՝ վարելահողն անառունի համար արոտ դարձնելով, մի խոսքով՝ արտադրության բոլոր պայմանները չելին ընդունում այն ձեռով, վոր գոյություն ունելին ըստ տրադիցիայի, այլ պատմականորեն ստեղծում ելին այդ պայմաններն այնպիսի ձեռով, վորպեսզի նրանք յուրաքանչյուր տվյալ դեպքում համապատասխան ելին կապիտալի ամենից ձեռնոու դորձադրության պահանջներին : Այսչափով, ուրեմն, իսկապես հողի սեփականությունը գյուրդյուն չունի, վորովհետեւ այս սեփականությունը կապիտալին—Փերմերին—ընձեռում է աղատորեն տնտեսակարել բացառապես գրամական յեկամուտով շահագրգոռված : «Պոմերանիայի վորեն կարլածատեր» (Մարքսը նկատի ունի Ռողերերապուտին *), վորի ունտայի թեորիան փայլուն կերպով ու ման-

* Ռոդրիկստուս-Յագեցով Կ. (1805—1875) —գերմանական տնտեսագետ, բուրժուական կլասիկ քաղաքատնտեսության կողմնակից : Խմբ. :

բամասնորեն հերքում ե նա տվյալ յերկի մեջ), «վորի դլխում միայն և կա՝ պապէնական համայնական հողեր, տնտեսության կենտրոններ, հողատիրության կողեզիա և այլն, կարող ե սարսափահար ձեռքերն իրար խիել Ռիկարդոյի յերկրագործական հարաբերությունների զարգացման մասին ունեցած «վոչ-պատմական» հայացքի առթիվ»։ Բայց իրապես «անդիմական պայմանները միակ պայմաններն են, վորոնց մեջ աղեկվատորեն (իդեալական կատարելությամբ) զարգացավ հողի լիակատար սեփականությունը, այսինքն՝ կապիտալիստական արտադրությամբ ձևափխոված հողի սեփականությունը։ Անդիմական թեորիան (այսինքն՝ Ռիկարդոյի ունատյի թեորիան) այս կետում ժամանակակից, այսինքն՝ կապիտալիստական արտադրության յեղանակի համար կլասիկ թեորիան ե»։

Հողերի այս մաքրումն Անդիմայում ընթանում եր հեղափոխական ձեերով, զյուղացիական հողատիրությունը բանությամբ խորտակելով։ Իր դարն ապրած հնի խորտակումը բացարձակորեն անխուսափելի յե նաև թուսաստանում, բայց տասնիններորդ դարը (հենց քսանելորդ դարի առաջին 7 տարին ել) դեռ չեն վճռել հարցն այն մասին, թե վոր դասակարգը և ինչ ձեռվ պիտի կատարի մեջ համար անհրաժեշտ այս խորտակումը։ Վերեռում մենք ցույց տվինք, թե ներկայումս վորն ե հողերի բաշխման հիմքը թուսաստանում։ Մենք տեսանք, վոր 10½ միլիոն զյուղացիական ծիսեր 75 միլ. դեսյատին հողով կանդնած են լատիֆունդիաների 30.000 տիրապետողների հանդեպ 70 միլ. դեսյատին հողով։ Հնարավոր յելքերից մեկն այն պայքարի, վոր չի կարող չբորբոքվել այսպիսի հողի վրա, այն և հանդիսանում, վոր տասը միլիոն ծիսերի հողատիրությունը զրեթե կրկնապատկի, իսկ վերեկի յերեսուն հալարի հողատիրությունը կանհետանա։ Քննենք հնարավոր այս յելքը զուտ թեորիականորեն, այն տեսակետից, թե XIX դարի վերջին ազրարային հարցն ինչպես գասակորվեց թուսաստանում։ Ի՞նչպիսի հետեանքներ պետք ե ունենային այսպիսի փոփոխությունները։ Հողատիրական հարաբերությունների տեսակետից ակներեւ ե, վոր միջնադարյան նաղելային և միջնադարյան կալվածատիրական հողատիրությունները նորից կիբերադասավորվելին։ Հենը կԾնջվեր հիմնովին։ Հողատիրական հարաբերությունների մեջ ալանդական վոչինչ չեր մնա։ Իսկ ի՞նչ ուժ կվորոշեր հողատիրության նոր հարաբերությունները։ Համաստրաբության «սկզբունքը»։ Այսպես մտածելու հակումն ունի տառ-

ջավոր գյուղացին, վորը նարողնիկական գաղափարախոսությամբ և շոշափված։ Այսպես և մտածում նարողնիկը։ Բայց այս պատրանք ե։ Որենքով ճանաչված և սովորութով սրբազործված հալասարաբության հողատիրության հարմարեցումն ստացվածքային կարողության տարբերություններին։ Յեվ հաղարապատիկ անդամներ թե ուռական և թե արեմտայելվողական տվյալներով հաստատված այս տիտեսական փաստի հիման վրա պնդում ենք, վոր հավասարաբության նկատմամբ յեղած հույսը վորպես ցնորք կցըլեր, իսկ հողատիրության վերադասավորումը կմնար վորպես միակ կայուն հետևանք։ Մի՞ծ ե արդյոք այսպիսի հետեանքի նշանակությունը։ Չափազանց մեծ և այն, վորովհետեւ ուրիշ վոչ մի միջոց, ուրիշ վոչ մի ուժորմ, ուրիշ վոչ մի կերպարանափոխություն նման լիուլի հավատական տալ չեր կարող թուսաստանի յերկրագործական տեխնիկայի ամենից արագ, լայն ու ազատ առաջադիմության, ինչպես և ճորտատիրության, դասայնության և ասիսականության բոլոր հետքերի անհետացմանը մեր կյանքից։

Տեխնիկայի առաջադիմությունը—թերեւս առարկեն մեղ։ Բայց մի՞թե վերեւում սուույլ տվյալներով ցույց չտրվեց, վոր կալվածատիրական տնտեսությունը ինարկե բարձր և գյուղացիական տնտեսությունից թե խոտացանությամբ, թե՝ մեքենաներ կիրառելով, թե՝ պարարտացումով, թե՝ անսասունի վորակով և այլն։ Այս, այս ապացուցված ե և այս իրողությունը միանգամայն անկասկածելի յե։ Սակայն չպետք ե մոռանալ, վոր տնտեսական կազմակերպության, տեխնիկայի և այլնի այս բոլոր տարրերությունները գումարվում են բերքատվության մեջ։ Իսկ մենք տեսանք, վոր կիսար և այլ պայմանով զյուղացիների մշակության տակ գտնված կալվածատիրական հողերի բերքը ցածը և նաղելային հողերի բերքից։ Ահա թե ինչպիսի հանդամանք գրեթե միշտ մոռացության են տալիս, յերբ խոսում են կալվածատիրական ու գյուղացիական տնտեսությունների հողամշակութային մակարդակի մասին թուսաստանում։ Կալվածատիրական տնտեսությունն այն չափով ե բարձր, ինչ չափով վոր այն կապիտալիստականորեն և վարպում։ Յեվ ամբողջ Եյությունն այն ե, վոր XIX դարի վերջին այս «ինչ չափովը» մեր կենարունում աշխատավճարումներն ե թողել տնտեսության տիրապետող սիստեմ։ Ինչ չափով ստրկացած զյուղացին իր պապէնական գործիքներով ու յեղանակներով և այլն կալվածատիրական հողերի

վրա տնտեսավարում և նաև այժմ, այն չափով կարլածատիրական հողատիրությունը գլխավոր պատճառն է հետամնացության ու անշարժության: Մեր կողմից քննած փոփոխությունը հողատիրության մեջ կրարձրացներ կիսրար ու վարձու հողերի բերքը (այժմ այդ բերքը—տես վերեի թվերը—50 և 45 փութե, բաժնեւ հողերի ցանքսերի 54 և կարլածատիրականի 66 փթի հանդեպ): Յեթե այս բերքը բարձրանար նույնիսկ բաժնեհողերի մինչև բերքի մակարդակը միայն, ապա նաև այդ ժամանակ հառաջելու քայլը վիթխարի կլիներ: Բայց ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր բաժնեհողերի բերքը ևս կարլելանար ինչպես ճորտատիրական լատիֆունդիաների հարստահարությունից գյուղացուն աղատելու հետեւնքով, նույնութեա և շնորհիվ այն բանի, վոր այդ ժամանակ բաժնեհողերն ել պետության մնացած բոլոր հողերի նման ազատ ու միատեսակ մատչելի կլինեյին (վոչ բոլոր քաղաքացիներին, այլ յերկրագործական կապիտալ ունեցող քաղաքացիներին, այսինքն՝ Փերմեներին):

Այս յեզրակացությունն ամենեին չի բղխում բերքատվության մասին մեր վերցրած տվյալներից: Բնդհակառակը, այս տվյալները վերցված են միայն ակնառու կերպով պատկերավորելու համար այն յեղրակացությունը, վոր ոռուսական կարլածատիրական ու գյուղացիական տնտեսության եվոլուցիայի տվյալների ամբողջ կապակցությունից և ըլլիում: Այս յեզրակացությունը հերքելու համար պետք է հերքել այն իրողությունը, վոր ոռուսական յերկրագործության պատմությունը XIX դարի յերկրորդ կեսում ճորտատիրական արտադրական հարաբերությունները բուրժուականությունը պահպանում է:

Յեթե հետեւնք գյուղացիության տնտեսությունների թվական տվյալներին ներկայումս, ապա կարող ե այն տպալորությունն ստացվել, վոր մեր կողմից քննարկվող աղբարային կերպարանափոխությունը չափազանց կկոտորակեր յերկրագործությունը: Ներեցե՛ք, տասներեք միլիոն տնտեսություն 280 միլիոն դեսյատին հողով, մի՞թե այս ահուելի փոշիացում չե: Սրան մենք կպատասխանենք. չե՞ վոր այսպիսի անսահման փոշիացում մենք այժմ տեսնում ենք, վորովհետեւ այժմ տասներեք միլիոն տնտեսությունները 280 միլ. դեսյատինից ավելի քիչ տարածության վրա յեն տնտեսավարում: Հետեւարար մեզ հետաքրքրող փոփոխությունը վոչ մի դեպում վատթարացում չեր մացնի քննարկող հարաբերության մեջ: Այս բավական չե: Մենք հարցն առաջ ենք տա-

նում. հիմք կա՞ մտածելու, վոր այս փոփոխության ժամանակ տնտեսությունների ընդհանուր թիվը նախկինը կմնա: Սովորաբար հենց այսպես են նայում, յենթարկվելով նարողնիկական թերիանների և հենց գյուղացիների կարծիքների աղղեցությանը, վորոնք ամբողջ մտածողությամբ գեպի հողն են ձգտում և վորոնք անդամ արդյունաբերական բանվորներին մանր յերկրադրծներ դարձնելու մասին յերազելու ընդունակ են: Վորոշ թվով ուսական արդյունաբերական բանվորներ XIX դարի վերջին իրենք ել կանգնած են, անշուշտ, գյուղացիական այս տեսակետի վրա: Բայց հարցն այն ե, թե նիշտ ե արդյոք այս տեսակետը, համապատասխանությունը ե այն որյեկտիվ տնտեսական պայմաններին ու տնտեսական զարգացման ընթացքին: Բավական ե պարզորեն զնել այս հարցը՝ տեսնելու համար, վոր գյուղացիական հայացքը վորոշվում ե մեռնող ու անվերագաննալի անցյալով և վոչ թե աճող ապագայով: Գյուղացիական հայացքը նիշտ չե: Եա յերեկովա իդեոլոգիան ե ներկայացնում, իսկ տնտեսական զարգացումն իրավես վոչ թե դեպի յերկրագործական բնակչության ավելանալը, այլ դեպի նրա քչանալն ե տանում:

Հողատիրության հարաբերություններում մեր կողմից քըննարկող փոփոխությունը չի վոչնչացնում և չի կարող վոչնչացնել յերկրագործական բնակչության մասը քչանալու այս պրոցեսը. մի պրոցես, վորն ընդհանուր ե զարգացող կապիտալիզմի բոլոր յերկրների համար: Ինձ հհարցնեն, թե այս փոփոխությունն ինչպես կարող ե ազդել յերկրագործական բնակչության քչանալու վրա, քանի վոր հողը հատչելի և ազատ կլինի ամենքի համար: Սրան յես կպատասխանեմ գյուղացիական պատգամավոր (Պոլտավայի նահանգի) ալ. Զիժեվսկու՝ Դումայում. արտասահմած մեկ ճատից քաղվածք բերելով: 1906 թ. հունիսի 6-ի (մայիսի 24-ի) նիստում նա ասել ե՝ «Մեզ ընտրող, մեզ այստեղ ուղարկող գյուղացիներն այսպիսի, որինակ, հաշիվներ ելին անում. Յեթե մենք մի քիչ ավելի հարուստ լինելինք, և յեթե մեր ամեն մեկ ընտանիքը կարողանար 5—6 ոուրլի ծափել շաքար գնելու համար, ճակնդեղ մշակելու տվյալներ ունեցող յուրաքանչյուր զավառում չափարի միքանի գործարան կբացվեր, ի լրացումն այժմ գոյություն ունեցողների». միանդամայն բնական ե, վոր յեթե այս գործարաններն առաջանային, արտադրության համար ինչքա՞ն անհաջիվ ձեռքեր կպահանջմելին ինտենսիֆիկացման ժամանակ: Կավելանար չափարի գործարանների արտադրություն-

նը և այլն» (Սղագրական հաշվետվություններ, էջ 622):
 Տեղական զործչի չափաղանց բնորոշ խոստվանանք և այս:
 Յեթև հարցնենք նրա կարծիքն աղբարային կերպարանափոխու-
 թյան նշանակության մասին ընդհանրապես, նա անշուշտ նարող-
 նիկական հայացքներ կարտահայտի: Բայց քանի վոր հարցը
 բարձրացալ վո՞չ թե «կարծիքների, այլ կերպարանափոխության
 կոնկրետ հետևանքների մասին, կապիտալիստական նշմարտու-
 թյունը մեկ անդամից գերազանցեց նարողիկական ուսուպիային: Վորովհետեւ այն, ինչ վոր գյուղացիներն ասել են իրենց պատ-
 դամավոր պ. Զիժեվսկուն, հենց կապիտալիստական ճշմարտու-
 թյուն և, կապիտալիստական իրականության ճշմարտություն: Մանր յերկրագործների մասսաների կրության քիչ թե շատ լուրջ
 բարելավման ժամանակ շաքարի գործարանների թվի ու արտա-
 դրողականության աճումն իսկապես պիթիսարի կլիններ. և ինքն-
 ըստինքան հասկանալի յե, վոր վիթիսարի զարկ կտային և «ան-
 հաշիվ ձեռքեր» կպահանջնեին վոչ միայն ճակնդեղ-շաքարի ար-
 տադրությունը, այլև մշակող արդյունաբերության բոլոր ճյու-
 ղերը՝ տեքստիլ, յերկաթաղործական, մեքենաշինարարական, ընդ-
 հանրապես շինարարական և այլն և այլն: Յեկ այս տնտեսական
 անհրաժեշտությունն ավելի ուժեղ կլիններ, քան հավասարարու-
 թյան մասին յեղած սքանչելի բոլոր հույսերն ու յերազանքները:
 Տերեք ու մի քառորդ միլիոն ձիազուրկ ծիւեր «տնտեսատեր» չեն
 դառնա վոչ մի աղբարային կերպարանափոխությունից, վոչ մի
 փոփոխությունից յերկրագործության մեջ, վոչ մի «հողերի
 հատկացումից»: Ծիւերի այս միլիոնները (նույնպես և մեկ ձի
 ունեցողների վոչ փոքր մասը), ինչպես մենք տեսանք, տառա-
 պում են իրենց փոքրիկ հողակտորների վրա, վարձակալության
 են տակի իրենց հողարաժինները: Արդյունաբերության ամերիկյան
 գարգացումն անխուսափելիորեն դուրս կկորցեր յերկրագործու-
 թյունից կապիտալիստական հասարակության մեջ այդպիսի ան-
 հուսալի տնտեսատերերի մեծ մասին և վոչ մի «իրավունք հողի
 վրա» ուժ չի ունենա իսանդարելու սրան: Տասներեք միլիոն մանր
 տնտեսատերեր ամենից խլճուկ, աղքատիկ ու հնացած ինվենտա-
 րով փորփում են իրենց նաղելային և կարվածատիրական հողե-
 րը—սա այսորվա իրականությունն և, սա արիեստական գերբնակ-
 չություն և յերկրագործության մեջ. արհեստական այն իմաս-
 տով, վոր ժառանգականորեն պահպանվում են ճորտատիրական
 այն հարաբերությունները, վորոնք վաղուց գերազել են և վո-

րոնք վոչ մի որ չեյին կարող դիմանալ, յեթե ըլինեյին և կղեկու-
 ցիաները, զնդակահարությունները, պատժիչ արշավախմբերը և
 այլն: Մասսաների գրության ամեն մի լուրջ բարելավում, յու-
 րաքանչյուր լուրջ հարված ճորտատիրական մնացորդներին, ան-
 խուսափելիորեն կխախտելին զյուղի պերբակությունը, վեթ-
 խարի չափերով կուժեղացնելին (դանդաղ կատարվում և նաև
 այժմ) բնակչությունը յերկրագործությունից դեպի արդյունա-
 բերություն քաշելու պրոցեսը, անտեսությունների թիվը 13 մի-
 լիոնից կիջեցնելին շատ ավելի ցածր թիվի, մուսասատանն առաջ
 կտանելին ամերիկյան ձեռով և վոչ չինական ձեռով, ինչպես այժմ:

XIX դարի վերջին աղբարային հարցը մուսասատանում հասա-
 րակական դասակարգերի լուծմանը խնդիր և առաջարկել՝ վերջ
 տալ ճորտատիրական հնությանը և մաքրել հողատիրությունը,
 մաքրել ամբողջ ուղին կապիտալիզմի համար, արտադրողական
 ուժերի աճման համար, դասակարգերի աղատ ու բացահայտ
 պայքարի համար: Յեկ դասակարգերի հենց այս պայքարը կվո-
 րուի, թե ինչ ձեռով պիտի լուծվի այս խնդիրը:

1 հունիսի նոր տոմարով 1908 թ.:

Խմբագիր Ա. Պազարյան
 Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
 Սրբագրիչ Ա. Մանուկյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր Վ. 1152, հրատ. № 802

պատկեր № 107, տիրած 5000

թղթի չափում $60 \times 93 \frac{1}{16}$ (38.400 տպ. սիլ 1

տպ. մամուլում) $5\frac{3}{4}$ տպ. մամուլ

Հանձնվել և արտադրության 19/III 1940 թ.

Ստորագրվել և տպագրելու 17/IV 1940 թ.

Գինը 1 ո. կազմը 1 ո.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
 տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

«Ազգային գրադարան



NL0179760

ԳԻՒՐ 2 Ա.

• В. И. ЛЕНИН
АГРАРНЫЙ ВОПРОС В РОССИИ
К КОНЦУ XIX ВЕКА

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940